

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների  
հասարակական կազմակերպություն

## ՋԵԿՈՒ33

ՀՀ վարչական արդարադատության որոշ  
հիմնախնդիրների վերաբերյալ  
(Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի  
ուսումնասիրության արդյունքներ)

Ծանոթագրություն: Սույն զեկույցը հիմնված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վրա մինչև 2010 թվականի սեպտեմբերի 1-ը գործող խմբագրությամբ: Հետևությունները հիմնված են դիտարկման ժամանակահատվածում արձանագրված խնդիրների վրա:

Երևան  
«Ասողիկ» հրատարակչություն  
2011

ՀՏԴ 342 (479.25)

ԳՄԴ 67.99 (2Հ) 1

Զ 522

Հեղինակային խումբ՝ Սիրանուշ Սահակյան, Արման Զրվանոյան, Մարիամ Ղուլյան

SUMMARY OF THE REPORT

*(RESULTS OF THE ADMINISTRATIVE COURT MONITORING)*

Վարչական դատարանի մոնիտորինգի ծրագիրն իրականացվել է "Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների" հասարակական կազմակերպության կողմից: Ծրագիրը և գրքի հրատարակումը ֆինանսավորվել է Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստանի կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով:

Զ 522 ԶԵԿՈՒՅՑ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներ).-Եր.: Ասողիկ, 2011.144 էջ:

ՀՏԴ 342 (479.25)

ISBN 978-9939-50-159-8

ԳՄԴ 67.99 (2Հ) 1

© "Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների" հասարակական կազմակերպություն, 2011 թ.

© Հեղինակային խումբ, 2011 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումների ցանկ.....	6
2. Ներածություն.....	7
3. Մոնիտորինգի ծրագրի մեթոդաբանությունը և ընթացքը.....	8
4. ԳԼՈՒԽ 1. Վարչական արդարադատության մատչելիությունը Հայաստանում.....	14
1. «Վարչական մարմին» եզրույթի իրավական սահմանումը Վարչական դատավարության օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածներում:.....	14
2. Վարչական դատարանի իրավագործությունը հանրային լիազորություններ իրականացնող մասնավոր անձանց «վարչարարության» նկատմամբ.....	17
3. ՎԴՕ-ի 8-րդ հոդվածով սահմանված առարկայական ընդդատությունը.....	21
ա. հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի բնորոշումը և ՎԴ-ին ընդդատյա գործերի շրջանակը.....	21
բ. դիտարկման արդյունքում արձանագրված պրակտիկայում առկա խնդիրները՝ կապված հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի բնորոշման հետ:.....	23
5. ԳԼՈՒԽ 2. Հայցադիմումների տեսակներն ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, օրենսդրական բացերը և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները՝ արդարադատության մատչելիության տեսանկյունից.....	32
6. ԳԼՈՒԽ 3. Ապացույցները վարչական դատավարությունում.....	38
ա. կողմի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ. օրենսդրական բացը և գործող պրակտիկան.....	38
բ. ապացուցման բեռի բաշխումը, առանձնահատկությունները վարչական դատավարությունում և գործող պրակտիկան.....	40
գ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պրակտիկ կիրառությունը և վարչական ակտի իրավաչափությանը վստահելու իրավունքի պաշտպանությունը ՀՀ վարչական արդարադատությունում:.....	47
7. ԳԼՈՒԽ 4. Անվճար իրավաբանական օգնությունը վարչական գործերով.....	57
8. ԳԼՈՒԽ 5. Վարչական գործի բանավոր և հրապարակային քննության իրավունքը ՀՀ վարչական դատավարությունում.....	59
ա. Հրապարակային քննության իրավունքը ՎԴ-ում.....	59

բ. Գրավոր դատաքննության ընթացակարգերը ՎԴ-ում.....	59
գ. Եվրոպական Կոնվենցիայի պահանջները և ՄԻԵԴ դիրքորոշումը.....	60
դ. Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործեր.....	61
ե. ՎԴ-ի որոշման պատճառաբանվածությունը և դրա բողոքարկումը.....	62
զ. Վարչական գործերի քննության հրապարակայնության այլ խնդիրները.....	63
<b>9. ԳԼՈՒԽ 6. Վարչական դատարանի դատական ակտերի հարկադիր կատարումը.....</b>	<b>68</b>
ա. Վարչական դատարանի վճիռների կատարման հետ կապված հիմնախնդիրներ`.....	68
1. գումարների բռնագանձման վճիռների կապակցությամբ.....	68
2. գործողություն կատարելուն և վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու վճիռների կապակցությամբ.....	70
բ. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության բարեփոխման անհրաժեշտությունը.....	71
1. Ինստիտուցիոնալ հիմնախնդիրներ.....	75
2. Հարկադիր կատարման անկախ մարմին.....	76
3. Վարչական դատարանի դատական ակտերի հարկադիր կատարումը Վարչական դատարանի կողմից.....	76
4. Հարկադիր կատարողի մասնագիտության ազատականացումը.....	77
<b>10. ԳԼՈՒԽ 7. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը և պրակտիկայում առկա խնդիրները.....</b>	<b>79</b>
<b>11. ԳԼՈՒԽ 8. Ինքնաբացարկի մասին որոշումների բողոքարկման պրակտիկան.....</b>	<b>85</b>
<b>12. ԳԼՈՒԽ 9. Հայցի ապահովման դեպքում հնարավոր վնասների ապահովման հարցը և ձևավորված պրակտիկան.....</b>	<b>87</b>
<b>13. ԳԼՈՒԽ 10. ՀՀ ՎԴՕ-ի 83-րդ հոդվածի կիրառման պրակտիկան (հայցադիմումին պատասխան ներկայացնելը).....</b>	<b>89</b>
<b>14. ԳԼՈՒԽ 11. Վարչական դատավարությունում գործի վարույթի կասեցումը.....</b>	<b>91</b>
<b>15. ԳԼՈՒԽ 12. Իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը ՀՀ վարչական արդարադատության բնագավառում.....</b>	<b>93</b>

16. ԳԼՈՒԽ 13. Վարչական դատարանի կողմից գործերի քննության արդյունավետությունը.....	99
17. ԳԼՈՒԽ 14. Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթը.....	105
18. ԳԼՈՒԽ 15. Պատասխանատվությունը վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար.....	107
19. ԳԼՈՒԽ 16. Վարույթը վճռաբեկ դատարանում.....	110
ա. Վճռաբեկ դատարանը որպես վարչական արդարադատություն իրականացնող երկրորդ ատյան.....	110
բ. Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու պրակտիկայի ուսումնասիրություն.....	110
20. ԿՈՆՍՈՒԻԴԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	117
21. SUMMARY OF THE REPORT.....	123

## Հապավումների ցանկ

ՎԴ – Վարչական դատարան  
ՍԴ – Սահմանադրական դատարան  
ՎԴՕ – Վարչական դատավարության օրենսգիրք  
ՎՀՎՎ – «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»  
օրենք  
ՍԴՈ – Սահմանադրական դատարանի որոշում  
ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան  
ՄԻԵԿ – Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա  
ՄԻՀ – Միջազգային իրավունքի հանձնաժողով  
ՔՔԻՄԴ – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային  
դաշնագիր  
ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն  
ԳԱ – Գլխավոր ասամբլեա  
ՀՀ ԿԱՊԵԿ- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտե  
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ – Հայաստանի Հանրապետության կառավարությանն  
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե  
ԱՆ ԴԱՀԿ – Արդարադատության նախարարության դատական ակտերի  
հարկադիր կատարման ծառայություն

## Ներածություն

2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխություններով Հայաստանում սկիզբ դրվեց դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլին, որի հիմնաքարերից էր ՀՀ ՎԴ-ի ստեղծումը և ՎԴՕ-ի մշակումը: Վարչական դատարանի ստեղծումը նախ և առաջ միտված էր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց որոշումները, գործողություններն ու անգործությունը բողոքարկելու իրավունքի պրակտիկ իրագործմանը և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը:

Ղատական մարմինների կողմից գործադիր իշխանության մարմինների նկատմամբ վերահսկողության իրականացումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասից, որի նպատակն է ապահովել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը հատկապես ընդդեմ հանրային իշխանության մարմիններին:

2009 թվականի հուլիս ամսից Բաց Հասարակության Ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի ֆինանսավորմամբ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից սկսվեց նորաստեղծ ՎԴ-ի մոնիտորինգի իրականացումը:

Ծրագրի իրականացումը հետապնդել է հետևյալ նպատակները.

ա) դիտարկված գործերի՝ արդար դատաքննության ներպետական և միջազգային չափանիշներին համապատասխանության վերաբերյալ համակարգված կերպով տեղեկություններ հավաքելը, բ) դիտարկման արդյունքների հիման վրա նորաստեղծ ՎԴ-ի իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը, գ) վարչական օրենսդրության ուսումնասիրությունը և վարչական արդարադատության համակարգում առկա հնարավոր օրենսդրական բացթողումների հայտնաբերումը, և դ) վարչական արդարադատության իրականացման բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Թեև մոնիտորինգի ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ և բացթողումներ, այնուամենայնիվ պետք է ընդգծել, որ ՎԴ-ի կողմից գործի քննության ընթացքի դիտարկումը և ՎԴ-ի դատական ակտերի հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը ցույց են տալիս, որ այս դատարանում ապահովվում է արդարադատության իրականացման նոր որակ: Վարչական դատարանի դատավորների բարձր պատրաստվածությունը և խորը մասնագիտացվածությունը ապահովում են գործերի առավել արդյունավետ և որակյալ քննություն՝ էականորեն նպաստելով ՀՀ-ում արդարադատության համակարգի կայացմանը և դատարանների նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը: Այս տեսանկյունից, գերմանական GIZ կազմակերպության կողմից իրականացված ծրագիրը կարելի է համարել Հայաստանի Հանրապետությունում իրականացված դրամաշնորհային ծրագրերից ամենահաջողվածը:

## Մոնիտորինգի ծրագրի մեթոդաբանությունը և ընթացքը

Ուսումնասիրության կարևորագույն տարրը դիտարկման իրականացումն էր, քանի որ այն դատական համակարգի վրա ներազդելու այնպիսի գործիք է, որը թույլ է տալիս արդյունավետորեն գնահատելու դատական պրակտիկայի ներկա վիճակի համապատասխանությունը միջազգային և ներպետական արդար դատաքննության չափանիշներին: Այն նաև յուրատեսակ հստակեցնող մեխանիզմ է, որը թույլ է տալիս գնահատական տալ արդարադատության համակարգի գործունեությանը՝ հստակեցնելով բարեփոխումների կարիք ունեցող գործունեության ոլորտները, ուրվագծելով բարեփոխումների հիմնական ուղղությունները: Մյուս կողմից, դատական մոնիթորինգն ավելի է մեծացնում դատական գործունեության թափանցիկությունը, որն էլ հանգեցնում է հրապարակային դատավարության իրավունքի իրականացմանը:

Մոնիտորինգի ծրագիրն իրականացվել է 18 ամիս տևողությամբ: Այն բաղկացել է երեք հիմնական փուլերից՝

1. նախապատրաստական փուլ, որի ընթացքում ուսումնասիրվել է օրենսդրությունը, մշակվել են հարցաշարերը, կատարվել է դիտորդների ընտրությունն ու ուսուցումը, ինչպես նաև իրականացվել են այլ կազմակերպչական նախապատրաստական աշխատանքներ:

2. դիտարկման փուլ, որի ընթացքում դիտորդներն անմիջականորեն իրականացրել են դիտարկումները:

3. մոնիտորինգի արդյունքների ամփոփման և հրապարակման փուլ, որի ընթացքում իրականացվել է հավաքված տվյալների ուսումնասիրություն, վերլուծում, ամփոփում և հաշվետվության պատրաստում:

Ծրագրի ղեկավարը ստեղծել է անհրաժեշտ ենթակառուցվածքները և ներգրավել Ծրագրի հիմնական անձնակազմի անդամներին: Դիտարկումներն իրականացվել են Ծրագրի դիտորդների կողմից՝ Ծրագրի համակարգողի վերահսկողությամբ, որի հիմնական պարտականությունները ներառել են դիտորդների ամենօրյա աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացումը և տեղեկությունների հավաքագրումը: Բոլոր դիտորդները վերապատրաստում են անցել Ծրագրի շրջանակների և մեթոդաբանության, ինչպես նաև Հայաստանի վարչական օրենսդրության վերաբերյալ: Դիտարկումների իրականացման ողջ ժամանակահատվածում Ծրագրում աշխատել են 17 դիտորդներ: Դիտորդները ներգրավվել են բաց մրցույթի հիման վրա: Վերջիններիս ներկայացվել են մի շարք պահանջներ, այդ թվում՝ բարձրագույն կրթության առկայություն (իրավագիտություն, ինչպես նաև հարակից մասնագիտություններ), ինստիտուցիոնալ և անձնական անկախություն, օբյեկտիվություն, կարգապահություն: Ընտրված դիտորդները ստանձնել են դիտորդի վարքագծի, էթիկայի կանոններին ենթարկվելու պարտականություն: Ընտրված դիտորդների համար կազմակերպվել են վերապատրաստման ծրագրեր՝ վարչական օրենսդրության, միջազգային ստանդարտների, մոնիթորինգի մեթոդաբանության, հարցաթերթիկների լրացման, վարքագծի կանոնների վերաբերյալ:

Ջեկույցը պատրաստվել է իրավական փորձագետների կողմից, ովքեր ունեն մասնագիտացում և փորձառություն վարչական իրավունքի բնագավառում: Ջեկույցի պատրաստման համար առաջնային աղբյուր են հանդի-



սացել դատական գործերի վերաբերյալ դիտորդների կողմից ներկայացված զեկույցները: Ձեկույցում վկայակոչված բոլոր դատական գործերն իրական են, սակայն ապահովվել է գործն անհատականացնող տվյալների անանունությունը: Ծրագրի համակարգողի կողմից յուրաքանչյուր օր կազմվել է ՎԴ-ի<sup>1</sup> կողմից քննվող գործերի ցուցակը, որից ընտրվել են դիտարկման ենթակա գործեր՝ նախապես մշակված չափանիշների հիման վրա: Դատական նիստերի վերաբերյալ իրազեկվել են դիտորդները: Յուրաքանչյուր դատական գործի համար ընտրվել է մեկական դիտորդ: Գործերը դիտարկվել են մինչև վճռի հրապարակումը: Ուսումնասիրության ընթացքում տեղեկատվություն է ձեռք բերվել նաև երկրորդական աղբյուրներից, ինչպիսիք են, օրինակ, հարցազրույցները, գործի մասնակիցներից ստացված փաստաթղթերը, դատարանից վերցված վճիռների պատճենները և այլն: Հարցաթերթիկներ են մշակվել դատավորների, պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց ներկայացուցիչների համար: Անցկացված 30 հարցումների արդյունքում ձեռք բերված տվյալները ևս օգտագործվել են զեկույցի պատրաստման նպատակով: Այս առումով, դիտարկումները ներառել են բավականին ընդգրկուն ոլորտներ՝ չսահմանափակվելով միայն դատական քննության փուլով: Արդյունքները տվյալներ են պարունակում նաև դատարանի մատչելիության իրավունքի ապահովման, դատական ակտերի կատարման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև վճռաբեկ դատարանի կողմից վարչական գործերի քննության վերաբերյալ:

**« ԿԱԱԳԿՊԿ մասնակցությամբ քննվել է 45 գործ: Բոլոր գործերով ԿԱԱԳԿՊԿ հանդես է եկել որպես պատասխանող: 26 գործերով կայացվել են վճիռներ:**

Ընդհանուր տեղեկություններ դիտարկված գործերի վերաբերյալ

2009 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2010 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում գտնվող ՎԴ-ում դիտարկվել են 353 դատական գործեր, որոնց քննությունն իրականացվել է 807 դատական նիստերի ընթացքում: Դիտարկված գործերից 2-ը քննվել են արագացված կարգով: 86 գործով ներգրավված է եղել երրորդ անձ: 20 գործով հայցվորը լրիվ կամ մասնակի հրաժարվել է իր պահանջներից, իսկ 10 գործով պատասխանողը լրիվ կամ մասնակի ընդունել է պահանջները: 10 գործով ներգրավված է եղել վկա: Հայցադիմումի պատասխան ներկայացվել է 119 գործով:

35 գործերից 213-ով կայացվել է վճիռ. 71 գործերով դատարանը բավարարել է հայցապահանջները, 64 գործով՝ մերժել, 24 գործերով պահանջները բավարարվել են մասնակի, 30 գործերով կարճվել է վա-


<sup>1</sup> Դատավորների հետ հարցումներ իրականացնելու նպատակով պաշտոնական գրություն է ուղարկվել Վարչական դատարանի նախագահին, որին ի պատասխան՝ կազմակերպությունը բանավոր կերպով տեղեկացվել է, որ .դատավորների հետ այդպիսի հանդիպումներն անցկացնելն արգելված է.: Գրավոր տեսքով պատասխան ներկայացնելու խնդրանքը մինչ օրս մնացել է անպատասխան: Հարցումներին մասնակցելու խնդրանքով կազմակերպությունն անմիջականորեն նաև դիմել է դատավորներին: Հարցման ենթարկվելու համաձայնություն է հայտնել երեք դատավոր, մնացյալները տարբեր պատճառներով մերժել են այն:

րոյթը: 24 գործերով դատարանի վճիռը չի հրապարակվել դատական նիստում:

Դիտարկված գործերից 160-ի դեպքում ներկայացվել է վիճարկման հայց, 102-ի դեպքում՝ պարտավորեցման, 106-ի դեպքում՝ գործողության կատարման, իսկ 33-ի դեպքում՝ ճանաչման:<sup>2</sup>

Դիտարկված գործերի ճնշող մեծամասնության դեպքում (37.7 տոկոս) որպես մասնակցող պետական մարմին հանդես է եկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, այնուհետև Քաղաքապետարանը՝ 22.7 տոկոս, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ն՝ 12.7 տոկոս, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը՝ 4.6 տոկոս:

**Աղյուսակ 1:** Դիտարկված գործերի վիճակագրությունն ըստ մասնակցող վարչական մարմինների՝ արտահայտված տոկոսներով



Ստորև ներկայացվում են ընդհանուր բնույթի վիճակագրական տվյալներ՝ ըստ դատական պրոցեսում ներգրավված վարչական մարմինների սուբյեկտային կազմի:


Մասնավորապես, ՀՀ ԿԱՊԵԿ-ի մասնակցությամբ քննվել է 133 գործ, որից 61 գործով ՊԵԿ հանդես է եկել որպես պատասխանող, իսկ 72 գործով՝ որպես հայցվոր: Քննված գործերից 84-ով կայացվել է վճիռ:

<sup>2</sup> Քանի որ որոշ դիտարկված գործերով ներկայացվել են մի քանի հայցատեսակներ, տվյալների հանրագումարը մեծ է դիտարկման ենթակա գործերի ընդհանուր թվից:




Երևանի քաղաքապետարանի մասնակցությամբ քննվել է 80 գործ, որից 70 գործով քաղաքապետարանը հանդես է եկել որպես պատասխանող, իսկ 10 գործով՝ որպես հայցվոր: 40 գործերով կայացվել են վճիռներ:


**Աղյուսակ 1.2.1** Երևանի քաղաքապետարանի դեմ ներկայացված հայցերով վճիռների ելքը



**Աղյուսակ 1.2.2** Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված հայցերով վճիռների ելքը



**Աղյուսակ 1.3** ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի դեմ ներկայացված հայցերով վճիռների ելքը




ՀՀ կառավարության մասնակցությամբ քննվել է 12 գործ: Բոլոր գործով Կառավարությունը հանդես է եկել որպես պատասխանող: 7 գործերով կայացվել են վճիռներ, որոնցից 6-ով դատարանը մերժել է հայցերը, իսկ 1 գործով՝ կարձել վարույթը:

Ստավոր սեփականության գործակալության մասնակցությամբ քննվել է 7 գործ: Բոլոր գործով գործակալությունը հանդես է եկել որպես պատասխանող: 2 գործերով կայացվել են վճիռներ, որոնցով դատարանը մերժել է հայցապահանջները:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության մասնակցությամբ քննվել է 16 գործ: 15 գործով այն հանդես է եկել որպես պատասխանող, իսկ 1 գործով՝ որպես հայցվոր: 10 գործերով կայացվել են վճիռներ:

**Աղյուսակ 1.4** ՀՀ ԱՆ ԴԱՀԿ-ի դեմ ներկայացված հայցերով վճիռների ելքը



## **ԳԼՈՒԽ 1. Վարչական արդարադատության մատչելիությունը Հայաստանում**

Ավանդաբար, վարչական մարմինների հանրային գործունեության իրավաչափության դատական ստուգումը մատչելի է եղել այն դեպքերում, երբ վարչական մարմնի հանրային իրավական գործունեությամբ խախտվել է մասնավոր անձի իրավունքը:

Սակայն, ելնելով տնտեսական զարգացման նոր ուղիների որոնման, հանրային կառավարման կազմակերպման և այստեղից բխող մի շարք հասարակական խնդիրների կարգավորման հրամայականներից՝ վարչական արդարադատության ավանդական մոտեցումները բազմաթիվ Եվրոպական երկրներում ենթարկվել են մի շարք լուրջ փոփոխությունների: Մասնավորապես, առավել արդյունավետ կառավարման նպատակով մի շարք պետական գործառույթների պատվիրակումը մասնավոր անձանց՝ կարող է լուրջ ազդեցություն ունենալ վարչական արդարադատության մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության հիմնարար իրավունքների վրա, ինչը պահանջում է վերանայել վարչական իրավունքի մի շարք ինստիտուտների արդիականությունը Հայաստանում և դրանց համապատասխանությունը միջազգային իրավունքի ներկայիս զարգացումներին:

Վերլուծության այս մասի հիմնական նպատակն է ուսումնասիրել և պարզել, թե արդյոք Հայաստանում առկա են վարչական արդարադատության մատչելիության լուրջ խոչընդոտներ: Այս նպատակի իրագործման համար ուսումնասիրվում են երկու խնդիրներ: Առաջին, «վարչական մարմին» եզրույթի իրավական սահմանման ազդեցությունը վարչական արդարադատության մատչելիության վրա: Երկրորդ, ՎԴՕ-ի 8-րդ հոդվածով սահմանված ընդդատության նորմերի ազդեցությունը վարչական արդարադատության մատչելիության վրա՝ հաշվի առնելով «հանրային իրավահարաբերություններից ծագող գործերը» մասնավոր իրավահարաբերություններից ծագող գործերից տարբերակելու իրավական գործիքների առկայությունը ՀՀ իրավունքում:

### **1.«Վարչական մարմին» եզրույթի իրավական սահմանումը Վարչական դատավարության օրենսգրքի և Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին օրենքի 3-րդ հոդվածներում՝ դրույթներում**

Հայկական վարչական իրավունքում հանրային իրավունքի սկզբունքներն ու ընթացակարգերը պարտադիր են միայն պետական մարմինների համար: Այսպես, ՎՀՎՎ մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններն են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Եթե թվարկված մարմիններից բացի վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ: ՎՀՎՎ մասին օրենքի 2-րդ գլխում հստակ նշված է, որ «վարչական մարմինները» պարտավոր են պահպանել վարչարարության հիմնարար սկզբունքները, ինչպիսիք են օրինակ՝ վարչարարության օրինա-

կանությունը, ձևական պահանջները չարաշահելու արգելքը, հայեցողական լիազորությունները սահմանափակելը, կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը: Մասնավոր մարմինները պարտավոր չեն և իրավունք չունեն կիրառել վարչարարության սկզբունքները կամ իրականացնել վարչական վարույթ:

Մյուս կողմից, ՀՀ ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու ՎԴ, եթե համարում է, որ իր իրավունքները խախտվել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ: Այստեղից հետևում է, որ ՎԴ-ն իրավասու չէ քննել ֆիզիկական անձի վարչական հայցն ընդդեմ որևէ հանրային նշանակության մասնավոր մարմնի՝ վիճարկելով վերջինիս գործողությունների համապատասխանությունը ՎՀՎ մասին օրենքի պահանջներին:

Այս իրավական կարգավորումը լիարժեքորեն չի ապահովում վարչական արդարադատության մատչելիությունը: Այլ երկրների իրավական համակարգերում նկատվում են զգալի շեղումներ այս ավանդական ընկալումներից: Այդ համակարգերում մասնավորապես ամրագրված է, որ ցանկացած մարմին, ներառյալ՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք, պարտավոր են հետևել հանրային իրավունքի սկզբունքներին և ընթացակարգերին, երբ իրականացնում են հանրային գործառույթներ: Այդ համակարգերում մասնավոր անձանց հանրային իրավական բնույթի գործառույթների իրականացումից բխող գործունեությունը կարող է դառնալ ՎԴ-ի քննության առարկա՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցի հիման վրա:

Այսպես, «Վարչական վարույթի մասին» Գերմանիայի Դաշնային օրենքի 1(4)-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական վարույթի մասին օրենքի իմաստով «մարմին» նշանակում է ցանկացած մարմին, որն իրականացնում է հանրային կառավարման գործառույթներ»: Իսկ նույն օրենքի 54-րդ հոդվածի համաձայն՝ «Իրավական հարաբերությունները կարող են ստեղծվել, փոփոխվել կամ վերացվել պայմանագրի միջոցով (հանրային իրավական պայմանագիր), եթե դա չի հակասում օրենքի պահանջներին: Մասնավորապես, վարչական մարմինը կարող է վարչական ակտ ընդունելու փոխարեն հանրային իրավական պայմանագիր կնքել այն անձի հետ, ում նկատմամբ հակառակ դեպքում կարող էր ընդունել վարչական ակտ»:

Նմանապես, Շվեյցարիայի Համադաշնության Սահմանադրության 35(2)-րդ հոդվածի համաձայն՝ «Ցանկացած անձ, որն իրականացնում է պետական գործառույթներ, պարտավոր է հարգել հիմնարար իրավունքները և նպաստել դրանց իրականացմանը»: Մեծ Բրիտանիայի Մարդու իրավունքների ակտի 6(3)(բ)-րդ հոդվածի համաձայն՝ «հանրային մարմին է ցանկացած մարմին, որի գործառույթների մի մասը հանրային բնույթ են կրում... Կոնկրետ գործողության առումով, մարմինը չի համարվում հանրային, եթե նրա իրականացրած գործողությունը մասնավոր բնույթ ունի»:

ՎՀՎ մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «վարչական մարմինները» դրանք Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններն են: Սակայն, եթե այդ մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մար-

միններ, ապա Օրենքի իմաստով դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ: Իսկ ՎՂՕ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ՎՂՕ-ով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու ՎՂ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ կարող են խախտվել նրանց իրավունքները: Նշված երկու դրույթներից բխում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են հանրային իրավական գործունեություն, չեն կարող մեկ այլ մասնավոր անձի հայցի հիման վրա որպես պատասխանող կանչվել ՎՂ: Նման դեպքերում մասնավոր անձինք չեն կարող վարչական հայցով ՎՂ-ից պահանջել իրենց իրավունքների պաշտպանություն: ՎՂ-ը պարտավոր է մերժել հայցը՝ հիմնվելով ՎՂՕ-ի 3-րդ հոդվածի դրույթների վրա: Մասնավոր անձանց միջև իրավական հարաբերությունները համարվում են մասնավոր, պայմանագրային, հավասար կամ արտահայտության վրա հիմնված, ուստի այս հարաբերություններից բխող վեճերը Հայաստանում պետք է քննվեն և լուծվեն քաղաքացիական արդարադատություն իրականացնող դատարանների կողմից՝ ելնելով մասնավոր իրավունքի սկզբունքներից:

Նման մոտեցումը հղի է մի շարք խնդիրներով: Ներկայումս մի շարք պետական գործառույթներ իրականացվում են մասնավոր կազմակերպությունների կողմից, քանի որ պետությունը պատվիրակում է իր պետաիշխանական լիազորությունները, օրինակ՝ գազի, ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարումը, հանրային պաշտպանների կողմից մատուցվող ծառայությունների, ավտոմեքենաների տեխնիկական զննության լիազորություններ և այլն: Ստացվում է այնպես, որ այս մասնավոր կազմակերպությունները, իրականացնելով պետության կողմից պատվիրակված գործառույթներ և ազդեցություն ունենալով մասնավոր անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների վրա, չեն առաջնորդվում վարչական իրավունքի սկզբունքներով և ընթացակարգերով: Այդ կազմակերպությունների և մասնավոր անձանց հարաբերությունները դիտարկվում են որպես պայմանագրային, «հավասար» և «ազատ» կամքի վրա հիմնված մասնավոր իրավական հարաբերություններ: Ուստի, նման կազմակերպությունների գործողություններն անձանց նկատմամբ չեն կարող ՎՂ-ի քննության առարկա դառնալ միայն այն պատճառով, որ դրանք մասնավոր կազմակերպություններ են: Այստեղ նրանց գործառույթների «պետական» լինելու, պետությունից ստացված լինելու հանգամանքը հաշվի չի առնվել օրենսդրի կողմից: Ստացվում է այնպես, որ պետությունը, պատվիրակելով իր լիազորությունները մասնավոր անձանց, ազատում է իրեն այն հանրային իրավական պարտականություններից, որոնք կկրեր, եթե ինքն իրականացներ այդ գործառույթները:

Հայաստանում պետական գործառույթների մասնավորեցումը շարունակվելու միտում ունի: Սակայն տնտեսական և հանրային կառավարման այս քաղաքականությունը չպետք է բացասաբար ազդի անձանց հանրային իրավունքների պաշտպանվածության վրա՝ ստեղծելով խոչընդոտներ վարչական արդարադատության մատչելիության նկատմամբ: Այդ պատճառով, ինչպես բազմաթիվ երկրների իրավական համակարգերում (տես՝ հավելված թիվ 1) Հայաստանում անհրաժեշտ է ամրագրել դատական



վերահսկողության «գործառույթային» մոտեցումը՝ փոփոխելով «վարչական մարմին» և «պետական մարմին» եզրույթները:

## Առաջարկ

ՎՀՎԿ մասին օրենքի «վարչական մարմին» եզրույթի իրավական սահմանման մեջ ավելացնել հետևյալ արտահայտությունը. «ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է պետական գործառույթ»:

## **2. Վարչական դատարանի իրավագործությունը հանրային լիազորություններ իրականացնող մասնավոր անձանց «վարչարարության» նկատմամբ**

«Միջազգային հակաիրավական արարքի համար պետության պատասխանատվության մասին» ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 56/83 բանաձևի երկրորդ գլխի համաձայն՝ պետությանը վերագրելի են այն արարքները, որոնք՝ I) կատարվել են պետական մարմինների կողմից, II) կատարվել են այն մասնավոր անձանց կամ կազմակերպությունների կողմից, որոնք լիազորված են իրականացնելու պետական իշխանության տարրեր, III) կատարվել են այն մասնավոր անձի կամ անձանց խմբի կողմից, որոնք de facto գործում են պետության ցուցումներով, պետության ղեկավարությամբ կամ հսկողության ներքո, IV) կատարվել են ապստամբական կամ այլ շարժումների կողմից, որոնք հասել են իշխանության, V) ճանաչվել և հավանության են արժանացել պետության կողմից:

Փաստորեն, միջազգային իրավունքի համաձայն՝ պետությանը վերագրելի է այն անհատի կամ կազմակերպության գործողությունը, որը, թեև չի հանդիսանում պետական մարմին, սակայն օրենքներով լիազորված է իրականացնել պետական իշխանության տարրեր և կոնկրետ իրավիճակում հանդես է եկել իր հանրային կարգավիճակով:<sup>3</sup> Այս դրույթը նպատակ ունի ապահովելու պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը՝ հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում կիսապետական կառույցների ձևավորման և պետաիշխանական լիազորությունների պատվիրակման պրակտիկայի տարածմանը զուգնթաց: Ըստ Միջազգային իրավունքի հանձնաժողովի՝ պետությունը պետաիշխանական լիազորություններ իրականացնող մասնավոր մարմինների գործողությունների համար կրում է պատասխանատվություն այնպես, ինչպես պետական իշխանության մարմինների գործողությունների համար: Ուստի, պետությունը, պատվիրակելով իր լիազորությունների մի մասը մասնավոր անձանց, չի ազատվում այդ լիազորությունների իրականացման համար միջազգային պատասխանատվությունից:<sup>4</sup>

<sup>3</sup> Միջազգային իրավունքի հանձնաժողով, փաստաթուղթ A/CN.4/SER.A/2001/Add.1 (Part 2), ՄԱԿ հրատ., 2001թ., էջ 46

<sup>4</sup> Կաստելլո-Ռոբերտոսն ընդդեմ Միացյալ Թագավորության, 247-C (25.3.93)

Այստեղից հետևում է, որ այն դեպքերում, երբ որևէ մասնավոր մարմին, իրականացնելով պետական իշխանության տարրեր, խախտում է ՄԻԵԿ-ով նախատեսված որևէ իրավունք, ՀՀ իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անհատ կարող է դիմել ՄԻԵԿ: Դիմումի ընդունելիության հարցը որոշելիս ՄԻԵԿ-ը, ի թիվս այլոց, կենտրոնանալու է այն խնդրի վրա, թե արդյոք իրավունքի ենթադրյալ խախտման պատճառ հանդիսացող լիազորությունները ունեն պետական բնույթ, թե մասնավոր. այստեղ այդ լիազորություններն իրականացրած մարմնի մասնավոր կամ պետական լինելու հանգամանքները կարևոր չեն:

## Օրինակ`

Պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը սահմանված է Հայաստանի վավերացրած մի շարք միջազգային պայմանագրերում,<sup>5</sup> ինչպես նաև Սահմանադրությամբ:<sup>6</sup> Այս իրավունքը համարվում է արդար դատաբանության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ մասերից մեկը: Իրավունքից բխող պարտականությունները կրում է Հայաստանի Հանրապետությունը, որոնց կատարման համար այն ընդունել է «Փաստաբանության մասին» օրենք, որով ստեղծվել է ՀՀ փաստաբանների պալատը և Հանրային պաշտպանի գրասենյակը: Վերջինիս պետական միջոցներից տրամադրվում են գումարներ` օրենքով սահմանված դեպքերում անձանց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով: Պետք է նշել, որ իրավաբանական օգնության տրամադրումն անմիջականորեն իրականացնում է Հանրային պաշտպանի գրասենյակը, որը Փաստաբանների պալատի կառուցվածքային ստորաբաժանում է: Վերջինս Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների մաս չի կազմում: Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունը նախընտրել է օրենքով ստեղծել հատուկ մարմին, և իր միջազգային և Սահմանադրական որոշ պարտավորությունների իրականացումը պատվիրակել այդ մարմնին: Նման իրավիճակում կարող են մի շարք հարցեր առաջանալ.

- արդյո՞ք ՀՀ-ը կրում է միջազգային պատասխանատվություն` Փաստաբանների պալատի կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի խախտումների համար,
- ի՞նչ ընթացակարգով և ո՞ր դատարանում կարելի է իրականացնել նշված իրավունքի պաշտպանությունը ՀՀ-ում:

Այս հարցերը կարող են առաջանալ ցանկացած իրավունքի խախտման դեպքում, երբ իրավունքը խախտող գործողությունը կատարում է մասնավոր մարմին` որևէ պետական գործառնություն իրականացնելիս: Վարչական մարմինների կողմից անձի իրավունքների խախտումների դեպքում ՎԴ-ը` ՎԴՕ սահմանված կարգով, կարող է տրամադրել իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներ: Պայմանագրային իրավափարաբերությունների շրջանակներում իրավունքների պաշտպանության արդյունավետ

<sup>5</sup> ՄԻԵԿ, հոդված 6, ԶԶԻՄԴ, հոդված 14

<sup>6</sup> Հոդված 20

միջոցներ կարող են տրամադրել ընդհանուր իրավասության դատարանները: Սակայն, երբ հանրային սուբյեկտիվ իրավունքը խախտում է մասնավոր մարմին՝ պետական գործառույթ իրականացնելիս, իրավական պաշտպանության միջոցի հարցը մտահոգիչ է, իսկ նման միջոցի բացակայությունը կարող է առաջ բերել պետության միջազգային պատասխանատվությունը:

Վան դեռ Մուսելն ընդդեմ Բեզլիայի գործով, որտեղ իրավունքի վիճարկվող խախտումը կատարվել էր Բելգիայի փաստաբանական մարմնի կողմից, որը պետական մարմինների մաս չէր կազմում, ՄԻԵԴ-ը գտել է, որ ՄԻԵԿ-ի համաձայն՝ պետությունները պարտավոր են տրամադրել անվճար իրավաբանական օգնություն: Այս պարտավորության իրականացման նպատակով Բելգիայի իշխանություններն ընդունել են համապատասխան օրենսդրություն և ստեղծել փաստաբանական մարմին: Ուստի, օրենսդրությունը պարտավորեցնում է իշխանություններին պարտավորեցնել փաստաբանական մարմնին տրամադրել անվճար իրավաբանական օգնություն. նման իրավիճակում Բելգիան չի կարող ազատվել ՄԻԵԿ-ով նախատեսված այն պատասխանատվությունից, որն այն կունենար, եթե ինքն ուղղակիորեն տրամադրեր իրավաբանական օգնությունը:<sup>7</sup>

Այս սկզբունքից հետևում է, որ ցանկացած դեպքում, երբ ՀՀ իշխանություններն իրենց գործառույթներն իրականացնում են այլ՝ ոչ պետական մարմինների միջոցով, ապա ամբողջությամբ կրում են այդ լիազորությունների իրականացման հետևանքով տեղի ունեցած՝ մարդու իրավունքների խախտումների միջազգային պատասխանատվությունը: Մինչև ՎԴ-ի ստեղծումը, դատական պրակտիկան ցույց է տալիս, որ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության կանոններով ընդհանուր իրավասության դատարաններում ոչ մասնագետ դատավորների միջոցով հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ չէր: Քաղաքացիական իրավունքի նպատակը չէ պաշտպանել անձանց իրավունքները պետական մարմինների ոչ իրավաչափ գործողություններից. քաղաքացիական իրավունքը չունի նման նպատակներ իրականացնելու ընթացակարգերը և սկզբունքները: Հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը դա վարչական իրավունքի հիմնական նպատակն է, իսկ վարչական դատավարությունը այդ նպատակն իրականացնելու ընթացակարգն է, և այստեղ իրավունքը խախտող մարմնի կազմակերպաիրավական ձևը նշանակություն չունի: Հետևաբար, հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը ցանկացած դեպքում պետք է իրականացվի ՀՀ ՎԴՕ-ով սահմանված կարգով՝ ՎԴ-ում՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ կազմակերպաիրավական ձև ունի այն մարմինը, որի գործողությունները հանգեցրել են խախտմանը:

Ներկայումս նշված սկզբունքի իրականացումը Հայաստանում հնարավոր չէ, քանի որ ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց իրավունքների պաշտպանության հայցով ՎԴ կարող են դիմել միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց դեմ:

<sup>7</sup> ՄԻԵԴ, 1983թ. նոյեմբերի 23-ի վճիռը, պարբ. 29.

## Առաջարկ

ՎԴՕ-ի 3-րդ հոդվածում կատարել լրացում, որն անձանց թույլ կտա հանրային գործառույթներ իրականացնող ոչ պետական մարմինների կողմից իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմել ՎԴ:

Այնուամենայնիվ, միայն այս օրենսդրական փոփոխությունը բավարար չէ: Անհրաժեշտ է, որպեսզի պետությունն իր գործառույթները մասնավոր մարմիններին պատվիրակելիս հստակ սահմանի, որ այդ մարմինները պատվիրակված (մասնավորեցված պետական) գործառույթներն իրականացնելիս գործելու են որպես հանրային (վարչական) մարմիններ: Այսինքն, այդ մարմինների և մասնավոր անձանց հանրային բնույթ ունեցող իրավահարաբերությունները կարգավորվելու են հանրային իրավունքի սկզբունքներով: Օրինակ, գազամատակարարում իրականացնող իրավաբանական անձը պետք է պարտականություն կրի կիրառելու ՎՀՎՎ մասին օրենքի 8-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը, իրականացնելու վարչական վարույթ, լուսմներ և այլն: Գործառույթներ պատվիրակելիս պետությունը պետք է հստակ սահմանի, որ պետական գործառույթ իրականացնող իրավաբանական անձինք այդ գործառույթներն իրականացնելիս գործելու են բացառապես հանրային իրավունքի ռեժիմում: Իրավական ռեժիմի սահմանումը պետք է կատարվի այն իրավական ակտով, որով մասնավորեցվում կամ պատվիրակվում են որոշակի պետական գործառույթներ: Իսկ պայմանագրերի միջոցով պետական գործառույթները ժամանակավորապես մասնավոր անձանց պատվիրակելիս այդ պայմանագրում հստակ պետք է սահմանվի, թե որոնք են պետական գործառույթները, որոնք պատվիրակվում են, և այդ գործառույթների իրականացման նկատմամբ նույնպես պայմանագրով պետք է սահմանվի հանրային իրավական ռեժիմ: Այսինքն, պայմանագրով պետք է սահմանվի, որ պետական գործառույթն իրականացնելիս մասնավոր կազմակերպությունը հանդիսանում է վարչական մարմին, որն իրականացնում է վարչարարություն, որի իրավաչափության ստուգումն ընդդատյա է ՀՀ ՎԴ-ին:

Պրակտիկայում ՀՀ ՎՃՋաբեկ դատարանը ևս պետք է իր որոշումներով ապահովի օրենքի միատեսակ կիրառությունը՝ «պետական գործառույթ» եզրույթի իրավական բովանդակության առումով: Այդ որոշումը պետք է պարունակի որոշակի չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տարանջատել պետական ու մասնավոր գործառույթները և այդպիսով պարզել այն իրավական ռեժիմը, որը պետք է կիրառվի տվյալ մարմնի գործունեության նկատմամբ:

## Առաջարկ

ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանել, որ բոլոր դեպքերում, երբ պետությունն իր հանրային գործառույթների իրականացումը պատվիրակում է մասնավոր անձանց՝ անկախ պատվիրակման ձևից (պայմանագիր, օրենսդրական ակտ և այլն), ապա շահագրգիռ անձանց իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն իրականացվում է հանրային իրավունքի նորմերի միջոցով:

### 3.470-ի 8-րդ հոդվածով սահմանված առարկայական ընդդատությունը

ա. հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի բնորոշումը և ՎԴ-ին ընդդատյա գործերի շրջանակը

ՀՀ ՎԴ-ի ստեղծմամբ ՀՀ դատարանների ընդդատության սահմանները վերանայվեցին և ստացան նոր բաժանում: Վարչական դատարանը հռչակվեց որպես պետական կառավարման բնագավառում ծագող հանրային իրավական վեճերը լուծող դատական ատյան:

ՀՀ ՎԴ-ի 8-րդ հոդվածի համաձայն՝ ՎԴ-ին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

- 1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.
- 2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.
- 3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.
- 4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

Այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

Նշված հոդվածը սահմանում է հանրային իրավահարաբերություններից բխող որոշ վեճերով գործերի ցանկ՝ միևնույն ժամանակ սահմանելով, որ ՎԴ-ին ընդդատյա են առհասարակ հանրային իրավահարաբերություններից բխող բոլոր գործերը: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ նշված հոդվածում, ինչպես և առհասարակ ՀՀ օրենսդրությամբ չի բացահայտվում, թե որոնք են հանրային իրավահարաբերությունները, ինչը հանգեցնում է ՀՀ դատական ատյանների կողմից այդ եզրույթի, հետևաբար նաև ՀՀ ՎԴ-ին ընդդատյա գործերի շրջանակի տարատեսակ մեկնաբանության:

Թեև «հանրային իրավահարաբերություն» եզրույթը և դրանից ծագող վեճերը կարող են իրավունքի բնագավառի մասնագետների մոտ որոշակի պատկերացում տալ հիշյալ եզրույթի էության մասին, սակայն այն չի կարող ընկալելի և հասկանալի լինել հասարակության լայն շրջանակների, մասնավորապես, ՀՀ ՎԴ- դիմող սուբյեկտների համար:

ՀՀ ՎԴՕ-ի 79-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ՎԴ-ը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ ՎԴ-ում քննության:

Նշված հոդվածում օգտագործվում է «ենթակա չէ» եզրույթը, որն իրականում չի համապատասխանում իրավակարգավորման նպատակին: Իրավունքի տեսությունում տարբերակվում են «ընդդատության» և «ենթակայության» ինստիտուտները: Ենթակայությունը տարբեր մարմինների միջև լիազորությունների բաշխումն է, այսինքն, սահմանում է, թե տվյալ վեճը որ մարմնին է ենթակա (դատարան, վարչական մարմին, արբիտրաժ և այլն): Իսկ ընդդատությունը սահմանում է, թե դատական մարմիններից որին է ընդդատյա տվյալ վեճի քննությունը (ՎԴ, ընդհանուր իրավասության դատարան):

Ակնհայտ է, որ ՀՀ ՎԴՕ-ի 79-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետում պետք է օգտագործվեր «ընդդատյա չէ» եզրույթը, հակառակ պարագայում, ստացվում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելով ենթակայության հիմքով, այսինքն, համարելով, որ այդ վեճը ընդհանրապես դատական ատյանների քննությանը ենթակա չէ՝ ՎԴ-ը սահմանափակում է այդ անձի՝ ընդհանուր իրավասության դատարան դիմելու իրավունքը:

ՀՀ ՎԴՕ-ի 90-րդ հոդվածը սահմանում է, որ ՎԴ-ը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ ՎԴ-ին: Այս հոդվածում եզրույթը ճիշտ է ընտրված:

Վարչական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո խնդիր էր առաջացել միմյանց հետ կապված պահանջների ընդդատությունը որոշելու առումով: Օրինակ, անձը ներկայացնում էր առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջ. պահանջներից առաջինը ներկայացվում էր ընդհանուր իրավասության դատարան, երկրորդը՝ ՎԴ-, որից հետո ՎԴ-ում գործի քննությունը կասեցվում էր մինչև ընդհանուր իրավասության դատարանում գործի քննությունը:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008 թվականի փետրվարի 11-ի թիվ 113 որոշման 5-րդ կետով ամրագրվել է, որ «այն դեպքերում, երբ դատարան ներկայացված հայցադիմումն իր մեջ պարունակում է քաղաքացիական, ընդհանուր իրավասության և ՎԴ-ների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ, ապա քաղաքացիական գործեր քննող դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին), որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, որում պարզաբանում է, թե պահանջի որ մասն է իրեն ընդդատյա, և որը՝ ոչ:

Վարչական դատարանում քաղաքացիական և ՎԴ-ների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ պարունակող հայցադիմում ստանալու դեպքում դատարանը հայցադիմումն ընդունում է միայն ՎԴ-ին ընդդատյա մասով: Մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժվում է՝ հիմք ընդունելով Վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման մեջ դատարանը պարզաբանում է, թե պահանջը որ դատարանին է ընդդատյա»:

Հետագայում ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, ի փոփոխումն 2008 թվականի փետրվարի 11-ի թիվ 113 որոշման, 2008 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունեց թիվ 123 որոշումը, որում մասնավորապես նախատեսված է, որ. «այն դեպքերում, երբ դատարան է ներկայացվել հայցադիմում, որը վերաբերում է տարբեր դատարաններին ընդդատյա (քաղաքացիական, ընդհանուր իրավասության և ՎԴ-ների առարկայական ընդդատություն) միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճին, ապա գործը քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը: Հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է հետևանք ներկայացնող պահանջների լուծման ելքը»:

ՀՀ ՍԴ-ի 03.02.2009թ.-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ (1-ին մաս) և 19-րդ (1-ին մաս) հոդվածներիպահանջներին հակասող և անվավեր:

բ. դիտարկման արդյունքում արձանագրված պրակտիկայում առկա խնդիրները՝ կապված հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի բնորոշման հետ

ՀՀ ՎԴ-ի գործող պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՎԴ-ի առարկայական ընդդատության սահմանների կապակցությամբ միասնական մեկնաբանություն դատավորների շրջանում չի ձևավորվել: Իրավակիրառ պրակտիկայում հանդիպող խնդիրները կներկայացվեն հետևյալ ուղղություններով.

**1. ՀՀ ՎԴ-ի կողմից վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցադիմումների ընդունման մերժումը՝ ՎԴ-ին ենթակա չլինելու պատճառաբանությամբ:**

ՀՀ ՎԴՕ-ի 79-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ ՎԴ-ը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ ՎԴ-ում քննության:

ՀՀ ՎԴՕ-ի 65-րդ հոդվածից մինչև 68-րդ հոդվածները սահմանում են ՎԴ ներկայացվող հայցերի տեսակները, նույն օրենսգրքի 71-րդ հոդվածը սահմանում է, թե յուրաքանչյուր հայցատեսակն ինչ ժամկետներում կարող է ներկայացվել դատարան:

ՀՀ ՎԴ-ում ձևավորված պրակտիկայի համաձայն նշված հոդվածով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է 79-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի հիմքով, այն է՝ հայցը ենթակա չէ ՎԴ-ում քննության:

Օրինակ՝

Հարկային տեսչությունը դիմել է ընդդեմ Ա. ընկերության վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման հիման վրա տուգանքի բռնա-

զանձման հայցով: Ընկերությունը ներկայացրել է վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման վիճարկման հակընդդեմ հայցադիմում: ՀՀ ՎԴ-ը մերժել է հայցադիմումի ընդունումը՝ պատճառաբանելով, որ վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը բաց է թողնվել, ինչի արդյունքում վեճը ենթակա չէ ՎԴ-ի քննությանը:

Հասկանալի է, որ ՀՀ ՎԴՕ-ի 71-րդ հոդվածով հայց ներկայացնելու ժամկետների սահմանումը ինքնանպատակ չէ, սակայն միևնույն ժամանակ, դա չի նշանակում, որ կարող է հայցադիմումի ընդունումը մերժվել այդ հիմքով, քանի որ, եթե հայցը ուշ է ներկայացվել, դա չի նշանակում, որ վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից: Ժամկետի խախտումը դեռևս հիմք չէ որևէ իրավահարաբերության հանրային լինելը բացառելու համար: Ճիշտ է, ՀՀ ՎԴՕ-ը չի նախատեսում հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմք հայց ներկայացնելու ժամկետների խախտման հետ կապված, սակայն դա ինքնաբերաբար չպետք է հանգեցնի 79-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի տարածական մեկնաբանությանը:

Ընդհակառակը, օրենքում իրավակարգավորման բացակայության պայմաններում պետք է գործեն ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, և պետք է գերակայեն դատական պաշտպանություն հայցող անձի շահերը և օրենքով չնախատեսված հիմքով չպետք է սահմանափակվի դատարանի մատչելիության իրավունքը:

## Օրինակ

Անձը ներկայացրել է հայցադիմում դատավարական ժամկետների ավարտից հետո: Դատարանը մերժել է հայցը ՎԴ-ին ենթակա չլինելու հիմքով: Որոշման դեմ ներկայացվել է բողոք: ՀՀ ՎԴ-ը բողոքն արդարացիորեն բավարարել է՝ պատճառաբանելով, որ «դատավարական ժամկետների ավարտից հետո հայցադիմում ներկայացվելու և բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է վերադարձնել հայցադիմումը: ՀՀ ՎԴՕ-ի 79-րդ հոդվածը սպառիչ կերպով սահմանում է հայցադիմումի ընդունումը մերժելու դեպքերը, ի թիվս որոնց նախատեսված չէ դատավարական ժամկետների ավարտից հետո հայցադիմում ներկայացնելը: «Նման դեպքի համար օրենսդիրը նախատեսել է հայցադիմումը վերադարձնելու ինստիտուտը»:



2. ՀՀ ՎԴ-ին ընդդատյա չլինելու հիմքով ՀՀ ՎԴ-ի կողմից հայցադիմումի ընդունման մերժումն այն դեպքում, երբ այլ հայց ներկայացնելու հնարավորության պարագայում հայցվորը ներկայացրել է ճանաչման հայց:

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ այն դեպքերում, երբ ՎԴ դիմող սուբյեկտն այլ հայց ներկայացնելու հնարավորության պարագայում ներկայացնում է ճանաչման հայց, ՎԴ-ը մերժում է հայցադիմումի վարույթ ընդունելը՝ դարձյալ ՎԴ-ի քննությանն ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Օրինակ՝

Դ. Հայցվորը ՀՀ ՎԴ է ներկայացրել հայցադիմում՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապված հարաբերություններում հավատարմագրման պահանջի շրջանցման գործողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու, ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ Համալսարանի «Թարգմանչական գործ» մասնագիտության գծով հավատարմագրում չիրականացնելու հետ կապված գործողությունները/անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջով: ՀՀ ՎԴ-ը մերժել է հայցադիմումի ընդունումը ՀՀ - ՎԴ-ին ընդդատյա չլինելու հիմքով՝ պատճառաբանելով, որ հայցվորը ներկայացրել է ճանաչման հայց, այն դեպքում, երբ կարող էր ներկայացնել այլ հայց:

«Դատարանը չի հերքում, որ հայցադիմումով ներկայացված կողմերը վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտ են հանդիսանում: Դա վեճի առարկայական ընդդատությունը կանխորոշող հանգամանք է հանդիսանում, սակայն դա բավարար չէ վեճը Դատարանի քննությանը ենթակա լինելը հիմնավորելու համար» (մեջբերման ավարտ):/:

ՀՀ ՎԴՕ-ի 68-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-ից 67-րդ հոդվածներին համապատասխան: Ճիշտ է, նշված հոդվածը որոշակի սահմանափակում է սահմանում ճանաչման հայց ներկայացնելու համար, և ստացվում է, որ հայցվորը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորի այլ հայցադիմում ներկայացնելու անհնարինությունը, սակայն միևնույն ժամանակ դա չի կարող բացառել ՎԴ-ի կողմից գործի քննության հնարավորությունը՝ պայմանավորված վեճի վարչաիրավական բնույթով, և հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք հանդիսանալ:

Այս դեպքում ևս առկա է օրենսդրական բաց, քանի որ օրենսդրությունը չի սահմանում սահմանված դատավարական պահանջների խախտման հետևանքները, որը, սակայն, դատարանին հիմք չի տալիս լայն մեկնաբանության ենթարկել ՎԴՕ-ի 79-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետը և «ենթակայություն» եզրույթին տալ նման տարածական մեկնաբանություն: Ավելի քան ակնհայտ է, որ ճանաչման հայցը՝ որպես վարչական արդարադատության ոլորտում անձի իրավունքների պաշտպանու-

թյան եղանակ, միջոց, քննարկվում է ՀՀ ՎԴ-ում, և չի կարող առաջանալ դրա ենթակայության հարց, առավել ևս նման հայցի ներկայացման պարագայում գործը համարվի ՎԴ-ին ոչ ենթակա:

**3. Վարչական դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս ըստ էության քննության իրականացում:**

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ հանդիպում են նաև դեպքեր, երբ դատարանը փորձում է հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը որոշելու փուլում իրականացնել գործի ըստ էության լուծում, ինչն անթույլատրելի է:

**Օրինակ՝**

ՀՀ ԿԱՊԵԿ նախագահի տեղակալը ներկայացրել է հարցում Գ. ընկերության աշխատակիցների կողմից դատարաններում վարվող դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Ընկերության աշխատակիցները և ընկերությունը, ներկայացնելով հիմնավորում, որ այդ տեղեկությունների պահանջումը վարչարարություն է, իսկ այդպիսի լիազորություն չունենալու պարագայում՝ ոչ իրավաչափ վարչարարություն, դատարան են ներկայացրել գործողության կատարման և պարտավորեցման հայցադիմում հետևյալ պահանջով. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահին պարտավորեցնել ձեռնպահ մնալ ընկերության և նրա աշխատակիցների մասնագիտական գործունեության վերաբերյալ ՀՀ պետական մարմիններից տեղեկություններ ստանալուն ուղղված գործողություններ կատարելուց, այդ թվում՝ կատարված հարցման պատասխանը ստանալուց, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ պարտավորեցնել հետ պահանջել կատարված հարցումը:

Այս գործով ՎԴ-ը մերժել է հայցադիմումի ընդունումը՝ պատճառաբանելով. «... ֆիզիկական և իրավաբանական անձինք վարչական արդարադատություն կարող են հայցել, եթե իրենց նկատմամբ իրականացվել է վարչարարություն»:

...«Կոմիտեի նախագահի տեղակալի գրությունը վարչարարության արդյունք չի հանդիսանում, այլև այն կապվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտներ կոմիտեի քննչական վարչությունում քննվող քրեական գործի նախաքննության հետ»:

Դատարանը, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը և դիտարկելով ընդդատության հարցը, պետք է ընդամենը պարզեր, թե արդյոք տվյալ վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից, թե՛ ոչ: Նման պահանջ ընդհանուր իրավասության դատարան ներկայացվել չէր կարող, քանի որ ՊԵԿ նախագահի տեղակալը, նման հարցում անելով, հանդես է եկել որպես հանրային իշխանություն կրող, հետևաբար վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից: Մնացած հարցերը, որոնց դատարանն անդրադարձել է տվյալ դեպքում, ենթակա են պարզման դատաքննության փուլում, և դատարանը դրանց պետք է անդրադառնար վճռով: Բացառապես վճռում դատարանը պետք է քննարկեր այն հանգա-

մանքը, թե արդյոք Կոմիտեի նախագահի տեղակալի գրությունն իրենից ներկայացնում է իրավաչափ վարչարարություն, թե՛ ոչ:

#### 4. Դատարանի մատչելիության իրավունքի խախտում

Իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են իրավիճակներ, երբ իրավաբանները դժվարանում են կոնկրետ իրավահարաբերությունն ամբողջությամբ դասել քաղաքացիական կամ վարչական իրավունքների շարքին: Որպես հետևանք, դժվար է որոշել իրավահարաբերությունից ծագող վեճի ընդդատությունը: Լինում են նաև իրավիճակներ, երբ առկա են միմյանց փոխկապակցված և միմյանցից ածանցվող քաղաքացիական և վարչական իրավահարաբերություններ: Այս դեպքում իրավահարաբերությունն ի սկզբանե ծագում է վարչական կամ քաղաքացիական որևէ ակտով, սակայն, այնուհետև, նույն իրավահարաբերության շրջանակներում իրականացվում են համապատասխանաբար քաղաքացիական կամ վարչական գործողություններ: Այստեղ հիմնականում առաջանում է առարկայական ընդդատության հարց. արդյոք իրավահարաբերությունից ծագող բոլոր՝ թե՛ հանրային, թե՛ մասնավոր բնույթի փոխկապակցված վեճերը պետք է քննվեն մեկ դատարանում, թե դրանցից յուրաքանչյուրը համապատասխան գործեր քննող դատարանում:

ՎՀՎՎ մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը հայկական վարչական իրավունքի նորամուծություններից է: Այն հանդիսանում է Եվրոպական միջարք պետություններում և Եվրոպական վարչական իրավունքում տարածված «վարչական ակտի իրավաչափությանը վստահելու» ինստիտուտի տարրերից մեկը:

ՎՀՎՎ մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝

«Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝

- ա) վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը.
- բ) եթե դիմումը վերաբերում է օրենքով նախատեսված որևէ փաստաթղթի տրամադրմանը, որն առնչվում է որևէ փաստի (ծնունդ, մահ, անձի բացակայություն տվյալ վայրից և այլն) հաստատմանը կամ արձանագրմանը, ապա դիմումի հիման վրա համապատասխան ակտը չստացած կամ այդ ակտի համար դիմում ներկայացրած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթղթերը չունենալու համար»:

Վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմնի անգործությունն անձանց համար ստեղծում է անորոշություն, ինչպես նաև պարունակում է կոռուպցիոն վտանգներ: Գործարարությամբ զբաղվող անձանց նկատմամբ նման անգործության դրսևորումը կարող է խոչընդոտներ ստեղծել համայնքի կամ պետության տնտեսության զարգացման համար:

Նշված նորմի հիմնական նպատակն է վարչական վարույթի շրջանակներում բարձրացնել վարչական մարմինների պատասխանատվությունը: Պրակտիկայում նորմի կիրառումը կարող է կանխել կամ նվազեցնել այն դեպքերը, երբ մասնավոր անձինք դիմում են իրավասու վարչական մարմնին՝ բարենպաստ վարչական ակտ ստանալու ակնկալիքով, սակայն վարչական մարմինը սահմանված ժամկետում որևէ կերպ չի արձագանքում դիմումին:

### Օրինակ՝

Եթե անձը դիմել է համապատասխան վարչական մարմնին լիցենզիա ստանալու խնդրանքով, և օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմինը չի ընդունել վարչական ակտ, ապա հետագայում անձը չի կարող ենթարկվել պատասխանատվության՝ առանց համապատասխան լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար: Վարչական իրավունքի այս ինստիտուտը մասնավոր անձանց թույլ է տալիս վստահել վարչական մարմնի լուր համաձայնությամբ ընդունած վարչական ակտերի իրավաչափությանը. եթե վարչական մարմինն առարկություն ունենար հայցվող վարչական ակտի, դրանից ծագող իրավունքի իրականացման իրավաչափության կապակցությամբ, ապա կընդուներ միջամտող կամ զուգորդվող վարչական ակտ: Այլ կերպ՝ վարչական մարմնի լռությունը բարենպաստ վարչական ակտի ընդունման նշան է: Նորմի այս պահանջն ակնհայտ է: Սակայն ինչպես է պետք վարվել, եթե ՎՀՎԿ մասին օրենքի 48-րդ հոդվածի հիման վրա ընդունված վարչական ակտն ակնհայտորեն ոչ իրավաչափ է, ուստի դրա իրականացումը կարող է վնասել հանրային շահը կամ այլ անձանց:

### Օրինակ՝

Քաղաքացին դիմում է համապատասխան վարչական մարմնին՝ բազմաբնակարան շենքի տանիքին շինություններ կառուցելու թույլտվություն տրամադրելու խնդրանքով: Վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմինը չի ընդունում որևէ վարչական ակտ, ուստի քաղաքացին, վստահելով վարչական մարմնի կողմից լռությամբ տրված թույլտվության օրինականությանը, ձեռնամուխ է լինում տանիքի վրա շինությունների կառուցմանը: Շինարարության ավարտից հետո համապատասխան վարչական մարմինը տեղեկանում է կառույցների մասին և գտնում, որ դրանք ապօրինի են, սպառնում են բնակիչների անվտանգությանը և շենքի սեյսմակայունությանը: Սակայն վարչական ակտը համարվում է իրավաչափորեն տրված, և իրավունքը՝ իրականացված: Նման իրավիճակում, ինչպես հարգել ՎՀՎԿ մասին օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավունքները և միևնույն ժամանակ պաշտպանել հանրային շահերը, այլոց իրավունքները:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2010թ.-ի թիվ ՎԴ/1689/05/09 վարչական գործով արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝



«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» ենթակետի դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած վարչական ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի վրա, չխախտեն այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը:

Սույն գործով Ղատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքները, որ Սերգեյ Մարդոյանի 11.02.2009 թվականի դիմումի վերաբերյալ Քաղաքապետարանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված 30-օրյա ժամկետում որևէ վարչական ակտ չի ընդունել: Հետևաբար Սերգեյ Մարդոյանի դիմումը համարվում է բավարարված, այսինքն՝ կառուցապատման իրավունքը վերջինիս տրամադրված, և Սերգեյ Մարդոյանը կարող է ձեռնամուխ լինել այդ իրավունքի իրականացմանը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ղատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Ղատարանը, ճանաչելով Սերգեյ Մարդոյանի կառուցապատման իրավունքը Երևանի Հանրապետության փողոցի 62-րդ շենքի թիվ 114 տարածքի աստիճանների վրա շվաքարանի, գովազդային վահանակի և ճակատի ձևավորման նկատմամբ, գնահատման առարկա չի դարձրել դրա իրավաչափության հարցը, որի դեպքում միայն հնարավոր կլիներ փաստել Սերգեյ Մարդոյանի կողմից հայցվող վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը»:

Նմանատիպ մեկ այլ որոշում ևս. 25.12.2009թ.-ի թիվ ՎԴ/1943/05/09 վարչական գործով կայացված որոշման համաձայն.

«Սույն գործով Վարչական դատարանը և և Այվազյանի հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Քաղաքապետարանը խախտել է «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, հետևաբար լրացել է ինքնակամ կառուցված շենքի, շինության կամ ինքնակամ զբաղեցված հողամասի օրինականացման մասին որոշում կայացնելու համար սահմանված 30-օրյա ժամկետը, ուստի և և Այվազյանի կողմից Երևանի Սարյան 24 հասցեում կառուցված 14.8 քմ - մակերեսով կցակառույցը և 22.0 քմ անտրեսուլը համարել է օրինական, իսկ զբաղեցրած 110 քմ մակերեսով հողատարածքը՝ տրամադրված վարձակալության հիմունքներով:

Մինչդեռ, Ղատարանը, Երևանի Սարյան 24 հասցեում կառուցված 14.8 քմ մակերեսով կցակառույցը և 22.0 քմ անտրեսուլը համարելով օրինական, իսկ զբաղեցրած 110 քմ մակերեսով հողատարածքը՝ տրամադրված վարձակալության հիմունքներով, գնահատման առարկա չի դարձրել դրանց իրավաչափության հարցը, հայցվող իրավունքի՝ օրենքի և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխանելու, այլոց իրավունքներն ու ազատությունները չխախտելու հանգամանքները:

Մասնավորապես՝ Ղատարանը գնահատման առարկա չի դարձրել 27.05.2009 թվականի Քաղաքապետարանի թիվ 18-06/2-5178 գրությունը,

որի համաձայն՝ Երևանի Սարյան 24 հասցեի բնակելի շենքին կից՝ Լև Այվազյանի կողմից իրականացված կցակառույցի զբաղեցրած հողամասը գտնվում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում (կետ 6), իսկ մասամբ նաև Երևանի քաղաքապետի 10.08.2007 թվականի թիվ 2804-Ա որոշմամբ ճշտված Երևանի Սարյան 24 հասցեի բազմաբնակարան շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 3697.43 քմ մակերեսով հողամասի սահմաններում, ինչպես նաև ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների կարգավիճակի մասին Երևանի քաղաքապետի 03.11.2004 թվականի թիվ 2102-Ա որոշման թիվ 2 հավելվածը, որով կառույցի վերաբերյալ տեխնիկական եզրակացություն ներկայացված չլինելու պատճառով չի ճանաչվել Լև Այվազյանի սեփականության իրավունքը Երևանի Սարյան 24 հասցեում գտնվող կցակառույցի և անտրեսուլի նկատմամբ»:

Նմանատիպ են ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2009թ.-ի թիվ ՎԴ/4839/05/09 վարչական գործով, 17.04.2009թ.-ի թիվ 5557/05/08 որոշումները:

Վճռաբեկ դատարանն իրավացիորեն նշել է օրինականության և այլոց իրավունքների պաշտպանության մասին: Սակայն դատարանի կողմից հողվածին տրված մեկնաբանությունը չի բխում 48-րդ հոդվածի իրավակարգավորումից: Դատարանի դիրքորոշման համաձայն՝ նշված նպատակներին պետք է հասնել 48-րդ հոդվածի ուժով ընդունված վարչական ակտի իրավաչափությունը հաստատելու միջոցով, որից հետո միայն կհամարվի, որ գոյություն ունի վարչական ակտը և դրա հիման վրա ծագող իրավունքը: Դատարանի դիրքորոշումներից նաև երևում է, որ օրենքի ուժով արդեն ընդունված վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի Վարչական դատարանը, երբ ակտի հասցեատերը դիմում է Վարչական դատարան՝ իր իրավունքների լիարժեք իրականացման նպատակով: Սակայն, նման դիրքորոշումն անընդունելի է: Ստացվում է, որ Վարչական դատարանը պետք է ի պաշտոնե նախ ստուգի օրենքի ուժով տրված վարչական ակտի իրավաչափությունը, այնուհետև ձեռնամուխ լինի հայցվորի հայցադիմումն ըստ էության քննելուն: Նախ, այս դեպքում Վարչական դատարանը հանդես կգա որպես վարչական մարմին կամ նրա անունից, ինչն անթույլատրելի է, քանի որ համապատասխան վարչական մարմնի իրավասությունն է ստուգել անձի դիմումի և հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, ինչը նա չի կատարել: Երկրորդ, Վարչական դատարանը ՎԴՕ-ի համաձայն նման լիազորություններ չունի: Վարչական դատարանը կարող է ստուգել բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունն այն դեպքում, երբ համապատասխան վարչական մարմինը վիճարկման հայց է ներկայացրել Վարչական դատարան: ՀՀ վարչական դատավարության օրենսդրությունը չի նախատեսում Վարչական դատարանի կողմից վարչական ակտերի իրավաչափության *ex officio* ստուգումը:

Ավելին, այն դեպքերում, երբ քաղաքացին անմիջապես, առանց ՎԴ դիմելու ձեռնամուխ է լինում 48-րդ հոդվածի ուժով տրված վարչական ակտով սահմանված իրավունքի իրականացմանը, Վճռաբեկ դատարանի առաջարկած լուծումը նույնիսկ տեսականորեն չի կարող կիրառվել: Նշված վերացական օրինակում քաղաքացին, համարելով որ վարչական ակտը տրված է, արդեն իսկ կառուցել է իր հայցվող շինությունը. Վարչական դատարանը հնարավորություն չունի ստուգելու տրված ակտի իրավաչա-

փությունը: Այս դեպքում ինչպե՞ս, ո՞ր ընթացակարգի միջոցով, ու՞մ կողմից, ի՞նչ ժամկետներում և պայմաններով պետք է հաստատվի արդեն իսկ օրենքի ուժով ընդունված վարչական ակտը:

Այսինքն, ակնհայտ է, որ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն վարչական մարմնի անգործությունն ընդհանրապես որևէ հետևանք չի առաջացնում, իսկ նման պարագայում, առարկայագուրկ է դառնում 48-րդ հոդվածի կարգավորումը և դրանից բխող՝ վարչական ակտերի իրավաչափությանը վստահելու քաղաքացիների իրավունքը: Այս իրավունքը, ի դեպ, ամրագրված է ոչ միայն Եվրոպական երկրների վարչական իրավունքի համակարգում, այլև Եվրոպական միության իրավունքի կարևորագույն սկզբունքներից է:

Այս հարցի տեսանկյունից, կարևոր է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ « 3. Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

4. Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

- ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով.
- բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով.
- գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա»:

Հատկանշական է նշված հոդվածի կապակցությամբ ձևավորված ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկան.

ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ.-ի թիվ ՎԴ 0171-02 վարչական գործով որոշման համաձայն. «Նշված հոդվածներից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր լինելու դեպքերը, միաժամանակ սահմանել է երկու պայման, որոնց միաժամանակյա առկայության դեպքում ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել: Դրանք են, երբ՝ 1) ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, 2) ակտի գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Սույն քաղաքացիական գործի փաստերի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք ոչ իրավաչափ է վիճարկվող վարչական ակտը և ոչ իրավաչափ լինելու դեպքում այն կարող է անվավեր ճանաչվել:

Նշված փաստերի համադրության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության 26.12.2006 թվականի որոշումն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ - հոդվածի, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտումներով, հետևաբար այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի ուժով ոչ իրավաչափ է: Սակայն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ծառայության վիճարկվող որոշման ընդունումն ըստ էության ուղղված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիր կատարմանը, որն արդար դատաքննության բաղկացուցիչ տարրն է:

2. Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սովել է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «իրավաչափ սպասում» հասկացությունը: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «իրավաչափ սպասում» իր իրավունքներն իրականացնելու համար (Պրեստոն Կոմպանիա Նավիեռան ՍԱ ընդդեմ Բելգիայի, 20.11.1995թ.-ի թիվ 17849/91): «Իրավաչափ սպասում» առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին (Կոպեկին ընդդեմ Սլովակիայի, 28.09.2004թ.-ի թիվ 44912/98): Սույն քաղաքացիական գործով Ֆիրդուս Զաքարյանի և Ժիրայր Գալստյանի սեփականության իրավունքը ճանաչվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 17.11.2006 թվականի վճռով և «Թիվ 06-3581 քաղաքացիական գործով վճիռը պարզաբանելու մասին» ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած 21.12.2006 թվականի որոշմամբ, հետևաբար, նրանք ունեին օրինաչափ սպասելիք այդ ակտերի իրավաչափության վերաբերյալ և բավականաչափ իրավական հիմք՝ կարծելու այդ ակտերի հնարավոր հետևանքների առաջացման՝ այն է դրանց կատարման հնարավորության վերաբերյալ»:

Հետևաբար, թեև հիմնավոր են Վճռաբեկ դատարանի մտահոգություններն օրենքի ուժով տրված ակնհայտ ոչ իրավաչափ ակտերի, դրանց հիման վրա ծագած իրավունքների իրականացման հետևանքների, այլոց իրավունքների և հանրային շահերի վերաբերյալ, այդ մտահոգությունները չեզոքացնելու ուղղությամբ դատարանի առաջարկված լուծումներն անընդունելի են:

## **Առաջարկ**

Ապացույցների տեսակները սահմանելիս դրանց շարքում նախատեսել կողմի՝ տեղեկատվության անմիջական կրողի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ:

Բացառել ներկայացուցչի բացատրությունների՝ որպես կողմի ցուցմունք ապացույցի օգտագործումը: Ապահովել յուրաքանչյուր դեպքում

վարչական մարմնի ներկայացուցչի ցուցմունքի ստացման օրինականությունը (որպես վկա ներգրավումը և սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին): Վարչական մարմնի ակտերը, գործողությունները, անգործությունը վիճարկելիս անձի վրա պետք է դրվի ոչ թե իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ցանկացած հանգամանքի ապացուցման բեռ, այլ այն հանգամանքների, որոնք բարենպաստ են անձի համար: Ապահովվել պրակտիկայում դատավորների կողմից ապացուցում պահանջող փաստերի շրջանակի բովանդակային պարզումը և ապացուցման բեռի ճիշտ բաշխումը:

Ապահովել դատավորների կողմից իրենց պարտականությունների կատարումը, մասնավորապես՝ վիճելի իրավահարաբերությունների բնույթի և կիրառման ենթակա օրենսդրության պարզումը: ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի առնչությամբ քննարկել հետևյալ լուծումները կամ այլ լուծումներ՝ նշված սկզբունքների պահպանմամբ. Այն դեպքերում, երբ անձը ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի համաձայն ստացել է վարչական ակտ և կարող է ինքնուրույն, առանց այլ վարչական մարմիններ դիմելու ձեռնամուխ լինել<sup>12</sup> իրավունքի իրականացմանը, ապա իրավունքի իրականացմանը ձեռնամուխ լինելուց առնվազն 15 օր առաջ այդ մասին տեղեկացնում է վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնին: Այդ նպատակով անհրաժեշտ է ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետը լրացնել հետևյալ արտահայտությամբ. «դրա մասին առնվազն 15 օր առաջ ծանուցելով համապատասխան վարչական մարմնի»: Նման ընթացակարգ նախատեսելու դեպքում պետք է կարգավորել նաև, թե որն է 15 օր առաջ վարչական մարմնին չծանուցելու հետևանքը, քաղաքացու համար: Այն դեպքերում, երբ անձը չի կարող ինքնուրույն, առանց համապատասխան վարչական մարմնին դիմելու, ձեռնամուխ լինել ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածով տրված վարչական ակտից ծագող իրավունքի իրականացմանը, և հայցադիմում է ներկայացնում ՎԴ ընդդեմ որևէ վարչական մարմնի՝ նպատակ ունենալով ապահովելու այդ իրավունքի իրականացումը, ապա ՎԴ-ը, պարզելով, որ անձի վկայակոչած իրավունքը ծագել է ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի ուժով՝ այդ մասին ծանուցում է վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնին: Ծանուցումից հետո 15-օրյա ժամկետում ծանուցված վարչական մարմնին իրավունք ունի ՎԴ-ի 3-րդ հոդվածի 2 կետի «2» ենթակետի հիման վրա դիմելու ՎԴ: Վարչական մարմնի կողմից նշված ժամկետում ՎԴ չդիմելու դեպքում՝ ՎԴ-ը քննում և ըստ էության լուծում է վարչական գործը, որից հետո նշված վարչական ակտը դառնում է անվիճարկելի՝ այն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի համար: ՎԴ-ը իրավունք չունի առանց համապատասխան վարչական մարմնի հայցադիմումի քննել հայցվորի՝ ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի հիման վրա տրված վարչական ակտի իրավաչափությունը:

<sup>12</sup> Դրանից հետո, 15-օրյա ժամկետում վարչական մարմնին ՎԴ-ի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա կարող է դիմել ՎԴ՝ պահանջելով համապատասխան անձին գրել ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետով տրված վարչական ակտից ծագած իրավունքից՝ վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու հիմնավորմամբ:

## ԳԼՈՒԽ 4. Անվճար իրավաբանական օգնությունը վարչական գործերով

Ղատարան դիմելու իրավունքը կարող է նախատեսված լինել օրենքով, սակայն հաճախ արդարադատությունն անձանց շահերի արդյունավետ ներկայացումն ու պաշտպանությունն անհասանելի են մնում տնտեսապես անապահով վիճակում գտնվող անձանց համար: Մի շարք գործերով ՄԻԵԴ-ը գտել է, որ արդարադատության մատչելիությունն արդար դատաքննության իրավունքի անբաժան մասն է կազմում, ուստի ՄԻԵԿ անդամ պետությունների պարտականությունն է ապահովել արդարադատության մատչելիությունը բոլորի համար: Քրեական գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու պարտավորությունն ամրագրված է ՄԻԵԿ-ի 6(3)(գ)-րդ հոդվածով, մինչդեռ այլ գործերով իրավաբանական օգնություն տրամադրելու պարտավորությունը բխում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից. «6(1)-րդ հոդվածը կարող է երբեմն պետությունից պահանջել իրավաբանական օգնություն տրամադրել այն դեպքում, երբ նման օգնությունն անհրաժեշտ է ղատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրականացման համար կամ որովհետև իրավաբանական ներկայացուցչությունը պարտադիր է, ինչպես նաև որոշ անդամ երկրների ներպետական օրենսդրությամբ՝ դատավարությունների տարբեր տեսակների համար, կամ ելնելով դատաքննության, կամ գործի բարդությունից»: Այս պարտականության իրականացման նպատակով պետությունները մշակում և իրականացնում են անվճար իրավաբանական օգնության ծրագրեր:

ՀՀ-ում յուրաքանչյուր ոք ունի օրենքով նախատեսված դեպքերում պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:<sup>13</sup> Այս իրավունքի իրականացումը ՀՀ օրենսդիրը երաշխավորում է միայն քրեական գործերով, ինչպես նաև քաղաքացիական գործերով՝ ալիմենտի գանձման և խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:<sup>14</sup>

Վարչական գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված չէ, սակայն Սահմանադրության վերոնշյալ դրույթը թույլ է տալիս այդ իրավունքի երաշխավորումը նաև վարչական գործերով: Ավելին, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածից բխում է, որ որոշ վարչական գործերով իրավաբանական օգնություն չտրամադրելը կարող է հանգեցնել այդ դրույթի խախտմանը:

Վարչական գործերով արդարադատության մատչելիության իրավունքի արդյունավետ և պրակտիկ իրագործումն ունի առավել կարևորություն, քանի որ ՎԴ-ում բողոքարկվում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերը, գործողություններն ու անգործությունը: Մյուս կողմից, հանրային իրավական հարաբերություններից բխող վեճերն առանձնանում են իրենց բարդությամբ. հաճախ նույնիսկ կողմերի ներկայացուցիչ հանդիսացող փաստաբաններն ու դատավորներն են դժվարանում հասկանալ իրավա-հարաբերությունը, կիրառման ենթակա նորմերը, ճիշտ հասկանալ ապա-

<sup>13</sup> Հոդված 20, ՀՀ Սահմանադրություն

<sup>14</sup> Հոդված 6, «Փաստաբանության մասին» օրենք

ցուցում պահանջող փաստերը, բաշխել ապացուցման բեռը և այլն: Այս առումով, գրեթե անհրատեսական է իրավաբանի մասնագիտություն չունեցող անձի կողմից շահերի արդյունավետ ներկայացումը ՎԴ-ում, մինչդեռ ՀՀ օրենսդրությունն ուղղակիորեն չի նախատեսում վարչական գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և դրա իրագործման մեխանիզմները:

Եւս Նախարարների կոմիտեի (78) 8 բանաձևի<sup>15</sup> համաձայն՝ ոչ ոք չպետք է տնտեսական խոչընդոտների պատճառով զրկվի քաղաքացիական, առևտրային, վարչական, սոցիալական կամ ֆինանսական հարցեր քննող դատարանում իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Այդ նպատակով բոլորը պետք է ունենան դատավարության ցանկացած փուլում անհրաժեշտ իրավաբանական օգնության իրավունք: Այս բանաձևը հստակ շեշտում է, որ իրավաբանական օգնություն տրամադրելու չափանիշը պետք է լինի իրավաբանական օգնության համար դիմող անձի տնտեսական վիճակը:<sup>16</sup> Եւս Նախարարների կոմիտեի թիվ R(93)1 հանձնարարականի<sup>17</sup> համաձայն՝ պետությունները պարտավոր են պարզեցնել անապահով անձանց՝ դատարան դիմելու իրավունքի իրագործումը՝ «իրավաբանական օգնություն կամ ցանկացած այլ տեսակի աջակցություն ցուցաբերելով բոլոր դատական ատյաններում (քաղաքացիական, քրեական, առևտրային, վարչական, սոցիալական և այլն) և բոլոր դատավարություններում, մրցակցային կամ ոչ մրցակցային, անկախ տվյալ անձանց դեմ»:<sup>18</sup> Բազմաթիվ Եվրոպական երկրներում համապատասխան մարմինը որոշում է կայացնում անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կամ այն մերժելու վերաբերյալ՝ ելնելով դիմողի տնտեսական վիճակից, ինչպես նաև գործով դիմողի՝ հաջողության հասնելու հնարավորություններից:<sup>19</sup>

Ղատելով «Փաստաբանության մասին» օրենքի 6-րդ հոդվածի տեքստից՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական գործերով իրավաբանական օգնությունն անխտիր տրամադրվում է բոլոր անձանց, ովքեր նշված տեսակի դատական գործերով կողմ են հանդիսանում: Օրինակ, եթե քաղաքացին դիմել է Հանրային պաշտպանի գրասենյակ ալիմենտի բռնազանձման վերաբերյալ դատական գործով իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքով, ՀԴԳ-ը պարտավոր է այն տրամադրել՝ առանց հաշվի առնելու դիմողի տնտեսական վիճակը: Անվճար իրավաբանական օգնության նման համակարգն արդյունավետ չէ, քանի որ հաշվի չի առնվում դիմողի ֆինանսական դրությունը, ինչը հանգեցնում է պետական միջոցների ոչ արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև խտրականություն է դրվում դատական գործերի տեսակների միջև՝ թողնելով վարչական գործերով մասնակիցների անվճար իրավաբանական օգնության համակարգից դուրս: Ուստի, անվճար իրավաբանական օգնություն ստանալու ներկա-

<sup>15</sup> Իրավաբանական աջակցության և խորհրդատվության մասին, 1978թ. մարտի 2

<sup>16</sup> Նույն տեղում, պարբ. 1.ա

<sup>17</sup> Արդարադատության մատչելիության իրականացումը ծայրահեղ անապահով անձանց համար, 1993թ. հունվարի 8

<sup>18</sup> Նույն տեղում, պարբ. 3.ա

<sup>19</sup> (93)1 հանձնարարականի իրականացման համեմատական ուսումնասիրություն, Մարդու իրավունքների մշտական կոմիտե, CDDH(2003)018 addendum I, Եւս, 2003թ. հունիսի 30, Ստրասբուրգ

յունս գործող չափանիշը (դատական գործի տեսակը) անհրաժեշտ է փոխել:

Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի, ինչպես նաև Եվրոպական բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ անվճար իրավաբանական օգնությունը պետք է տրամադրվի՝ ելնելով դիմողի տնտեսական դրությունից՝ անկախ դատական գործի տեսակից:

Ուստի, «Փաստաբանության մասին» օրենքում, ինչպես նաև ՎԴՕ ում անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական լրացումներ և փոփոխություններ՝ վարչական արդարադատությունն առավել մատչելի դարձնելու նպատակով:

Այս առումով, հարկ է նկատի ունենալ, որ 15.11.2010 թվականին Ազգային ժողովի օրակարգ է ընդգրկվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը: Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտպանություն է համարվում սույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է 1) խորհրդատվությունը, 2) ներկայացուցչությունը, 3) քրեական գործերով պաշտպանությունը, 4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը:

Սույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում, իսկ քրեական գործերով նաև՝ մինչդատական վարույթում:

Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինն անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը: Սույն մասում նշված անվճար իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել նաև հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի նախաձեռնությամբ՝ կասկածյալի կամ մեղադրյալի, կամ նրա մերձավոր ազգականի դիմումի հիման վրա:

Հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին,

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին,

3) դատապարտյալներին,

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին,

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին,

6) գործազուրկներին,

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին,



8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց,  
9) փախստականներին,

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, ով չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել հետևյալ անձանց՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ կորպորատիվ վեճերով),

2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ,

3) եթե առկա է դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Թեև սույն նախագիծն առաջադիմական դրույթներ է պարունակում, քանի որ ընդլայնում է անվճար իրավաբանական օգնության գործերի շրջանակը՝ ներառելով որոշակի կատեգորիայի անձանց համար վարչական գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը, այնուամենայնիվ, այն չի առաջարկում խնդրի լուծման համապարփակ և ամբողջական լուծումներ, ինչպես նաև անվճարունակության գնահատման հստակ չափանիշներ: Որոշակի առումով կարևորություն չի տրված նաև «արդատադատության շահի» կոնցեպցիային:

## **Առաջարկ**

Բարելավել անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթները՝ վարչական արդարադատությունն առավել մատչելի դարձնելու նպատակով: Առաջարկվում է ընդունել հատուկ օրենք՝ անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ, որը կնախատեսի վարչական գործերով անվճարունակ անձանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորություն և անվճարունակության գնահատման հստակ և օբյեկտիվ չափանիշներ:

## ԳԼՈՒԽ 5. Վարչական գործի բանավոր և հրապարակային քննության իրավունքը ՀՀ վարչական դատավարությունում

### ա. Հրապարակային քննության իրավունքը ՎԴ-ում

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար... իր գործի հրապարակային քննության իրավունք: Նման իրավունք է նախատեսված նաև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները... ունի արդար և հրապարակային դատաքննության իրավունք: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն այն կարծիքին է, որ քրեական գործերով և այլ իրավական հարցերով բոլոր դատավարությունները, սկզբունքորեն, պետք է իրականացվեն բանավոր և հրապարակային կարգով:<sup>20</sup> Իսկ ՄԻԵԴ-ը գտել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում ամրագրված «հրապարակային քննության» իրավունքից անհրաժեշտաբար բխում է «բանավոր քննությամբ» իրավունքը:<sup>21</sup> Այն դեպքերում, երբ տվյալ դատական ատյանը առաջին և միակ ատյանն է, որը քննում է գործի թե՛ փաստական, թե՛ իրավական հարցերը, ապա բանավոր քննության իրավունքն առաջին հերթին պետք է իրականացվի այդ ատյանում:<sup>22</sup> ՄԻԵԴ-ը բազմիցս հիշեցրել է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով՝ առաջին և միակ ատյանում «հրապարակային դատաքննության» իրավունքը հանգեցնում է «բանավոր դատաքննության» իրավունքի անհրաժեշտությանը, եթե առկա չեն բացառիկ հանգամանքներ, որոնք արդարացնում են նման դատաքննության բացառումը:<sup>23</sup> ՀՀ ՎԴ-ը վարչական գործի փաստական և իրավական հարցերը քննող առաջին ատյանն է, ուստի բանավոր և հրապարակային քննության իրավունքը պետք է իրականացվի հենց ՎԴ-ում: Սակայն, ՎԴՕ-ը չի ապահովում այդ իրավունքների իրականացումը բոլոր վարչական գործերով:

### բ. Գրավոր դատաքննության ընթացակարգերը ՎԴ-ում

ՀՀ ՎԴՕ-ով նախատեսված մի շարք ընթացակարգեր չեն իրականացվում հրապարակային դատական նիստում՝ բանավոր կարգով: Մասնավորապես, դատական քննության գրավոր կարգ է սահմանված ՎԴՕ-ի 108-րդ (արագացված դատաքննություն) և 138-րդ (նորմատիվ ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը) հոդվածներով:

ՎԴՕ-ի 108-րդ հոդվածի համաձայն՝

<sup>20</sup> Ընդհանուր մեկնաբանություն թիվ 32, Մարդու իրավունքների կոմիտե, ՄԱԿ, CCPR/C/GC/32, օգոստոսի 23, 2007թ., պարբ. 28

<sup>21</sup> Salomonsson v. Sweden, ՄԻԵԴ 2002թ. նոյեմբերի 12-ի վճիռը, պարբ. 34

<sup>22</sup> Håkansson and Stureson v. Sweden, ՄԻԵԴ 1990թ. փետրվարի 21-ի վճիռը, պարբ. 64

<sup>23</sup> Miller v. Sweden, ՄԻԵԴ 2005թ. փետրվարի 8-ի վճիռը, պարբ. 29

«Արագացված դատաքննություն կիրառվում է այն դեպքերում, երբ՝

1) դիմում է ներկայացվել ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ.

2) անհրաժեշտ չէ լսել փորձագետին կամ հարցաքննել վկաներին, զննում կատարել, տալ դատական հանձնարարություններ, և եթե գործը բանավոր դատաքննության նշանակելուց հետո կողմերը գրավոր տեղեկացրել են դատարանին բանավոր ընթացակարգով դատաքննությանն իրենց չմասնակցելու մասին.

3) անհրաժեշտ չէ լսել փորձագետին կամ հարցաքննել վկաներին, զննում կատարել, տալ դատական հանձնարարություններ, և եթե կողմերը գրավոր համաձայնություն են ներկայացրել գործը բանավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ.

4) հայցն ակնհայտ հիմնավոր է.

5) հայցն ակնհայտ անհիմն է:»

ՎԴՕ-ի 138-րդ հոդվածի համաձայն՝

«Սույն օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերը դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը»:

108-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով նախատեսված հիմքն արդարացված է՝ ելնելով տվյալ տեսակի պահանջի բնույթից: Երկրորդ և երրորդ կետերով նախատեսված հիմքերը կիրառվում են այն դեպքում, երբ առկա է կողմերի գրավոր համաձայնությունը, ուստի այստեղ գործում է կողմերի համատեղ կամքը: 135-րդ հոդվածով նախատեսված գրավոր վարույթը մեծ մասամբ արդարացված է, քանի որ նորմատիվ ակտի իրավաչափության ստուգումը ենթադրում է զուտ իրավական հարցերի քննություն, որի ընթացքում դիմողին լսելու անհրաժեշտություն հիմնականում չի առաջանում: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի իմաստով խնդրահարույց են թվում ՎԴՕ-ի 108-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ և հինգերորդ կետերով նախատեսված գրավոր ընթացակարգերը՝ հայցն ակնհայտ հիմնավոր կամ անհիմն լինելու հիմքերով: Նշված երկու հիմքերով ՀՀ օրենսդիրը ՎԴ-ին տրամադրել է հայեցողական լիազորություններ: Ուստի, անհրաժեշտ է պարզել, թե որքանով է նշված երկու դեպքերում հրապարակային և բանավոր դատաքննության իրավունքի շրջանցումը համապատասխանում ՄԻԵԿ 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի պահանջներին:

#### **գ. Եվրոպական կոնվենցիայի պահանջները և ՄԻԵԴ դիրքորոշումը**

Բանավոր և հրապարակային քննության իրավունքը բացարձակ չէ: Համաձայն վերջերս ՄԻԵԴ-ի կողմից վերահաստատված իրավական դիրքորոշման՝ բանավոր և հրապարակային դատաքննության իրավունքը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում, օրինակ, երբ վա-

րոյթը վերաբերում է բացառապես իրավական կամ չափազանց տեխնիկական խնդիրների:<sup>24</sup>

Այսպիսով, ՄԻԵԿ 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության տեսանկյունից՝ բանավոր և հրապարակային քննության իրավունքի սահմանափակումը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ քննության առարկան զուտ իրավական կամ չափազանց տեխնիկական հարց է: Այստեղից հետևում է, որ ՎԴ ներկայացրած հայցի հիմնավոր կամ անհիմն լինելը չի կարող արդարացնել գրավոր դատաքննության իրականացումը: Հնարավոր են վարչական գործեր, որոնց բնույթը խիստ տեխնիկական կամ զուտ իրավական չէ, սակայն ՎԴ-ը գտնում է, որ հայցն ակնհայտ հիմնավոր/անհիմն է, ուստի կիրառում է գրավոր ընթացակարգ: Նման դեպքերում ՄԻԵԿ-ի պահանջը կհամարվի խախտված:

### Օրինակ՝

Է. կազմակերպությունն ընդդեմ ՀՀ Կառավարության, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, ՀՀ Բնապահպանության նախարարության գործով Ղատարանը, առանց կողմերից որևէ մեկին լսելու, առանց կողմերի կարծիքը կամ դիրքորոշումը ճշտելու, դատական նիստը բացելուց և ներկայացուցիչների ինքնությունը ստուգելուց անմիջապես հետո հայտարարեց գործն արագացված կարգով քննելու իր որոշման և վճռի հրապարակման օրվա և ժամի վերաբերյալ: Կողմերին որևէ հնարավորություն չտրվեց արտահայտելու իրենց տեսակետը:

### Առաջարկ

Փոփոխել ՎԴՕ-ի 108-րդ հոդվածը: Նշված դրույթներում պետք է նախատեսել հետևյալ սկզբունքները.

Այն դեպքերում, երբ վարչական գործի քննության առարկան վերաբերում է խիստ տեխնիկական կամ զուտ իրավական խնդրի, և եթե հայցվորին լսելը չի կարող նպաստել գործի հանգամանքների պարզաբանմանը, ապա ՎԴ-ը կարող է որոշում կայացնել արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ: Ղատարանի որոշումը պետք է լինի հիմնավորված՝ գործի փաստական հանգամանքներով:

### **դ. Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը**

ՎԴՕ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններն իրավունք ունեն դիմելու ՎԴ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով: Նման պահանջները ՎԴ-ը քննում է վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա՝ ՎԴՕ-ի

<sup>24</sup> Koottummel v. Austria, ՄԻԵԿ 2009թ. դեկտեմբերի 10-ի վճիռը, պարբ. 19: Steu նաև՝ Schuler-Zraggen v. Switzerland գործով ՄԻԵԿ 1993թ. հունիսի 24-ի վճիռը, պարբ. 58, Jurisic and Collegium Mehrerau v. Austria գործով ՄԻԵԿ 2007թ. հուլիսի 27-ի վճիռը, պարբ. 65, 66, Coorplan-Jenni GmbH and Hascic v. Austria գործով ՄԻԵԿ 2006թ. հուլիսի 27-ի վճիռը, պարբ. 63, 64:

26-րդ Գլխի հատուկ կանոնների համաձայն: ՎՂՕ-ը չի արգելում գրավոր քննության իրականացումը վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով՝ վարչական մարմնի հայցադիմումի ակնհայտ հիմնավոր լինելու հիմքով: Գրավոր քննության իրականացման համար բացառություն կարող են լինել միայն այն դեպքերը, երբ պատասխանող ֆիզիկական կամ իրավաբանական անձը գրավոր ձևով, կամավոր ՎՂ-ին տեղեկացրել է բանավոր վարույթին չմասնակցելու մասին: ՎՂՕ-ի 26-րդ Գլխով սահմանված գործերով գրավոր քննություն իրականացնելու այլ իրավաչափ հիմք չի կարող լինել, քան պատասխանողի անվիճելի համաձայնությունը, քանի որ նշված Գլխով քննվում է անձին պատասխանատվության ենթարկելու հարցը, ինչը ՄԻԵԴ-ի ինքնավար մեկնաբանության համաձայն կարող է դիտվել որպես քրեական պատասխանատվության կիրառում: Ուստի, վարչական պատասխանատվությանն առնչվող գործերի քննության ժամանակ անձը պետք է ունենա գործի քննությանը ներկա գտնվելու և արտահայտվելու իրավունք, քանի դեռ կամավոր չի հրաժարվել այդ իրավունքից:

### **Առաջարկ**

ՎՂՕ-ի 153-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով, որը ՎՂ-ին կարգելի վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով իրականացնել գրավոր քննություն՝ վարչական մարմնի հայցադիմումի ակնհայտ հիմնավոր լինելու պատճառաբանությամբ, եթե առկա չէ պատասխանողի կամավոր համաձայնությունը:

### **ե. ՎՂ-ի որոշման պատճառաբանվածությունը և դրա բողոքարկումը**

Գրավոր քննության ընթացակարգ կիրառելու մասին ՎՂ-ի որոշումը պետք է լինի պատճառաբանված: Հղումը ՎՂՕ-ի 108-րդ հոդվածին կամ նշումը, որ հայցն ակնհայտ հիմնավոր կամ անհիմն է՝ առանց հիմնավորելու այդ պնդումները կոնկրետ փաստական հանգամանքներով, բավարար չեն բանավոր և հրապարակային դատաքննության իրավունքը սահմանափակելու համար: Որոշման մեջ պետք է հստակ նշվի, թե որ փաստական հանգամանքներն են դատավորին հանգեցրել գրավոր քննություն անցկացնելու անհրաժեշտության եզրահանգմանը: Մասնավորապես, դատարանը պետք է հիմնավորի, որ հայցվորի/դիմողի մասնակցությունը չի կարող էական նշանակություն ունենալ գործի հանգամանքները պարզաբանելու հարցում, քանի որ քննության ենթակա հարցերը խիստ տեխնիկական կամ իրավաբանական բնույթ ունեն:

Ավելին, քանի որ բանավոր և հրապարակային քննության իրավունքն արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղկացուցիչ մասն է, ապա այդ իրավունքը սահմանափակող դատական ակտը պետք է ենթակա լինի վերանայման՝ դրա իրավաչափությունը և պատճառաբանված լինելը ստուգելու նպատակով:

## Առաջարկ

Լրացնել ՎՂՕ-ի 125-րդ հոդվածի առաջին մասը 11-րդ կետով, որով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին կդասվի նաև ՎՂ-ի կողմից՝ ՎՂՕ-ի 108-րդ հոդվածով նախատեսված հիմքերով գրավոր քննություն անցկացնելու վերաբերյալ կայացրած դատական ակտը:

### **զ. Վարչական գործերի քննության հրապարակայնության այլ խնդիրները**

Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավունքի աղբյուրները հստակ նորմ են պարունակում, որի համաձայն՝ պետությունները պարտավոր են ապահովել դատական գործերի քննության հրապարակայնությունը: Դատաքննության հրապարակայնությունն այդ քննության արդարությունն ապահովելու երաշխիքներից է, որը երաշխավորում է, որ դատական գործերի քննությունն իրականացվի հասարակական հսկողության ներքո:<sup>25</sup> Բոլոր դատական գործերը, որտեղ որոշվում են անձանց իրավունքները, որպես կանոն պետք է քննվեն բանավոր և հրապարակային կարգով:<sup>26</sup> Վարչական դատավարությունը պետք է հրապարակային լինի, որպեսզի քաղաքացիները պաշտպանված լինեն գաղտնի, կամայական դատական մոտեցումներից:<sup>27</sup> Ե՛վ գրավոր, և՛ բանավոր վարչական ընթացակարգերը պետք է հրապարակային լինեն: Հասարակության բոլոր անդամները պետք է կարողանան հետևել դատաքննությանը, մասնավորապես՝ դրա ընթացքին և վարման կարգին:<sup>28</sup> Լրատվամիջոցներին և հասարակության անդամներին կարելի է արգելել ներկա գտնվել դատաքննությանը կամ դրա մի մասին՝ հետապնդելով մի շարք իրավաչափ նպատակներ, ինչպիսիք են մասնավոր անձանց կամ արդարադատության շահերը, հասարակական կարգը, հասարակական բարոյականությունը, ազգային անվտանգությունը և այլն:<sup>29</sup>

Նույնիսկ այն դեպքերում, երբ հասարակության անդամներին արգելվում է ներկա գտնվել դատական նիստին, ապա դատարանի վճիռը, ներառյալ էական գնահատականները, ապացույցները և իրավական պատճառաբանությունը հրապարակվում են դռնբաց նիստում:<sup>30</sup>

Հայաստանի Սահմանադրության 19-րդ հոդվածը երաշխավորում է հրապարակային դատաքննության իրավունքը, որը կարող է սահմանափակվել՝ հասարակական կարգի, ազգային անվտանգության, բարոյականության, արդարադատության և մասնավոր անձանց շահերից ելնելով: Սա-

<sup>25</sup> Piroglu and Karakaya v. Turkey, ՄԻԵԴ 2008թ. մարտի 18-ի վճիռը, պարբ. 35

<sup>26</sup> Ընդհանուր մեկնաբանություն N 32, Դատարանների առջև հավասարության և արդար քննության իրավունքի մասին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, CCPR/C/GC/32, 2007թ. օգոստոսի 23, պարբ. 28

<sup>27</sup> Բացատրական հուշագիր, Առաջարկ թիվ (2004)20 Վարչարարության նկատմամբ դատական վերահսկողության մասին, Նախարարների կոմիտե, Եվրոպայի խորհուրդ, 2004թ. դեկտեմբերի 15, պարբ. 74

<sup>28</sup> Նույն տեղում, պարբ. 75

<sup>29</sup> Հոդված 6(1), ՄԻԵԿ; հոդված 14(1), ԲԲԻՄԴ

<sup>30</sup> Կետ 2, պարբ. 29. Տես նաև՝ կետ 3, Սկզբունք 4.գ.

կայն ՎԴՕ-ը չի կարգավորում հրապարակային դատաքննության իրավունքի իրականացումը: ՎԴՕ-ի 2-րդ Գլուխը, որը վերնագրված է Վարչական դատավարության սկզբունքները, չի սահմանում ՎԴ-ում գործերի քննության հրապարակայնության սկզբունքը: ՎԴՕ-ը նաև չի ամրագրում իրավական նորմ՝ համաձայն որի ՎԴ-ի գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակվում են դռնբաց դատական նիստում: Դիտարկումները ցույց են տվել, որ այս օրենսդրական բացթողումների պատճառով դատական պրակտիկայում հանդիպում են զանազան խախտումներ:

Հայցադիմումն ընդունելուց հետո ՎԴ-ը ձեռնամուխ է լինում գործը դատաքննությանը նախապատրաստելուն:<sup>31</sup> Ղատավորը կարող է հրավիրել նախնական դատական նիստ:<sup>32</sup> ՎԴՕ-ը չի կարգավորում այն հարցը, թե արդյոք նախնական նիստն իրականացվում է դռնբաց, թե դռնփակ կարգով: Ղատաքննությունը ՎԴ-ում իրականացնում է դատական նիստերի միջոցով:<sup>33</sup> Սակայն, հստակ չէ, թե արդյոք (և որ դեպքերում) այդ նիստերն իրականացվում են դռնբաց կարգով: ՎԴՕ-ը չի սահմանում այն հիմքերը, որի հիման վրա ՎԴ-ը կարող է իրավաչափորեն սահմանափակել հրապարակային դատաքննության իրավունքը: ՎԴՕ-ում նշված մի շարք դեպքերում ՎԴ-ը կարող է քննել վարչական գործերն արագացված դատաքննության կարգով,<sup>34</sup> որն իրենից ենթադրում է քննության գրավոր ձև՝ առանց դռնբաց դատական նիստ հրավիրելու:

Բոլոր դիտարկված գործերը, բացառությամբ մեկի, անց են կացվել դռնբաց դատական նիստում: 339 գործով տարածքի չափերը բավարար էին դատական նիստին ներկա գտնվելու ցանկության հայտնած անձանց տեղավորելու համար, մինչդեռ 14 գործով չափերը բավարար չէին: Բոլոր դատական գործերին ապահովվել է դիտորդների անխափան մուտքը դատական նիստերի դահլիճ: Դատական նիստերի ժամանակ հիմնականում լսելի է եղել դատավորի ձայնը: Այնուամենայնիվ, 27 դեպքում դիտորդները բացասական պատասխան են տվել այդ հարցին, իսկ 14 գործով դատավորի խոսքը հասկանալի չի եղել ներկա գտնվող անձանց համար:

Մի շարք դիտարկված գործերով դիտորդներն արձանագրել են, որ ՎԴ-ի վերջնական դատական ակտը չի հրապարակվել դռնբաց դատական նիստում:<sup>35</sup>

## Օրինակներ՝

Հայցվորի ներկայացուցիչը դիտորդներին տեղեկացրել է, որ դատարանը մասնակի բավարարել է վարչական հայցը, սակայն վճռի հրապարակում տեղի չի ունեցել:<sup>36</sup>

Համաձայն դատական նիստի քարտուղարի բացատրության՝ դատարանի վճիռը չի հրապարակվել, քանի որ դատարանի տեխնիկական համակարգում առկա են եղել անսարքություններ:<sup>37</sup>

<sup>31</sup> Հոդված 82, ՎԴՕ

<sup>32</sup> Նույն տեղում, հոդված 86, ՎԴՕ

<sup>33</sup> Նույն տեղում, հոդված 91

<sup>34</sup> Նույն տեղում, հոդված 108

<sup>35</sup> Ձեկույցներ թիվ 28, 31, 33, 43, 57, 65, 68, 70, 71

<sup>36</sup> Ձեկույց թիվ 28

<sup>37</sup> Ձեկույց թիվ 43

Դիտարկված գործի ավարտից հետո դիտորդը նախագահող դատավորին հարցրել է վերջնական դատական ակտի հրապարակման մասին: Դատավորը պատասխանել է. «Կողմերը բացակայում են, ու՞մ համար հրապարակեն վճիռը, ի՞նչ եք ուզում ինձանից:»<sup>38</sup>

Գրանցվել են դեպքեր, երբ վճիռը հրապարակվել է այնպիսի օր և ժամանակ, որը հայտնի չի եղել կողմերին, ինչը վերջիններիս գրկել է ներկա գտնվել իրենց գործով վճռի հրապարակմանը:<sup>39</sup> ՎԴ-ի վճիռները հրապարկումից անմիջապես հետո մատչելի չեն հասարակության անդամներին նաև ՎԴ-ի գրասենյակի միջոցով: Դրանց հնարավոր է ծանոթանալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Ընդ որում, այդ որոշումներին ծանոթանալու համար յուրաքանչյուր անձ պարտավոր է վճարել պետական տուրք, որի գումարի չափը բավականին մեծ է և ինքնին սահմանափակում է դրանց ծանոթանալու հնարավորությունը:

ՄԻԵԴ-ը գտել է, որ, չնայած թվում է, թե 6(1)-րդ հոդվածի տեքստը պահանջում է, որպեսզի դատարանը վճիռը հրապարակի դռնբաց դատական նիստում, վճիռը հրապարակային դարձնելու այլ միջոցները նույնպես կարող են համատեղելի լինել նշված հոդվածի հետ:<sup>40</sup> ՎԴՕ-ը վճռի հրապարակման որևէ ձև չի սահմանում, ինչի հետևանքով դատական պրակտիկան բազմազան է և ոչ հետևողական: Ի տարբերություն ՎԴՕ-ի՝ ՔԴՕ-ի 8-րդ և 9-րդ հոդվածները հստակ սահմանում են, որ գործերը քննվում են դռնբաց նիստում՝ բանավոր կարգով: 8-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը կարող է հրապարակել երեխայի որդեգրման վերաբերյալ վճիռը միայն որդեգրող կողմի համաձայնությամբ: Մյուս բոլոր դեպքերում վերջնական դատական ակտերը հրապարակվում են դռնբաց դատական նիստում: Այսինքն, ՔԴՕ-ը սահմանում է թե՛ հիմնական սկզբունքը, և թե՛ դրա սահմանափակման դեպքերը: ՎԴՕ-ը պետք է լրացնել մի շարք նորմերով, որոնք կապահովեն հրապարակայնության սկզբունքի իրականացումը վարչական դատավարությունում:

Ուսումնասիրված մի շարք գործերով ՎԴ-ի դատավորները դիտորդներին արգելել են ձայնագրել դռնբաց դատական նիստում իրականացվող քննությունը: Մի շարք դատավորներ պարբերաբար արգելել են դիտորդներին ձայնագրել դատական նիստերը՝ առանց որևէ պատճառաբանության:<sup>41</sup> ՎԴ-ի դատավորն արգելեց ներկաներից մեկին ձայնագրել վճռի հրապարակումը դռնբաց դատական նիստում:<sup>42</sup> Իսկ ՎԴ-ի մեկ այլ դատավոր նիստերը ձայնագրելու մշտական արգելք է սահմանել դիտորդների համար՝ պատճառաբանելով, որ ՎԴՕ-ում նիստերի ընթացքում ձայնագրում իրականացնելու հարցը կարգավորված չէ, և որ այդ հարցը լուծվել է հօգուտ արգելման՝ գերմանացիների կողմից կազմակերպված սեմինարի շրջանակներում:<sup>43</sup> Ճիշտ է, ՎԴՕ-ը ուղղակիորեն չի պարունակում այս հարցի կարգավորումը, սակայն դատավորը պարտավոր էր հիմնավորել իր որոշումը ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և ՄԻԵԿ 6(1)-րդ հոդվածով սահմանված սկզբունքների լույսի ներքո: Սեմինարի շրջանակներում հնչեցված

<sup>38</sup> Ձեկույց թիվ 68

<sup>39</sup> Ձեկույց թիվ 31

<sup>40</sup> Moser v. Austria, ՄԻԵԴ 2006թ. սեպտեմբերի 21-ի վճիռը, պարբ. 101

<sup>41</sup> Ձեկույց No. 70, տես նաև՝ Ձեկույց թիվ X

<sup>42</sup> Ձեկույց No. 48. Նաև, ի թիվս այլոց, Ձեկույցներ No. 54, 97, 103, 121:

<sup>43</sup> Ձեկույց No. 2



կարծիքները չեն կարող հիմք հանդիսանալ դատավորի կողմից անձի իրավունքների սահմանափակման համար: Ավելին, հրապարակայնության սկզբունքի նման սահմանափակումը չի բավարարում միջամտության «օրենքով սահմանված կարգով» չափանիշին:

Նիստի ընթացքը ձայնագրելու խնդրին պարբերաբար անդրադարձել են ՎԴ-ում ծառայող դատական կարգադրիչները: Մասնավորապես, որոշ դեպքերում կարգադրիչները վերցրել են դիտորդի ձայնագրող սարքը և հեռացել նիստերի դահլիճից կամ դիտորդից պահանջել են լքել նիստերի դահլիճը: Նշված գործողությունները կատարվել են դատավորի առջև՝ առանց որևէ իրավական հիմքի մատնանշման: Եղել են դեպքեր, երբ կարգադրիչը պահանջել է դադարեցնել նիստի ձայնագրումը նույնիսկ այն դեպքում, երբ դիտորդը նրան տեղեկացրել է, որ ձայնագրումը թույլատրված է նիստը նախագահող դատավորի կողմից:<sup>44</sup>

Դատական նիստերը հրապարակային վարելու իմաստն այն է, ի թիվս այլոց, որ հասարակության, լրատվամիջոցների ներկայացուցիչների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների անդամները և այլ հետաքրքրված անձինք կարող են ազատորեն ծանոթանալ գործի քննության ընթացքին: Նշված անձինք կարող են հեռացվել նիստերի դահլիճից՝ ՀՀ Սահմանադրության և ՄԻԵԿ դրույթների հիման վրա: Սակայն, եթե նիստը նախագահող դատավորը դռնփակ նիստում գործը քննելու որոշում չի կայացրել, ապա դա նշանակում է, որ դատավորը չի տեսել դռնփակ նիստ անցկացնելու անհրաժեշտ հիմքերը: Նման իրավիճակում, նիստերի ձայնագրման արգելքը՝ առանց որևէ իրավական հիմնավորման, անթույլատրելի է: Վերջապես, հրապարակայնությունը սկզբունք է, որի պահպանման դեպքում անձը դառնում է համապատասխան տեղեկության կրողը, իսկ գրառումներն ու ձայնագրառումներն ընդամենը այդ տեղեկության նյութականացման ձևեր են: Այս առումով պետք է նշել, որ ՎԴՕ-ի 117-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ վարչական դատավարության ընթացքում դատական նիստի արձանագրման ձևի և բովանդակության, այն վարելու կարգի, արձանագրության վերաբերյալ դիտողություններ ներկայացնելու նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

Դիտարկումների ընթացքում արձանագրվել են հրապարակայնության իրավունքի էությունը սահմանափակող այլ գործողություններ ևս: Օրինակ, արձանագրվել են դեպքեր, երբ ձայնագրառումներ չեն իրականացվել և դատական պրոցեսն ընթացել է երկխոսությունների տեսքով:<sup>45</sup> Կամ մինչև ձայնագրառում սկսելը դատարանը պարզել է, թե կողմերն ինչ ասելիքներ ունեն, ինչ միջնորդություններ ունեն, իսկ այնուհետև «բաշխել դերերն» ու ցուցումներ տվել կատարվելիք գործողությունների մասին:<sup>46</sup> Բացի այդ, դատական գործերի 95 տոկոսի դեպքում, դատավարական փաստթղթերը կամ ապացույցները չեն հրապարակվել՝ կողմերի համաձայնությամբ: Դատավորներն ընդամենը ընթերցել են փաստթղթերի անվանումները: 40 տոկոս գործերով դատավարության մասնակիցներն անգամ հանդես չեն եկել բանավոր խոսքերով:

<sup>44</sup> Ի թիվս այլոց, Ձեկույց No. 213, 77, 96:

<sup>45</sup> Ի թիվս այլոց, Ձեկույց No. 39, 86, 92, 95

<sup>46</sup> Ի թիվս այլոց, Ձեկույց No. 95, 39:

## Օրինակ՝

Ա. ընկերությունն ընդդեմ հարկային տեսչության գործով փաստաթղթերը չհրապարակվեցին, քանի որ կողմերը կարծիք հայտնեցին, որ ծանոթ են դրանց բովանդակությանը: Նմանապես, ՊԵԿ ընդդեմ Գ. ընկերության գործով հայցվորը և պատասխանողը հանդես չեկան խոսքով՝ խնդրելով դատարանին հիմք ընդունել գրավոր տեսքով ներկայացված խոսքի տեքստը:

Գործերի քննության նման կարգը էականորեն վնասում է դատական քննության հրապարակայնությանը և սահմանափակում է հասարակության կողմից դատարանների գործունեության նկատմամբ լիարժեք վերահսկողության իրականացման հնարավորությունները:

## Առաջարկ

Ապահովել ՎԴ-ի բոլոր վճիռների հրապարակումը դռնբաց դատական նիստում:

Հրապարակայնության սկզբունքի ցանկացած սահմանափակման վերաբերյալ պետք է լինի դատարանի որոշում՝ հիմնված յուրաքանչյուր անհատական գործի հանգամանքների ուսումնասիրության և գնահատականի վրա: Այն պետք է լինի պատճառաբանված և ենթակա լինի բողոքարկման՝ ՎԴ-ի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված կարգով:

ՎԴՕ-ում կատարել լրացում, որը կպարունակի ՎԴ-ի դռնբաց նիստերի ձայնագրման խնդրի իրավական կարգավորումը, որը պետք է հիմնված լինի հրապարակայնության սկզբունքի լիարժեք հարգման և այն կանխադրույթի վրա, որ ձայնագրառումը տեղեկությունների նյութականացման ձև է: Լրացումը պետք է հստակ սահմանի, որ դռնբաց դատական նիստի ընթացքում ձայնագրման հարցի կարգավորման պատասխանատուն նիստը նախագահող դատավորն է, այլ ոչ թե դատական կարգադրիչը:

## ԳԼՈՒԽ 6. ՎԴ-ի դատական ակտերի հարկադիր կատարումը

Դատարան դիմելու իրավունքը, որը պաշտպանված է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, անհրաժեշտ է կլինի, եթե պայմանավորվող Պետության ներպետական իրավական համակարգը թույլ է տալիս, որ վերջնական և պարտադիր դատական որոշումն անկատար մնա ի վնաս մի կողմի:<sup>47</sup> Ներպետական դատավճիռների չկատարումը հանգեցրել է ՄԻԵԿ-ի 6(1)-րդ հոդվածի բազմաթիվ խախտումների:<sup>48</sup>

Հայաստանի Հանրապետությունում վճիռների կատարումը խնդրահարույց է: Այդ խնդիրը հատկապես ակնհայտ է վարչական գործերով՝ պետական մարմինների դեմ կայացված վճիռների կատարման առնչությամբ: Դա պայմանավորված է նրանով, որ պետական մարմինը, որը մեկ անգամ տվյալ հարցով կայացրել է որևէ որոշում, հակված է նույն որոշումը կայացնել նույնիսկ դատական ակտից հետո, այսինքն, որևէ կերպ ընկալելի չէ դատարանների դերը և նրանց կողմից ընդունվող ակտերի նշանակությունը պետական մարմինների շրջանում: Երկրորդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ վճիռները կատարվում են գործադիր իշխանության համակարգում գործող դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, որը պետական մարմիններին վճիռների կատարումը հարկադրելիս չի օգտագործում բոլոր լծակները վճիռի կատարումն ապահովելու համար:

Վճիռների կատարման առնչությամբ ծագած խնդիրները տարբեր են գումարի բռնագանձման պահանջների վերաբերյալ գործերով և պետական մարմիններին որոշակի գործողություններ կատարելուն հարկադրող վճիռների կատարման գործերով:

### ա. Վարչական դատարանի վճիռների կատարման հետ կապված հիմնախնդիրներ՝

#### 1. Գումարների բռնագանձման վճիռների կապակցությամբ

Որոշ դեպքերում դատական ակտը կարող է գործադիր իշխանության համար առաջացնել մասնավոր անձին որոշակի գումար վճարելու պարտավորություն: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կարծիքով՝ «վարչական մարմինների կողմից գումար վճարելու պարտավորություն առաջացնող դատական ակտերը չկատարելու դեպքում անդամ երկրները պետք է նաև դիտարկեն օրենքով սահմանված ժամկետներում վարչական մարմինների սեփականությունն առգրավելու հնարավորություն նախատեսելու հարցը»:<sup>49</sup> Ավելին, «վարչական մարմնի կողմից դատական ակտը չկատարելու դեպքում պետք է նախատեսվի այդ ակտի կատարումն

<sup>47</sup> Hornsby v. Greece, ՄԻԵԿ 1997թ. մարտի 19-ի վճիռը, պարբ. 40

<sup>48</sup> Ի թիվս այլ աղբյուրների՝ Yuri Nikolaevich v. Ukraine, ՄԻԵԿ 2009թ. հոկտեմբերի 15-ի վճիռը, պարբ. 56-57

<sup>49</sup> Վարչական իրավունքի բնագավառում վարչական և դատական որոշումների հարկադիր կատարման մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 2003(16) առաջարկություն, 2003թ. սեպտեմբերի 9, սկզբունք 2.դ

ապահովող համապատասխան ընթացակարգ, մասնավորապես, դատարանի կարգադրության կամ տուգանքի միջոցով: Անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ վարչական մարմինները պատասխանատվություն կրեն այն դեպքերում, երբ նրանք հրաժարվում են կատարել դատական ակտերը կամ անտեսում են դրանք: Դատական ակտերի կատարման համար պատասխանատու պետական պաշտոնյաները կարող են անձնական պատասխանատվություն կրել՝ ենթարկվելով կարգապահական, քաղաքացիական կամ քրեական վարույթների, եթե նրանք թերացել են կատարել դրանք:<sup>50</sup> Օրինակ՝ Հայաստանի օրենսդրությունը կարող է այնպիսի դրույթ սահմանել, համաձայն որի՝ եթե դատական ակտի հիման վրա քաղաքացիական ծառայողը պարտավոր է կատարել որոշակի քայլեր, սակայն չի կատարում, ապա նա կարող է կարգապահական վարույթի արդյունքում հեռացվել իր պաշտոնից: Պետական բյուջեի համար պատասխանատու մարմինները պետք է երաշխավորեն, որ պետական միջոցների սակավությունը որպես արդարացում չմատնանշվի այն դատական ակտերը չկատարելու համար, որոնց համաձայն որոշակի պետական մարմիններ պետք է վճարեն որոշակի գումար: Այս նպատակի համար միշտ պետք է հատկացվեն պահուստային ֆոնդեր:

Եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա տվյալ գումարն ամբողջությամբ, որպես բյուջետային ծախս, ուղղակիորեն նախատեսված է տվյալ տարվա (կատարողական թերթը հարկադիր կատարողի կողմից ներկայացվելու տարին) պետական բյուջեի մասին օրենքում (եթե տվյալ գումարի մի մասը որպես բյուջետային ծախս նախատեսված է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում, ապա մուրհակը չի տրամադրվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված գումարի չափով) կամ եթե կատարողական թերթը ներկայացվել է նախորդ տարվա վճռի հիման վրա և արդեն իսկ նախատեսվել է տվյալ տարվա բյուջետային ծախսերի կազմում, ապա վճիռը կատարվում է ընդհանուր ընթացակարգով. կատարողական թերթի հիման վրա բռնագանձվում է հոգուտ պարտատիրոջ:

ՀՀ կառավարության 07.08.2000թ.-ի «Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 436 որոշումը կարգավորում է այն դեպքերը, երբ պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների կապակցությամբ տրվում է փոխանցելի մուրհակ՝ 360 օր մարման ժամկետով:

Մուրհակները տրվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումարի բռնագանձման համար դատարանի կողմից տրված կատարողական թերթը և հարկադիր կատարողի համապատասխան որոշումը նախարարությունում ուղղակիորեն կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով ստանալուց հետո: Մուրհակը տրվում է, եթե կատարողական թերթի ստացման օրվանից սկսած 20-րդ օրվա դրությամբ բյուջետային ծախսերը կարգավորող օրենքով սահմանված առաջնահերթ ծախսերի իրականացման կապակցությամբ անհնար է կատարել տվյալ վճարումը:

---

<sup>50</sup> Տես նույն տեղում:

Սակայն մուրհակներ չեն տրամադրվում այն դեպքում, երբ համապատասխան պետական հիմնարկի կամ սահմանված կարգով բանկային հաշվի բացման թույլտվություն ստացած բյուջետային հիմնարկի արտաբյուջետային հաշվում (բանկային կամ գանձապետական) առկա է արգելանքի վերցված դրամական միջոց և արգելված չէ բռնագանձումը տարածել տվյալ գումարի վրա:

Առավել հաճախ խնդիրն առաջանում է հետևյալ իրավիճակում. հարկատուն, որի հանդեպ կատարված ստուգման արդյունքում կազմվել է ստուգման ակտ, վճարում է ակտով սահմանված տուգանքի և մյուս գումարները, այնուհետև որոշում է վիճարկել դատարան:

Երբ ակտը դատարանի վճռով անվավեր է ճանաչվում և վճարված գումարը ենթակա է լինում վերադարձման, հարկատուները կանգնում են բավականին լուրջ խնդրի առջև: Համապատասխան հարկային մարմինը խուսափում է վերադարձնել գումարները՝ այն հաշվանցելով հարկատուի մոտ առկա այլ պարտավորությունների հաշվին, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ձևակերպելով որպես գերավճար: Իսկ այն դեպքերում, երբ անձին տրվում է մուրհակ, այդ գումարներն անձը ստանում է հաջորդ բյուջետային տարում: Այսինքն, այս դեպքում վճռի կատարումը կարող է բավականին ձգձգվել: Ընդ որում, Եվրոպական դատարանի կողմից տրված մեկնաբանության համաձայն որևէ նշանակություն չունի պետության՝ տվյալ պահին միջոցներ ունենալու կամ այլ հանգամանքներ, վճիռները պետք է կատարվեն առանց ձգձգումների:

2. Գործողություն կատարելուն և վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու վճիռների կապակցությամբ

Եթե գումարի բռնագանձման պահանջներով վճիռների չկատարումը որոշ դեպքերում կարող է օբյեկտիվ պատճառներով պայմանավորված լինել, ապա անհասկանալի է, թե ինչու է առկա նման խնդիր որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու վճիռների կապակցությամբ:

Պրակտիկայում մեծ թիվ են կազմում այն գործերը, երբ պետական մարմինները «սկզբունքորեն» հրաժարվում են կատարել գործողություն կատարելուն պարտավորեցնելու վճիռները:

## Օրինակ 1

Ա. քաղաքացին դիմել է կադաստրի ստորաբաժանում իրավունքի պետական գրանցում կատարելու պահանջով: Կադաստրից ստացել է մերժում առ այն, որ ներկայացված չէ հողամասի հատակագիծը: ՀՀ ՎԴ-ը բավարարել է քաղաքացու հայցը՝ անօրինական է համարել կադաստրի ստորաբաժանման մերժումը և վճռել է պարտավորեցնել գրանցել իրավունքը:

Քաղաքացին ներկայացրել է կատարողական թերթը հարկադիր կատարման: Կադաստրի ստորաբաժանումը հարկադիր կատարողին ներկայացնում է նույն հիմքով մերժում՝ պատճառաբանելով, որ չի կարող գրանցել իրավունքը, քանի որ ներկայացված չէ հատակագիծը:

## Օրինակ 2

Կադաստրը մերժել է իրավունքների գրանցումը՝ պատճառաբանելով, որ տվյալ հասցեում առկա են այլ օգտագործողներ: Կրկին վճիռը հարկադիր կատարման ներկայացնելուց հետո կադաստրի համապատասխան ստորաբաժանման կողմից հարկադիր կատարողին տրվել է մերժում առայն, որ այդ հասցեի սեփականատերերի և օգտագործողների միջև առկա է վեճ:

## Օրինակ 3

ՀՀ ԿԱՊԵԿ նախագահի հրամաններով Ա. և Բ. քաղաքացիներն ազատվել են աշխատանքից: Վերջիններս դիմել են դատարան: Դատարանը հրամանները ճանաչել է անվավեր, պարտավորեցրել է վերականգնել աշխատանքում, ինչպես նաև վճարել պարապուրդի դիմաց: Մինչ օրս ՎԴ-ի ակտերը ի կատար չեն ածվել:

Նմանատիպ իրավիճակները բազմաթիվ են, հատկապես պետական մարմիններից կադաստրի համապատասխան ստորաբաժանումների, Պետական եկամուտների կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի դեպքում:

## Օրինակ 4

Երևանի քաղաքապետի որոշումը՝ շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ քաղաքացու կողմից վիճարկվել է ՀՀ ՎԴ-ում: Վարչական դատարանը հայցը բավարարել է, որից հետո Երևանի քաղաքապետը կայացրել է որոշում իր որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, այսինքն, վճռի պահանջները կատարել է: Սակայն անմիջապես հաջորդ օրը կրկին կայացրել է որոշում շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Այս անգամ ևս որոշումը վիճարկվել է, և հայցը բավարարվել է: Այսինքն, վճռի պահանջները ձևականորեն կատարելը, այնուհետև կրկին նույն որոշումը կայացնելը վկայում են դատական իշխանության և վճիռների հանդեպ հարգանքի բացակայության և դրանց կատարումից խուսափելու նախատրամադրվածության մասին: Ընդ որում, այս հիմնախնդիրը հստակորեն գիտակցվում է նաև դատարանի կողմից, որը չունի հակազդելու բավարար միջոցներ ու հնարավորություններ:

## **բ. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության բարեփոխման անհրաժեշտությունը**

### Օրինակ՝

Դատական նիստի ժամանակ դատավորը ԴԱՀԿ-ի ներկայացուցչին հարցրեց, թե ինչու չեն տուգանում Երևանի քաղաքապետին, եթե քաղաքապետարանը չի կատարում վճիռը: Պատասխանողը զարմացած պատասխանեց. «Ու՞մ տուգանենք՝ քաղաքապետին»: Իսկ դատավորն ավելացրեց. «Այո: Այս մարդը՝ Ա. Հ.-ը, ձեզանից ընդամենը մի թուղթ է ուզում, իսկ դուք չեք տալիս, արդեն 5 տարի է այս գործն ընթացքի մեջ է, այնինչ, եռամսյա ժամկետում պետք է ավարտվեր»:

Այսինքն, խնդիրը կայանում է նաև հարկադիր կատարման միջոցների անարդյունավետության մեջ: Նախ, պետք է նշել, որ Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է երկամսյա ժամկետ, բացառությամբ սույն մասի երկորդ և երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի (ընդ որում այդ դեպքերից միայն պարբերական կատարման դեպքը կարող է առկա լինել վարչական գործերի դեպքում): Կատարողական գործողությունների իրականացման ժամկետում չեն հաշվարկվում կատարողական գործողություններն աճուրդային գործընթացում գտնվելու, գույքն ուղղակի վաճառքով իրացնելու, պարտապանի կամ նրա գույքի հետախուզման, ինչպես նաև կատարողական վարույթի հետաձգման կամ կասեցման ժամկետները: Օրենքի 34-րդ հոդվածի երկրորդ մասը հնարավորություն է ընձեռում կատարողական գործողությունների կատարման համար սահմանված երկամսյա ժամկետը ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի որոշմամբ երկարաձգել մինչև երկու ամիս ժամկետով:

Ամփոփելով ՀՀ օրենսդրությամբ վճիռների կատարման կապակցությամբ առկա կարգավորումը՝ կարելի է առանձնացնել վճիռների կատարման ապահովման հետևյալ մեխանիզմները.

1. Օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու, կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ»:

Պետական մարմինների կողմից վճռի պահանջները չկատարելու դեպքում, հարկադիր կատարողը կարող է համապատասխան պաշտոնատար անձի հանդեպ կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ: Սակայն այստեղ նշված չէ որքան կարող է լինել պատասխանատվության չափը (ի դեպ, եթե օրենսդիրն ի նկատի է ունեցել ՎԻՎ օրենսգրքի 206.5-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը, ապա այն կիրառելու լիազորությունը վերապահված է դատարանին):

Հոդվածը չի կարգավորում նաև, թե երբ կարող է հարկադիր կատարողը պատասխանատվության միջոցը կիրառել: Կարծում ենք, որ այդ պատասխանատվության միջոցը պետք է կիրառվի, երբ կատարողական գործողությունների երկամսյա ժամկետը լրացել է, սակայն դեռևս վճռի պահանջը կատարված չէ: Եթե նախատեսվի պատասխանատվության կիրառման կոնկրետ ժամկետ, դա կնպաստի այդ միջոցի արդյունավետության բարձրացմանը: Իսկ նման պարագայում նշված հոդվածում առկա կարգավորումը բոլորովին ինքնանպատակ է:

2. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206.5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելը կամ օրենքով նրա վրա դրված պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով: Ընդ որում, նշված հոդվածով նախատեսված

վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են առաջին ատյանի դատավորները, այսինքն, պետք է համապատասխան հարկադիր կատարողը դիմի իր որոշումը չկատարող պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու պահանջով ՎԴ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով նախատեսված վարույթի շրջանակներում:

Սակայն այստեղ ևս առկա է ժամկետների հստակեցման խնդիրը. որոշումը որքան ժամանակ չկատարելը կարող է առաջացնել պատասխանատվություն: Իրականում, թեև այս հոդվածում պատասխանատվության չափը հստակ է նշված, սակայն այն պրակտիկայում չի իրագործվում հարկադիր կատարողի կողմից պետական մարմինների պաշտոնատար անձանց առնչությամբ:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի համաձայն. «Պաշտոնատար անձի կողմից օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դիտավորությամբ չկատարելը կամ դրանց կատարմանը խոչընդոտելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Այսինքն, այն դեպքում, երբ համապատասխան վարչական մարմինը չի կատարում վճռի պահանջները, անձը կարող է այս հոդվածի հիմքով ներկայացնել հաղորդում: Այնուամենայնիվ, ինչ-ինչ պատճառներով, այս հոդվածով քրեական գործեր չեն հարուցվում պաշտոնատար անձանց դեմ, և պրակտիկայում այս մեխանիզմը անարդյունավետ է:

4. Վճռի կատարմանն օժանդակող միջոցներից են նաև շարադրվող միջոցները, որոնք կարող է իրագործել անձը և ոչ թե հարկադիր կատարողը.

-«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածը նախատեսում է. «Եթե ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ, որն առ ոչինչ է կամ անվավեր է ճանաչվել, ապա վարչական մարմինը, շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, պարտավոր է նրան հատուցել այն գույքային վնասը, որն այդ անձը կրել է ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությանը վստահելու հետևանքով, բացառությամբ սույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի»: Այսինքն, այն դեպքում, երբ վարչական մարմինը նույն հիմքով մերժում է տալիս վճռի կատարման փուլում, բնականաբար, անձի մոտ առաջանում է վնասների հատուցում պահանջելու իրավունք:

-ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է վնասների փոխհատուցման իրավունքը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Այսինքն, եթե անձը, կիմնավորի, որ վճռի ուշ կատարման կամ չկատարման արդյունքում կրել է վնասներ, ապա կարող է դիմել դատական ատյաններին՝ վնասների փոխհատուցում ստանալու պահանջով:



2010 թվականի դեկտեմբեր ամսին բավականին լուրջ փոփոխություններ կատարվեցին մի շարք իրավական ակտերում, որոնք ուղղված են դատական ակտերի կատարման ապահովմանը: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206-րդ<sup>51</sup> հոդվածը նախատեսում է պատասխանատվություն հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու համար (տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով)<sup>51</sup>:

Հետևաբար, պետական մարմինների կողմից վճռի կատարման գործընթացում խոչընդոտներ ստեղծելու դեպքում կարող են կիրառվել վարչական պատասխանատվության միջոցներ: Սակայն հարց է առաջանում, թե որ գործողությունը պետք է որակել որպես հարկադիր կատարողի պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտել, ուն կողմից և որ պահից կարող է կիրառվել պատասխանատվության միջոցը:

ՀՀ օրենսդրությունը սահմանել է քրեական պատասխանատվություն դատական ակտերը դիտավորյալ չկատարելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի համաձայն<sup>52</sup> քրեորեն պատժելի են օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (այսուհետ՝ դատական ակտ) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորյալմբ չկատարելը, կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից դիտավորյալմբ չկատարելը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների), քաղաքացու կողմից չկատարելը նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների):

Ընդ որում, քաղաքացիների կողմից՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիտավորյալմբ չկատարելը առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկից հարյուրապատիկի չափով<sup>53</sup>:

<sup>51</sup> Հոդվածում փոփոխություններ են կատարվել 22.12.2010թ. թիվ ՀՕ-10-Ն օրենքով:

<sup>52</sup> Փոփոխվել է 22.12.2010թ. թիվ ՀՕ-9-Ն օրենքով:

<sup>53</sup> ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 206<sup>9</sup> հոդված:

Փաստորեն, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, հստակեցվել են ժամկետները, որոնց լրանալուց հետո կարող է քրեական պատասխանատվության հարց առաջանալ, և սուբյեկտային կազմն է փոխվել. այժմ քրեական պատասխանատվության են ենթարկվում նաև կազմակերպության պաշտոնատար անձինք և քաղաքացիները մի տարբերությամբ, որ քաղաքացիների կողմից դիտավորությամբ դատական ակտը չկատարելը նախ առաջացնում է վարչական պատասխանատվություն, այնուհետև՝ քրեական:

Ստացվում է, որ օրենսդրորեն բոլոր հնարավորությունները տրված են վճիռների կատարումն ապահովելու համար, պարզապես հարկ է պարզել, թե որքան արդյունավետ են դրանք գործելու և արդյոք հարկադիր կատարման ծառայությունը ձեռնամուխ է լինում վճիռների կատարման ապահովման համար օրենսդրորեն երաշխավորված մեխանիզմների կիրառմանը, քանի որ վճիռների չկատարման համար պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու օրենսդրական հնարավորությունը գործում էր նաև մինչ այդ, սակայն պրակտիկայում կիրառություն չէր ստանում:

## 1. Ինստիտուցիոնալ հիմնախնդիրները

Ղատական ակտերի արդյունավետ կատարման որոշիչ գործոններից է հարկադիր կատարման ծառայության կազմակերպական ձևը: Այս հարցն առավել կարևոր է, եթե այն վերաբերում է ՎԴ-ի այն վճիռների կատարմանը, որոնք պարտականություններ են ստեղծում վարչական մարմինների համար: Ղատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին օրենքն ընդունվել է 2004 թվականին, համաձայն որի՝ Արդարադատության նախարարության համակարգում ստեղծվել է համապատասխան ծառայությունը:<sup>54</sup> Նախագահը, արդարադատության նախարարի առաջարկով, նշանակում և ազատում է Գլխավոր հարկադիր կատարողին: Նշված օրենքը ցույց է տալիս, որ Հարկադիր կատարման ծառայությունը գտնվում է գործադիր իշխանության խիստ հսկողության և ազդեցության ներքո: Այն իր կառուցվածքով անկախ և ինքնուրույն չէ, ինչն անհրաժեշտ է դատական ակտերի, հատկապես՝ վարչական դատարանի կողմից որևէ վարչական մարմնի դեմ ընդունված ակտերի հարկադիր կատարումն ապահովելու համար: Կախված լինելով գործադիրից՝ Ծառայությունը կարծես թե դժկամությամբ է որոշում այնպիսի վճիռների կատարման համար, որոնք ուղղված են «պետական շահերի» դեմ: Այս առումով իշխանության ճյուղերի և շահերի տարանջատումը պետք է ավելի արդյունավետ լինի:<sup>55</sup> Ծառայությունը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որը կերաշխավորի բավարար ինստիտուցիոնալ անկախություն՝ հնարավորություն տալով վերջինիս պարտադրել գործադիր իշխանությանը կատարել դատական ակտը: Նման համակարգի ապահովման մի շարք եղանակներ կան:

## 2. Հարկադիր կատարման անկախ մարմին

<sup>54</sup> Հոդված 2(4)

<sup>55</sup> Մարդու իրավունքների հանձնակատար պրն. Թոմաս Համմերբերգի զեկույցը (2007թ. 7-11 հոկտեմբերի), CommDH(2008)4, Ստրասբուրգ, 2008թ. 30 ապրիլի, պարբ. 38

Անկախության ապահովման եղանակներից մեկը գործադիր իշխանության ծանր ազդեցության շրջանակից դուրս անկախ Ծառայության ստեղծումն է, որը կիրականացնի դատական ակտերի հարկադիր կատարումը: Այս դեպքում Գլխավոր հարկադիր կատարողին և ավելի ցածր մակարդակի կատարողներին նշանակելու ու պաշտոնից ազատելու նորմերը վճռորոշ նշանակություն կունենան: Անկախ հարկադիր կատարման ծառայությունն այս դեպքում նման կլինի ՀՀ-ում գործող անկախ հանձնաժողովներին:

### 3. ՎԴ դատական ակտերի հարկադիր կատարում Վարչական դատարանի միջոցով

Մյուս եղանակը Ծառայությունը դատական իշխանության համակարգում տեղակայելն է: Շատ եվրոպական երկրներ (օրինակ՝ Իսպանիա, Գերմանիա) որդեգրել են հարկադիր կատարման այս համակարգը, որի շրջանակում վճռողը հարկադիր կատարում է այն, ինչ վճռել է: Հայաստանում Ծառայության ներկա կազմակերպական ձևի պայմաններում կարող են առաջ գալ այնպիսի իրավիճակներ, երբ գործադիր իշխանությունը շահագրգռված է լինում ազդել Ծառայության վրա՝ իր համար ոչ բարենպաստ որոշ վճիռներ անկատար թողնելու նպատակով: Նման իրավիճակում գործադիր իշխանությունը կարող է չցանկանալ դուրս գալ իր իսկ շահերի դեմ: Այդուհանդերձ, եթե Ծառայությունը գործի դատական իշխանության համակարգում, ապա քիչ հնարավոր է, որ դատական իշխանությունը խոչընդոտի իր իսկ կողմից ընդունված դատական ակտի կատարմանը, որովհետև դա կնվազեցնի իր իսկ հեղինակությունն ու համբավը: Նման միջավայրում դատական իշխանությունն ինքը հետամուտ կլինի բոլոր կողմերի, այդ թվում՝ գործադիր իշխանությունը ներկայացնող մարմինների կողմից իր դատական ակտերի կատարմանը: Ղատարանը կարող է անմիջականորեն իրագործել իր ընդունած որոշումները, եթե դրանց բովանդակությունը հստակ է և հետագա մեկնաբանության կարիք չունի: Սա վերաբերում է այն դատական ակտերին, որով ձանաչվում կամ հռչակվում են անհատական իրավունքներ՝ վարչական պարտականությունների հետ մեկտեղ, ինչպիսին է, օրինակ, շինարարության լիցենզիայի տրամադրումը:<sup>56</sup>

Ղատարանի որոշումների արդյունավետությունը կախված է վարչական մարմիններին կամ մասնավոր անձանց՝ դատարանի ընդունած որոշումների կատարումը պարտադրելու դատարանի լիազորությունից: Ղատարանն այդ կարող է անել տարբեր եղանակներով. օրինակ՝ գործողություններ կատարելով իրավախախտ մարմնի փոխարեն, եթե դա հնարավոր է, կամ պարտադրելով դրամական տույժեր կամ նյութական գործողություններ՝ որոշումներն ի կատար չածելու կամ որոշման կատարումն ուշացնելու համար:<sup>57</sup> Ղատարանն ինքը կարող է ընդունել նոր վարչական ակտ, որը

<sup>56</sup> Վարչական դատարանի որոշումների հարկադիր կատարում, Բարձրագույն վարչական մարմինների միջազգային ասոցիացիա, VIII վեհաժողով, Մադրիդ, 2004թ., էջ 25

<sup>57</sup> Բացատրական հուշագիր, Վարչական իրավունքի բնագավառում վարչական և դատական որոշումների հարկադիր կատարման մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ 2003(16) առաջարկություն, 2003թ. սեպտեմբերի 9, պարբ. 57

կփոխարինի նախկին վարչական որոշմանը<sup>58</sup>, եթե այն վարչական մարմինը, որը պատասխանատու է դատարանի կողմից տրված վարչական որոշման ընդունման համար, չի ընդունում այն: Օրինակ՝ եթե Վարչական դատարանը գտնում է, որ վարչական մարմինը պարտավոր է լիցենզիա տալ կամ իրավունք գրանցել, սակայն վերջինս չի կատարում այդ պահանջը սահմանված ժամկետներում, ապա դատարանը կարող է վարչական մարմնի անունից տրամադրել լիցենզիան կամ գրանցել իրավունքը: Դրանից հետո կարիք չկա, որ անհատը կրկին դիմի համապատասխան վարչական մարմնին. նա կարող է սկսել իրականացնել լիցենզավորված գործունեությունը կամ օգտվել իր գրանցված իրավունքից: Իսպանիայում դատարանները կարող են փոխարինել վարչական որոշումն իրենց սեփական միջոցներով՝ իրենց վճիռների կատարումն ապահովելու նպատակով: [Վարչական ակտերի] *stricto sensu* փոխարինումը վերահաստատվել է Իսպանիայի Սահմանադրական դատարանի կողմից:<sup>59</sup>

Որոշ երկրներում (օրինակ՝ Ուկրաինա) գործում է վճիռների կատարման նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության համակարգ: Վճիռների կատարումից հետո այդ մասին զեկույց է ներկայացվում դատարանին: Իսկ որոշակի գործողություններ վարչական մարմիններին պարտավորեցնելու վճիռների մասով սահմանված ժամկետում վճիռը չկատարելու դեպքում դատարանը կարող է կիրառել նյութական պատասխանատվության միջոցներ վճիռը չկատարող համապատասխան վարչական մարմնի ղեկավարի նկատմամբ:

Ֆրանսիայում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջները չկատարելը հանգեցնում է նրան, որ կարող է չեղյալ ճանաչվել ցանկացած որոշում, որը շեղվում է դատավորի որոշումից: Ֆրանսիայի օրենսդրության համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջները չկատարելն առաջացնում է պատասխանատվություն ոչ թե պետության համար, այլ անմիջապես տվյալ պետական մարմնի ադմինիստրացիայի վրա: Բացի այդ, Ֆրանսիայում հստակ կարգավորված է անձնական պատասխանատվության հարցը՝ յուրաքանչյուր պետական պաշտոնատար անձ իր դատական ակտը չկատարելու համար ըստ մեղքի աստիճանի կրում է անձնական պատասխանատվություն:

#### 4. Հարկադիր կատարողի մասնագիտության ազատականացումը

Հաջորդ եղանակը դա հարկադիր ծառայության մասնագիտության ազատականացումն է: Որոշ եվրոպական պետություններ (օրինակ՝ Ֆրանսիան) մասնավորեցրել են դատական ակտերի հարկադիր կատարողի ինստիտուտը, ինչը նշանակում է, որ դա մասնավոր բիզնես է, որը պետության կողմից կարգավորվում է որակավորման և լիցենզավորման նորմերի կիրառման միջոցով: Հարկադիր կատարման ինստիտուտի կազմակերպման այս եղանակը երաշխավորում է նրա անկախությունը, մրցակցությունը (թեև կոռուպցիոն ռիսկերը կարող են շարունակել մնալ բարձր մակարդակի վրա): Այնուամենայնիվ, ՀՀ ներկայիս վարչական իրավունքի պայմաններ-

<sup>58</sup> Վարչական դատարանի որոշումների հարկադիր կատարում, Բարձրագույն վարչական դատարանների միջազգային ասոցիացիա, VIII վեհաժողով, Մադրիդ, 2004թ., էջ 28

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում

րում, խնդիրներ կարող են առաջանալ մասնավոր հարկադիր կատարողների որոշումների և գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության առնչությամբ: Համաձայն Հայաստանի վարչական օրենսդրության՝ դատարանի կողմից վերանայման ենթակա են միայն պետական կամ տեղական կառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործողությունները:<sup>60</sup> Նման պայմաններում ծառայության ազատականացումը կարող է հանգեցնել այդ բնագավառում արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայությանը: Եթե կառավարությունը գտնում է, որ նման բարեփոխումը Հայաստանում դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետությունն ապահովելու լավագույն ուղին է, ապա հարկ է նաև սահմանել դրույթներ, համաձայն որոնց՝ քաղաքացիները կկարողանան վիճարկել մասնավոր հարկադիր կատարողների գործողությունները ՎԴ-ում:

### **Առաջարկ**

Բարեփոխել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կազմակերպման ձևը՝ դատական ակտերի կատարման արդյունավետությունը բարձրացնելու և դրա միջոցով արդար դատաքննության իրավունքն ապահովելու նպատակով: Քննարկել դատական իշխանության համակարգում տեղակայված կամ անկախ հարկադիր կատարման ծառայություն ստեղծելու հարցը:

Ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի պետական միջոցների սակավությունը չմատնանշվի որպես հիմնավորում այն դատական ակտերը չկատարելու համար, որոնք պահանջում են վճարում պետական միջոցներից:

Ձևավորել վճիռների չկատարման համար պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու պրակտիկա:

Ապահովել պաշտոնատար անձանց կողմից վճիռների չկատարման դեպքում քննության արդյունավետությունը և անկախությունը:

---

<sup>60</sup> Հոդված 3(1), ՎԴՕ

## **ԳԼՈՒԽ 7. Ղատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը և պրակտիկայում առկա խնդիրները**

ՀՀ ՎՂՕ-ի 26-րդ գլուխը կարգավորում է ղատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը:

Հիշյալ վարույթի կարգավորմանը նվիրված են օրենսգրքի 151-ից 153-րդ հոդվածները: Օրենսգրքի 151-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա, իսկ 152-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը և արձանագրությանը կցվող փաստաթղթերը:

Իրականում, այս հոդվածի իրավակարգավորումը պրակտիկայում բավականին խնդիրներ է առաջացնում:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնական պարտականությունների մեջ, իսկ 223-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատավորները քննում են նաև ՎԻՎ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Ստացվում է, որ ՎԻՎ օրենսգիրքը նախատեսել է անձի համար հնարավորություն՝ դիմելու դատարան վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, իսկ ՀՀ ՎԴ-ի առարկայական ընդդատությունը հաշվի առնելով՝ այդ գործերը պետք է քննի ՀՀ ՎԴ-ը:

Իրավակիրառ պրակտիկան միատեսակ չէ: Այսպես, ՀՀ ՎԴ-ը, 25.11.2008թ.-ին քննելով թիվ ՎԴ/4338/05/08 վարչական գործը, կարճել է պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կազմակերպության ներկայացրած հայցով գործի վարույթը՝ պատճառաբանելով, որ 26-րդ գլխի տրամաբանությունից բխում է, որ դատարանի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս վարչական իրավախախտման դեպքը տեղի ունեցած լինե-

լու, անձի կողմից դա կատարելու փաստը պարզելու համար պետք է առկա լինի վարչական իրավախախտման մասին արձանագրությունը, ինչը հայցադիմումին կցելը օրենսդրի պահանջն է և համարվում է պարտադիր պայման: Մեկ այլ դեպքում 23.03.2009թ.-ին քննելով թիվ ՎԴ/6279/05/08 վարչական գործը՝ դատարանը կարճել է պաշտոնատար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կազմակերպության ներկայացրած հայցով գործի վարույթը՝ պատճառաբանելով, որ ՀՀ ՎԴՕ-ի 151-րդ հոդվածի համաձայն՝ հայցերը հարուցվում են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություններ ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների հիման վրա:

10.04.2009թ.-ին թիվ ՎԴ 4/0074/05/09 վարչական գործով ՀՀ ՎԴ-ը նմանատիպ հայցապահանջով մեկ այլ գործով հայցադիմումի ընդունումը մերժել էր՝ պատճառաբանելով, որ ենթակա չէ ՎԴ-ի քննությանը, քանի որ հայցադիմումին չի կցվել արձանագրությունը:

ՀՀ ՎԴ-ը որոշել է կազմակերպության կողմից ներկայացված բողոքը նշված որոշման դեմ, բավարարել՝ հիմնավորելով, որ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 247-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության բացակայությունը չի համարվում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանք: ՀՀ ՎԴ-ն ամրագրել է նաև, որ ՀՀ ՎԻՎ օրենսգրքով սահմանված չէ որևէ մարմին, որն իրավասու է ՎԻՎ օրենսգրքի 255-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 189.7-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման դեպքում կազմել արձանագրություն:

Իսկ 29.06.2009թ.-ին թիվ ՎԴ3/0186/05/09 վարչական գործով ՎԴ-ը բավարարել է տեղեկատվություն ապօրինի չտրամադրելու հիմքով գյուղապետին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հայցապահանջը:

Այսինքն, ներկայացված օրինակները դատական պակտիկայից վկայում են, որ խնդիրը կայանում է նախ նրանում, որ ՀՀ ՎԴՕ-ի համապատասխան հոդվածները նախատեսում են այս վարույթի գործերով դատարան դիմելու իրավասություն միայն համապատասխան արձանագրությունները կազմելու իրավասություն ունեցող մարմինների համար, հետևաբար, քաղաքացին կամ իրավաբանական անձն այդ իրավունքից չի օգտվում, բացի այդ, պարտադիր են համարում արձանագրությունը հայցին կցելը, իսկ տեղեկատվությունն ապօրինի չտրամադրելու դեպքում ՎԻՎ օրենսգիրքը ընդհանրապես չի կարգավորում, թե որ մարմինն է արձանագրությունը կազմելու, հետևաբար տեղեկատվություն ապօրինի չտրամադրելու դեպքում համապատասխան պաշտոնատար անձը մնում է անպատիժ, իսկ ՎԻՎՕ 189.7-րդ հոդվածը՝ անկատար:

Այս առումով հատկանշական են նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 10.02.2010թ.-ի ՍԴՈ-864 որոշմամբ տրված մեկնաբանությունները.

«Նման համադրումը վկայում է, որ վարչական պատասխանատվությունը՝ ընդհանրապես, և վարչական պատասխանատվության միջոց հանդիսացող վարչական տույժը՝ մասնավորապես, հետապնդում են այլ նպատակ, քան անձի խախտված իրավունքի՝ դատական կարգով վերականգնումն է: Վարչական պատասխանատվության նպատակն առավելա-

պես կրում է հանրային բնույթ, իրավախախտ անձը պատասխանատվություն է կրում հասարակության, այլ ոչ թե մասնավոր անձի առջև, վարչական պատասխանատվությունն առնչվում է ոչ այնքան մասնավոր, որքան հանրային շահերին:

Իսկ հանրային իրավահարաբերությունների ոլորտում մասնավոր շահերի պաշտպանության նպատակով սահմանված է այլ կարգ՝ հաշվի առնելով վարչադատավարական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, վարչաիրավական հարաբերությունների հետևանքով խախտված իրավունքների վերականգնման կարգի առանձնահատկությունները, խախտված իրավունքների փաստացի վերականգնելիության հնարավորությունն ու աստիճանը:

....Այսինքն՝ օրենսգրքով օրենսդիրը սահմանել է իրավակարգավորման երկու միմյանցից տարբերվող ուղղություն, որոնք վերաբերում են համապատասխանաբար՝ հանրային իրավահարաբերությունների ոլորտում անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության ինստիտուտին և անձանց՝ դատական կարգով վարչական պատասխանատվության ինստիտուտին: Իր հերթին, նշված տրամաբանությունը բխում է այն օբյեկտիվ իրողությունից, որ առաջին դեպքում իրավախախտման աղբյուրը պետությունն է, մյուս դեպքում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Այս տրամաբանությանը համապատասխան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով անձը ՎԴ-ում իրացնում է վարչական մարմնի կողմից խախտված իր իրավունքների պաշտպանությունը: Այն է՝ վիճարկման հայց (65), պարտավորեցման հայց (66), գործողության կատարման հայց (67) և ճանաչման հայց (68): Սահմանվում են նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ դրույթներ, որոնց միջոցով ապահովվում է վարչական մարմնի գործողությամբ (անգործությամբ) կամ վարչական ակտով, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին կամ Սահմանադրությանը հակասելու հետևանքով խախտված իրավունքների դատական կարգով վերականգնումը:

....Օրենսգրքի վիճարկվող 151-րդ հոդվածով, օրենսգրքի 1-ին հոդվածին և 3-րդ հոդվածի երկրորդ մասին համահունչ, որով որպես վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու իրավասու սուբյեկտ են դիտարկվում միայն վարչական մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի հարուցման հիմք են համարվում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումները:

...Ելնելով վերոշարադրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր և, հետևաբար, անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջո-



ցի իրավունքների իրացմանը, և խնդրո առարկա հարցով դատարան դիմելու իրավասությունը բացառապես վարչական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց վերապահելն իրավաչափ է ու օրենսգրքի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության շրջանակներում է»:

Արդյունքում, ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, սակայն այդ վարույթի կարգավորման հարցում առկա է օրենսդրական բաց, որը օրենսդիր մարմնի լուծման խնդիրն է:

Բացի այդ, հարկ է նշել, որ ՀՀ ազգային ժողովի օրակարգում գտնվող նախագծով, որը նախատեսվում է օրինական ուժի մեջ դնել 01.12.2010թ.-ից նախատեսվում են փոփոխություններ 151-ից 153-րդ հոդվածներում, հետևյալ բովանդակությամբ.

### **ՀՈՂՎԱԾ 151. ԴՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված անձանց հայցադիմումով:

### **ՀՈՂՎԱԾ 152. ԴՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է նաև ներառի`

- 1) վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրը և ժամանակը.
- 2) վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը.
- 3) տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների մասին արձանագրությունը.
- 4) այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար.
- 5) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

2. Իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (պաշտոնատար անձի) դիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը և արձանագրությանը կցվող փաստաթղթերը:

3. Անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, պետք է ներառի

- 1) հայցադիմումը ներկայացնելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի և ժամանակի մասին տեղեկություններ,
- 2) հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթները,
- 3) դիմողի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

### **ՀՈՂՎԱԾ 153. ՂԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ**

1. Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով վարչական իրավախախտման մասին արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած հանգամանքների ապացուցման բեռը չի կարող դրվել այն անձի վրա, որի գործողությունների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրությունը: Արձանագրությունն ինքնին ապացույց չէ:

1.1 Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որը կատարել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողություն կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

2. Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս ՎԴ-ը պարզում է, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման դեպքը, և առկա է արդյոք հայցադիմումում նշված անձի կողմից դա կատարելու փաստը, նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ իրավախախտումը կատարելու համար, ինչպես նաև նշանակում է կամ մերժում է նշանակել վարչական տույժ»:

Այսպիսով, եթե նման կարգավորում նախատեսվի, իհարկե դա որոշակիորեն դրական է, քանի որ հստակեցվում է անձի՝ վարչական կարգով պատասխանատվության ենթարկելու հայցադիմում հարուցելու հարցը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ներկայացված պրակտիկան, կրկին առկա է արձանագրությունը հայցադիմումին կցելու խնդիրը, որպիսի պարագայում կշարունակվեն այդ հիմքով հայցադիմումների մերժումները:

### **Առաջարկ**

Օրենսդրությամբ հստակեցնել պատասխանատվության ենթարկելու արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը և ընթացակարգը, քանի որ ՎԻՎՕ-ով բավարար կարգավորում տրված չէ:

Այն դեպքում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն է դիմում վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, հայցադիմումին արձանագրությունը կցելու պահանջ չպետք է ներկայացվի, քանի որ այս դեպքում, ստացվում է, որ անձը պետք է նախ դիմի արձանագրություն կազմելու լիազորություն ունեցող անձին, որպեսզի վերջինս կազմի արձանագրությունը, որը կկցվի հայցադիմումին: Առաջանում է խնդիր. համապատասխան մարմինը կարող է մերժել արձանագրության կազմումը, և անձը ավելի մեծ խնդրի առջև կկանգնի:

ՀՀ ՎԴՕ-ի 114-րդ հոդվածը, որը կարգավորում է ՎԴ-ի գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները, չի նախատեսում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դատական ակտի տեսակը: Օրենսգրքում պետք է կատարվի համապատասխան փոփոխություն:

## ԳԼՈՒԽ 8. Ինքնաբացարկի մասին որոշումների բողոքարկման պրակտիկան

Ինքնաբացարկը ՀՀ իրավահամակարգում հանդիսանում է այնպիսի ինստիտուտ, որը կոչված է արդարադատության բնագավառում երաշխավորելու օբյեկտիվ և անաչառ որոշումների կայացումը՝ ինչպես ընթացակարգային (դատավարական), այնպես էլ նյութական իրավահարաբերություններ կարգավորելիս, և կոչված է երաշխավորելու դատական իշխանության անկախությունը, արդարադատության արդյունավետությունը, անկողմնակալությունը:

ՀՀ Ղատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկի մասին որոշումը կարող է բողոքարկվել: Սակայն ՀՀ ՎԴՕ ը չի նախատեսում այդ իրավունքի իրագործման մեխանիզմը և ընթացակարգը: Օրենսգրքում նույնիսկ նշում չկա այն մասին, որ այդ որոշումը կարող է բողոքարկվել: ՀՀ ՎԴՕ-ի 125-րդ հոդվածը, որը կարգավորում է, թե ՎԴ-ը երեք դատավորի կազմով որ որոշումների դեմ բողոքներն է քննում, ինքնաբացարկը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկումը չի նախատեսում:

Ըստ նույն հոդվածի երրորդ մասի՝ ՎԴ-ի մյուս միջանկյալ ակտերը բողոքարկման ենթակա չեն:

Այսինքն, դատական օրենսգրքի համաձայն՝ այդ որոշումը կարող է բողոքարկվել, իսկ ՎԴՕ-ի համաձայն՝ ոչ:

Դիտարկված գործերը ցույց են տալիս, որ դատական կազմին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու իրավունքը բացատրվել է չորս դեպքում, իսկ 243 դեպքում՝ ոչ: Ղատարանին ներկայացվել է ինքնաբացարկ հայտնելու 5 միջնորդություն, որոնցից ոչ մեկը չի բավարարվել:

Պրակտիկայում չի ապահովվում ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումների բողոքարկման իրավունքի պրակտիկ իրագործումը:

Այս հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումն է հայտնել իր ՍԴՈ-918 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն այդ հարցը գնահատել է.

- ինքնաբացարկի, որպես սահմանադրաիրավական սկզբունքներին համապատասխան արդարադատության անկախությունը և անկողմնակալությունը, ինչպես նաև իրավունքի գերակայությունն ապահովող ինստիտուտի, օրենսդրական երաշխավորման տեսանկյունից,
- արդար և արդյունավետ դատաքննության իրավունքի, ինչպես նաև գործին մասնակցող անձանց դատավարական այլ իրավունքների երաշխավորված գործադրումը և պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից,
- ինքնաբացարկի ինստիտուտի՝ միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատված սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Ղատարանը նշել է, որ «Միջազգային փորձի և տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ այս հարցում գոյություն ունի հստակ դիրքորոշում՝ ինքնաբացարկի որոշումը պարտադիր ենթակա է բողոքարկման, սակայն դրա կար-

զի և ժամկետների որոշումն օրենսդրի հայեցողության հարցն է: Որպես կանոն, օրենսդրական կարգավորման պրակտիկայում գերապատվությունը տրվում է ոչ թե ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման անմիջական բողոքարկմանը, որը լուրջ վտանգ կարող է ներկայացնել գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի իրացման հարցում, այլ, այսպես կոչված, «հետաձգված բողոքարկմանը»՝ գործով կայացրած որոշման բողոքարկման շրջանակներում դրա քննությանը, որը նույնպես ապահովում է դատարանի իրավագործության երաշխավորման հարցում կողմերի իրավունքների իրացումը»:

ՀՀ ՍԴ-ը նաև արձանագրել է, որ դատավորի բացարկի և ինքնաբացարկի ինստիտուտների իրավակարգավորման գործում անհրաժեշտ է միասնական ու համակարգային մոտեցում և ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հարցի մեկնաբանությունը կատարել է՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջն առ այն, որ՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Նմանատիպ կարգավորում է նախատեսում նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Ընդ որում, ինքնաբացարկի որոշման բողոքարկման նման հնարավորություն (իրավական պաշտպանության արդյունավետ միջոց) ունենալն ուղղված է անձի մեկ այլ հիմնարար իրավունք հանդիսացող՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը (անկախ և անկողմնակալ դատարանի կողմից գործի քննություն), քանի որ վերջին հաշվով այդ բողոքարկումն ուղղված է դատավարության մասնակցի՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության և այդ կերպ ասած՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը և ապահովմանը:

### **Առաջարկ**

ՎԴՕ-ում ուղղակիորեն սահմանել ինքնաբացարկը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման իրավունքը և ապահովել դրա պրակտիկ իրագործումը:

## **ԳԼՈՒԽ 9. Հայցի ապահովման դեպքում հնարավոր վնասների ապահովման պրակտիկան**

ՀՀ ՎԴՕ-ի 88-րդ հոդվածի համաձայն՝ ՎԴ-ում գործերի քննության ընթացքում հայցի ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Ղատարանը, ձեռնարկելով հայցի ապահովման միջոցներ, կարող է պատասխանողի միջնորդությամբ հայցվորից պահանջել եռօրյա ժամկետում տրամադրել ապահովում՝ պատասխանողի հնարավոր վնասների հատուցման համար: Այդ պահանջը չկատարելու դեպքում հայցի ապահովման մասին որոշումը ենթակա է վերացման:

Վարչական դատարանում քննվող գործերի մեծամասնությունը վերաբերում է այն դեպքերն, երբ վիճարկվում է վարչական մարմնի ակտը, սակայն արդյունքում դա շոշափում է իրականում երրորդ անձանց իրավունքները:

### **Օրինակ՝**

Անձը վիճարկում է մեկ այլ անձի իրավունքների պետական գրանցումը, և այդ գործով որպես պատասխանող հանդես է գալիս Կադաստրի համապատասխան ստորաբաժանումը, իսկ անձը, ում իրավունքների գրանցումը վիճարկվում է, հանդես է գալիս որպես երրորդ անձ: Նման պարագայում, եթե կիրառվել է հայցի ապահովում, երրորդ անձը պրակտիկայում չի կարողանում ներկայացնել հնարավոր վնասների ապահովման միջնորդություն:

Սա բավականին տարածված պրակտիկա է, հատկապես հարկադիր աճուրդով գույքը գնելու դեպքերում: Մասնավորապես, անձը, ում բնակարանը վաճառվել է, վիճարկում է դատական ակտերի հարկադիր կատարման մարմնի որոշումները և, միաժամանակ, միջնորդում է կիրառել հայցի ապահովում՝ արգելել ՂԱՀԿ ծառայությանը գնորդին հանձնել գույքը:

Նման պարագայում գնորդը, որը դատական վեճի շրջանակներում հանդես է գալիս երրորդ անձի կարգավիճակով, չի կարող օգտվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով ընձեռված հնարավորությունից. պահանջել հնարավոր վնասների ապահովում, քանի որ ինքը չի հանդիսանում պատասխանող: Չնայած օրենսդրական կարգավորմանն առ այն, որ երրորդ անձն օգտվում է կողմի բոլոր իրավունքներից և կրում նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ այն իրավունքների և պարտականությունների, որոնք իրենց էությամբ տարածելի չեն երրորդ անձանց վրա, դատավորների կողմից 102-րդ հոդվածը տառացի է մեկնաբանվում և ներկայացված հնարավոր վնասների ապահովման միջնորդությունը մերժվում է այդ հիմնավորմամբ:

Այսպես, դիտարկված 7 գործով կիրառվել է հայցի ապահովման միջոց: Չորս գործով պահանջվել է հնարավոր վնասների ապահովում, բայց բոլորն էլ մերժվել են վերը նշված պատճառաբանությամբ:

Եթե քաղաքացիական դատավարությունում կողմերը հենց շահագրգիռ անձինք են, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի կարգավորումը տեղին է, ապա վարչական դատավարությունում այդ իրավունքը պետք է հստակ նախատեսված լիներ նաև երրորդ անձի համար՝ հաշվի առնելով վարչական դատավարության առանձնահատկությունները և այն, որ իրական շահագրգիռ անձը կարող է դատավարությունում հանդես գալ երրորդ անձի կարգավիճակով:

### **Առաջարկ**

Օրենսդրորեն նախատեսել, որ դատարանը նաև երրորդ անձի միջնորդությամբ կարող է հայցվորից պահանջել եռօրյա ժամկետում տրամադրել ապահովում՝ հնարավոր վնասների հատուցման համար:

## ՉԼՈՒՄ 10. ՀՀ ՎԴՕ-ի 83-րդ հոդվածի կիրառման պրակտիկան (հայցադիմումին պատասխան ներկայացնելը)

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը: Պատասխան չներկայացնելը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ պատասխան չներկայացնելը, այսինքն, համապատասխան դատավարական պարտականությունը չկատարելը կարող է առաջացնել համապատասխան բացասական հետևանքներ այդ պարտականությունը չկատարող կողմի համար:

Նման պարագայում դատարանի հայեցողությանն է թողնվել այն հանգամանքը, թե արդյոք պատասխան չներկայացնելը կմեկնաբանվի որպես հայցվորի կողմից վկայակոչված փաստերի ընդունում, թե՛ ոչ: Այսինքն, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանը, հաշվի առնելով գործի փաստերը, այդ փաստի գնահատականը կտա վճռում:

Դիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ հայցադիմումի պատասխան ներկայացվել է 119 դեպքում, իսկ մնացյալ գործերով՝ ոչ: Մինչդեռ, դատարանի արձագանքը եղել է տարբեր կերպ. որոշ դեպքերում, դատարանը զրավոր պատասխանի բացակայությունը մեկնաբանել է որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում, իսկ այլ դեպքերում՝ ոչ:

վի չառնելով վարչական արդարադատության, հանրային-իրավական վեճերի լուծման առանձնահատկությունները, քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգում կիրառվող՝ վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման բոլոր տարրերը, այդ թվում նաև՝ վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելիության պայմանները, տարածել է ՎԴ-ի ակտերի բողոքարկման վրա: Եթե վճռաբեկ բողոք բերելու՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերն ու բողոքի ընդունելիության պայմանները, պայմանավորված վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառնությունով, եռաստիճան համակարգում իրավաչափ են ու ողջամիտ, ինչպես դա ընդունել է սահմանադրական դատարանն իր՝ 2007թ.-ի ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ, ապա երկաստիճան համակարգի պարագայում նշված գործոնները բողոքարկման միակ՝ վճռաբեկ ատյանի մատչելիությունը և արդյունավետությունը սահմանափակում են այնքան, որ խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը՝ բացասաբար անդրադառնալով նաև վարչական արդարադատության համակարգի կենսունակ գործունեության վրա: Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բացակայության պայմաններում ՎԴ-ի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ այն նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում:

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա կատարվեցին համապատասխան օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես, ՀՀ ՎԴՕ-ի 118-րդ հոդվածը լրացվեց 118.1-118.6 հոդվածներով, որոնք կարգավորում են վճռաբեկ բողոք բերելու իրավունքը, բողոքի հիմքերը, ժամկետները, կարգը, բողոքը քննության ընդունելու պայմանները:

Ընդ որում, նախատեսված փոփոխություններն ըստ էության կրկնում էին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ բողոքարկման վարույթը կարգավորող նորմերը: Այսինքն, օրենսդիրը պարզապես աննշան տարբերությամբ նույն ընթացակարգը սահմանեց ՀՀ ՎԴՕ-ում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի առաջին մասի երրորդ կետի կարգավորման փոխարեն այն մասին, որ բողոքը վարույթ է ընդունվում, եթե ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել ծանր հետևանքներ, նախատեսվեց, որ բողոքը վարույթ ընդունելու հիմք է նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը, որը հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Այսպիսով, ՀՀ ՎԴՕ-ի 118.6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե՝

- 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ,
- 2) վերանայվող դատական ակտն առերևույթ (*prima facie*) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ,
- 3) առկա է նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծմանը, կամ,
- 4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 13.04.2010թ.-ի թիվ 873 որոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «առկա է» և «հանգեցրել է» բառակապակցությունները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) հակասող և անվավեր:

ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված նորմի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված նորմի, մասնավորապես, դրանցում համապատասխանաբար՝ «հանգեցրել է գործի սխալ լուծմանը» և «կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ» բառակապակցությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված պայմանը, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված պայմանի, որոշակի առաջընթաց է վճռաբեկ դատարանի մատչելիության ապահովման առումով: Սակայն սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս փաստը դեռևս բավարար պայման չէ նոր իրավակարգավորման արդյունավետությունը գնահատելու համար: Վերջինիս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ բողոքի ընդունելիության պայմանի բովանդակությունը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ:

Վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածում ամրագրված՝ վճռաբեկ բողոք բերելու ընդհանուր հիմքում «կարող էր ազդել գործի ելքի վրա» բառակապակցության և 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանում «հանգեցրել է գործի սխալ լուծմանը» բառակապակցության համեմատական վերլուծությունը վկայում է, որ «կարող էր» բառակապակցությունն արտահայտում է հավանականություն և կրում է դիսպոզիտիվ բնույթ, իսկ 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված՝ «հանգեցրել է» արտահայտությունը ենթադրում է փաստի հաստատում և կրում է իմպերատիվ բնույթ: Նման տարբերությունը բովանդակային առումով նշանակում է, որ եթե վճռաբեկ բողոք բերող անձն իր բողոքում պարտավոր է հիմնավորել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ իր ենթադրությունը, ապա վճռաբեկ դատարանը դիմումի ընդունելիության հարցի քննության փուլում պարտավոր է ոչ թե ստուգել դատական սխալի՝ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի ենթադրության հիմնավորված լինելու հանգամանքը, այլ հաստատել այն փաստը, որ դատական սխալը հանգեցրել է կամ չի հանգեցրել գործի սխալ լուծմանը:

ՀՀ ՎԴՕ-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով (ՀՕ-1235-Ն, ՀՀ ՊՏ 2010.10 29/55(789), ընդունվել է 29.10.2010թ.-ին, ուժի մեջ է մտել 01.12.2010թ.-ին) վարչական արդարադատության համակարգը դարձավ եռաստիճան. ստեղծվեց ՀՀ վերաքննիչ ՎԴ: Նախա-

տեսված փոփոխություններով ՎԴ-ի վճիռները ենթակա են բողոքարկման վերաքննիչ դատարան, որից հետո՝ վճռաբեկ դատարան:

Սակայն, մեր գնահատմամբ կատարված փոփոխություններում կրկին իրացված չէ արդարադատության մատչելիության ապահովման հանձնարարականը: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի տարր կազմող արդարադատության մատչելիության վերաբերյալ իր նախադեպային որոշումներում արտահայտել է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2004թ.-ի դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնե կարևոր գործերում, ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյանին, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս ատյանին»:

Հանձնարարականը նաև ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց երկրի դատարանակազմությունը և դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,
- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Վարչական դատավարության օրենսգրքի 19.1 գլուխը կարգավորում է վարույթը վերաքննիչ ՎԴ-ում: Այս գլուխը ևս հիմնականում կրկնում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վերաքննիչ վարույթը կարգավորող դրույթները: Սակայն արդարադատության մատչելիության տեսանկյունից կրկին առկա էական խնդիր : Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածը կարգավորում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը, որի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձման հիմք է հանդիսանում նաև, եթե բողոքի շրջանակում առերևույթ բացառվում է դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայության հնարավորությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Ստացվում է, որ այն դեպքում, երբ քաղաքացիական գործերով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելիս վերաքննիչ քաղաքացիական դատարանը ստուգում է բողոքի ձևի՝ օրենքին համապատասխանության հարցը, ապա վարչական գործերով վերաքննիչ բողոքում անձը պետք է նաև հիմնավորի նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտման առկայությունը: Այսինքն, այս դեպքում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելիս դատարանն իրականացնելու է նաև բողոքի ըստ էության քննություն՝ պարզելու համար, թե արդյոք առկա են իրավունքի առերևույթ էական խախտում: Կարծում են, որ սա արդարա-



դատության մատչելիության էական խոչընդոտ է հանդիսանալու, բացի այդ քաղաքացիական գործերի համեմատ ոչ արդարացված տարբերակված մոտեցում է ցուցաբերվում: Առավել ևս եթե ի նկատի ունենանք, որ վարչական դատավարության շրջանակներում խոսքը վերաբերում է հանրային իրավական հարաբերություններին, այսինքն, կոնկրետ գործով արդարադատությունն իրականում հանրությանն է վերաբերում, ոչ թե գործով կողմեր հանդիսացող անձանց:

Վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածը սահմանում է վճռաբեկ դատարանի կողմից բողոքը քննության ընդունելու հիմքերը, որոնց թվում սահմանում է. «առկա է նյութական կամ դատավարական իրավունքի նորմի առերևույթ էական խախտում»:

Այնուամենայնիվ, վճռաբեկ դատարանի պրակտիկայում դեռևս առկա են այն թերությունները, որոնք հիշատակվել են ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ երկու որոշումներում: Այդ մասին է վկայում տարբեր ժամանակահատվածներում ընդունված ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումների ուսումնասիրությունը:

Խնդիր ա. Վկայակոչվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վճռաբեկ վարույթը կարգավորող նորմերը.

Չնայած ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 13.04.2010թ.-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սահմանադրական դատարանի որոշումներից հետո էլ ՀՀ վճռաբեկ դատարանը վարչական գործերով վճռաբեկ վարույթի նկատմամբ շարունակում է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիմքերը:

ՀՀ ՎԴՕ-ի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՎԴ-ում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությանը կիրառելի են («mutatis mutandis») վարչական դատավարության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքին ու վարչական դատավարության էությանը: Չնայած ՀՀ ՎԴՕ-ի 118-րդ հոդվածը սահմանում է, որ ՎԴ-ի դատական ակտերի վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի և գործերի վարույթի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից տրված մեկնաբանության սահմաններում ակնհայտ է, որ իրենց էությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառելի չեն:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ իրավակիրառական պրակտիկայում իրացված չէ սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածում "mutatis mutandis" վերապահումը չի կարող մեկնաբանվել այնքան լայն, որ ՎԴ-ի ակտերի բողոքարկման նկատմամբ ամբողջությամբ կիրառվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը: Ավելին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը (նոր խմբագրությամբ) ընդհանրապես թույլ չի տալիս հղում կատարել ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի այն նորմերին, որոնք սահմանում են վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:

ՎԴ 3120/05/09 վարչական գործով 28.10.2009թ.-ի որոշմամբ կիրառվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ, 234-րդ հոդվածները:

ՎԴ 7499/05/08 վարչական գործով 04.11.2009թ.-ի՝ կայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ, 234-րդ հոդվածները:

ՎԴ 4083/05/09 վարչական գործով 27.01.2010թ.-ի որոշմամբ կիրառվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ, 234-րդ հոդվածները:

ՎԴ/5409/05/08 վարչական գործով 07.04.2010թ.-ի որոշմամբ կիրառվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ, 231-րդ, 233-րդ, 234-րդ հոդվածները:

ՎԴ/4592/05/09 վարչական գործով 07.06.2010թ.-ի որոշմամբ կիրառվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ, 234-րդ հոդվածները:

ՎԴ/3395/05/09 վարչական գործով 15.09.2010թ.-ի որոշմամբ կիրառվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ, 234-րդ հոդվածները:

ՎԴ 0171/05/09 վարչական գործով 13.10.2010թ.-ի՝ կայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ, 234-րդ, 226-րդ հոդվածները:

Խնդիր բ. Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելու մասին որոշումներում հղում է կատարում ստորադաս ատյանի վճիռն՝ հիմնավորելով, որ վճիռն օրինական է:

Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն ամրագրել է, որ իրավակիրառական պրակտիկան ևս ձևավորվել է օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված նորմի նման ընկալմամբ: Մասնավորապես, այդ մասին է վկայում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումներում, այդ թվում՝ դիմողի գործով կայացրած որոշման մեջ վճռաբեկ դատարանի հետևյալ ձևակերպումը. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, գնահատելով գործում առկա ապացույցները, պարզելով գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները և կիրառելով սույն գործով կիրառման ենթակա օրենքները, իրավացիորեն հայցը մերժել է»:

Սահմանադրական դատարանը գտել է, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու փաստի հաստատումն իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդե-

ցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի ենթադրության ներկայացված լինելու հանգամանքի ստուգումը, այլ ոչ թե այն փաստի հաստատումը, որ դատական սխալը հանգեցրել է կամ չի հանգեցրել գործի սխալ լուծմանը:

ՎԴ 3120/05/09 վարչական գործով 28.10.2009թ.-ի, ՎԴ 4083/05/09 վարչական գործով 27.01.2010թ.-ի, ՎԴ/5409/05/08 վարչական գործով 07.04.2010թ.-ի, ՎԴ/3395/05/09 վարչական գործով 15.09.2010թ.-ի որոշումներում ՀՀ վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ ՎԴ-ի պատճառաբանական մասում արված հետևությունները, գտել է, որ բողոքի հիմնավորումները հերքվում են ՎԴ-ի վճռում նշված պատճառաբանություններով:

ՎԴ 0171/05/09 վարչական գործով 13.10.2010թ.-ի՝ կայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման համաձայն՝ «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ղատարանի կողմից թույլ տրված դատական սխալի՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումների մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Ղատարանի վճռում նշված պատճառաբանություններով»:

Խնդիր գ. Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունելու հարցը որոշելու փուլում բողոքի ըստ էության քննություն է իրականացնում:

ՎԴ 7499/05/08 վարչական գործով 04.11.2009թ.-ի՝ կայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման համաձայն՝ «Տվյալ դեպքում բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում չի նշել և հիմնավորել, թե դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, ինչպես նաև չի նշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ ՎԴՕ-ի 118.6-րդ - հոդվածի 1-ին մասով սահմանված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմնավորումները»: Հատկանշական է, որ ներկայացված բողոքում առանձին-առանձին մտնանշվել են այն նորմերը, որոնք սխալ են կիրառվել կամ մեկնաբանվել դատարանի կողմից, և բողոքի առանձին բաժին նվիրված է բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումներին: Այս պարագայում վճռաբեկ դատարանը գտել է, որ չեն նշվել խախտումները:

ՎԴ 0171/05/09 վարչական գործով 13.10.2010թ.-ի՝ կայացված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման համաձայն՝ «Նման պայմաններում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումները՝ դատական սխալ թույլ տալու և օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու մասին, անհիմն են, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա»:

ՎԴ 3120/05/09 վարչական գործով 28.10.2009թ.-ի, ՎԴ/3395/05/09 վարչական գործով 15.09.2010թ.-ի որոշումներում ևս ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավորված չէ նյութական իրավունքի նորմերի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

**Առաջարկ**

1. Իրավակիրառ պրակտիկայում իրացնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ կապված վարչական գործերով վճռաբեկ բողոքների քննության հետ:

**ԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

<b>ԳԼՈՒԽ 1. Վարչական արդարադատության մատչելիությունը Հայաստանում</b>	
<b>Վարչական արդարադատության մատչելիությունը Հայաստանում</b>	ՎՀՎՎ մասին օրենքի «վարչական մարմին» եզրույթի իրավական սահմանման մեջ ավելացնել հետևյալ արտահայտությունը. «ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է պետական գործառույթ»:
<b>Վարչական դատարանի իրավագործությունը հանրային լիազորություններ իրականացնող մասնավոր անձանց «վարչարարության» նկատմամբ</b>	<p>1. ՎԴՕ-ի 3-րդ հոդվածում կատարել լրացում, որն անձանց թույլ կտա հանրային գործառույթներ իրականացնող ոչ պետական մարմինների կողմից իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմել ՎԴ:</p> <p>Այնուամենայնիվ, միայն այս օրենսդրական փոփոխությունը բավարար չէ: Անհրաժեշտ է, որպեսզի պետությունն իր գործառույթները մասնավոր մարմիններին պատվիրակելիս հստակ սահմանի, որ այդ մարմինները պատվիրակված (մասնավորեցված պետական) գործառույթներն իրականացնելիս գործելու են որպես հանրային (վարչական) մարմիններ: Այսինքն, այդ մարմինների և մասնավոր անձանց հանրային բնույթ ունեցող իրավահարաբերությունները կարգավորվելու են հանրային իրավունքի սկզբունքներով: Օրինակ, գազամատակարարում իրականացնող իրավաբանական անձը պետք է պարտականություն կրի կիրառելու ՎՀՎՎ մասին օրենքի 8-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը, իրականացնելու վարչական վարույթ, լսումներ և այլն: Գործառույթներ պատվիրակելիս պետությունը պետք է հստակ սահմանի, որ պետական գործառույթ իրականացնող իրավաբանական անձինք այդ գործառույթներն իրականացնելիս գործելու են բացառապես հանրային իրավունքի ռեժիմում: Իրավական ռեժիմի սահմանումը պետք է կատարվի այն իրավական ակտով, որով մասնավորեցվում կամ պատվիրակվում են որոշակի պետական գործառույթներ: Իսկ պայմանագրերի միջոցով պետական գործառույթները ժամանակավորապես մասնավոր անձանց պատվիրակելիս այդ պայմանագրում հստակ պետք է սահմանվի, թե որոնք են պետական գործառույթները, որոնք պատվիրակվում են, և այդ գործառույթների իրականացման նկատմամբ նույնպես պայմանագրով պետք է սահմանվի հանրային իրավական ռեժիմ: Այսինքն, պայմանագրով պետք է սահմանվի, որ պետական գործառույթն իրականացնելիս մասնավոր կազմակերպությունը հանդիսանում է վարչական մարմին, որն իրականացնում է վարչարարություն, որի իրավաչափության ստուգումն ընդդատյա է ՀՀ ՎԴ-ին:</p> <p>Պրակտիկայում ՀՀ Վճռաբեկ դատարանը ևս պետք է իր որոշումներով ապահովի օրենքի միատեսակ կիրառությունը՝ «պետական գործառույթ» եզրույթի իրավական բովանդակության առումով: Այդ որոշումը պետք է պարունակի որոշակի չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տարանջատել պետական ու մասնավոր գործառույթները և այդպիսով պարզել այն իրավական ռեժիմը, որը պետք է կիրառվի</p>

	<p>տվյալ մարմնի գործունեության նկատմամբ:</p> <p>2. ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանել, որ բոլոր դեպքերում, երբ պետությունն իր հանրային գործառնությունների իրականացումը պատվիրակում է մասնավոր անձանց՝ անկախ պատվիրակման ձևից (պայմանագիր, օրենսդրական ակտ և այլն), ապա շահագրգիռ անձանց իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն իրականացվում է հանրային իրավունքի նորմերի միջոցով:</p>
<p><b>Հայցադիմումը վարույթ ընդունելիս միասնական պրակտիկայի բացակայություն</b></p>	<p>Օրենքով սահմանել «սխալ» հայցատեսակ ներկայացնելու իրավական հետևանքները՝ միաժամանակ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը:</p> <p>«Սխալ» հայց ներկայացնելու դեպքում իրավական հետևանքների կիրառումը պետք է տեղի ունենա հայցը վարույթ ընդունելու փուլում:</p> <p>Վերախմբագրել ՎՂՕ-ի 90-րդ հոդվածը, որը կբացառի ի սկզբանե ՎՂ-ին ոչ ընդդատյա գործերի վարույթ ընդունելը, իսկ հետագայում դրանց կարճումը:</p> <p>Օրենքով նախատեսել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո հայցադիմումներ ներկայացնելու իրավական հետևանքը:</p> <p>Բացառել ՎՂ-ի կողմից ՎՂՕ-ով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված հայցադիմումների ընդունման մերժումը՝ ՎՂ-ին ենթակա չլինելու պատճառաբանությամբ:</p> <p>Ապահովել հայցադիմումների ընդունումը մերժելու պրակտիկայի միասնականությունը:</p> <p>ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ պետք է սահմանի այն սկզբունքները, որոնց համաձայն քաղաքացիական և վարչական վեճեր քննող դատարանները պետք է որոշեն վեճի մասնավոր կամ հանրային իրավական բնույթը:</p> <p>Ստեղծել վարչական և ընդհանուր իրավասության դատարանների կողմից վեճի բնույթի վերաբերյալ անհամաձայնության դեպքում առարկայական ընդդատության հարցի լուծման իրավական մեխանիզմ:</p> <p>Քննարկել ՀՀ իրավական համակարգում վարչական կամ հանրային իրավական պայմանագրի ինստիտուտի ներդրման հարցը, որը լայն տարածում ունի Եվրոպական բազմաթիվ երկրներում, հատկապես՝ Գերմանիայում: Նման ինստիտուտի առկայության պարագայում իրավահարաբերությունները կարող են կարգավորվել պայմանագրով, սակայն պահպանելով իրենց հանրային իրավական բնույթը: Օրինակ, լիցենզիայի հիման վրա կնքված լիցենզիոն պայմանագիրը կհամարվի հանրային իրավական պայմանագիր, քանի որ դրա առարկան հանրային իրավական է (քաղաքաշինություն, ընդերքի օգտագործում և այլն), իսկ դրանից ծագող վեճերի քննությունը կիրականացվի ՀՀ ՎՂ-ում:</p>
<p><b>ԳԼՈՒԽ 2. Հայցադիմումների տեսակներն ըստ ՀՀ ՎՂՕ-ի, օրենսդրական բացերը և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները՝ արդարադատության մատչելիության տեսանկյունից</b></p>	

Նախատեսել սխալ հայց ներկայացնելու հետևանքները: Եթե ՎԴ-ը վարույթ է ընդունել և քննել սխալ հայց, ապա ճիշտ հայցը ներկայացնելու ժամկետները պետք է համարվեն վերականգնված:

Նախատեսել առարկության ներկայացման հնարավորություն այն դեպքերում, երբ անձը տուգանքը վճարելու համար օրենքով նախատեսված ժամկետներում վճարել է այն:

Միջոցներ ձեռնարկել դատավորների և փաստաբանների՝ վարչական հայցերի վերաբերյալ գիտելիքների խորացման ուղղությամբ:

Նախատեսել բոլոր վարչական ակտերի համար բողոքարկելու հնարավորություն. ՎԴՕ-ի 65-րդ հոդվածը լրացնել հետևյալ արտահայտությամբ «...կամ զուգորդվող վարչական ակտի՝ անձի համար ոչ բարենպաստ (միջամտող) դրույթները»:

**ԳԼՈՒԽ 3. Ապացույցները վարչական դատավարությունում**

**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի պրակտիկ կիրառությունը և Վարչական ակտի իրավաչափությանը վստահելու իրավունքի պաշտպանությունը ՀՀ վարչական արդարադատությունում**

Ապացույցների տեսակները սահմանելիս դրանց շարքում նախատեսել կողմի՝ տեղեկատվության անմիջական կրողի ցուցմունքը որպես ապացույցի տեսակ:

Բացառել ներկայացուցչի բացատրությունների՝ որպես կողմի ցուցմունք ապացույցի օգտագործումը: Ապահովել յուրաքանչյուր դեպքում վարչական մարմնի ներկայացուցչի ցուցմունքի ստացման օրինականությունը (որպես վկա ներգրավումը և սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին): Վարչական մարմնի ակտերը, գործողությունները, անգործությունը վիճարկելիս անձի վրա պետք է դրվի ոչ թե իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ցանկացած հանգամանքի ապացուցման բեռ, այլ այն հանգամանքների, որոնք բարենպաստ են անձի համար: Ապահովվել պրակտիկայում դատավորների կողմից ապացուցում պահանջող փաստերի շրջանակի բովանդակային պարզումը և ապացուցման բեռի ճիշտ բաշխումը:

Ապահովել դատավորների կողմից իրենց պարտականությունների կատարումը, մասնավորապես վիճելի իրավահարաբերությունների բնույթի և կիրառման ենթակա օրենսդրության պարզումը: ՎՀՎԿ մասին օրենքի 48-րդ հոդվածի առնչությամբ քննարկել հետևյալ լուծումները կամ այլ լուծումներ՝ նշված սկզբունքների պահպանմամբ. Այն դեպքերում, երբ անձը ՎՀՎԿ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի համաձայն ստացել է վարչական ակտ և կարող է ինքնուրույն, առանց այլ վարչական մարմնի ներդրման ձեռնամուխ լինել իրավունքի իրականացմանը, ապա իրավունքի իրականացմանը ձեռնամուխ լինելուց առնվազն 15 օր առաջ այդ մասին տեղեկացնում է վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնին: Այդ նպատակով անհրաժեշտ է ՎՀՎԿ մասին օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետը լրացնել հետևյալ արտահայտությամբ. «դրա մասին առնվազն 15 օր առաջ ծանուցելով համապատասխան վարչական մարմնի»: Նման ընթացակարգ նախատեսելու դեպքում պետք է կարգավորել նաև, թե որն է 15 օր առաջ վարչական մարմնին չծանուցելու հետևանքը, քաղաքացու համար: Այն դեպքերում, երբ անձը չի կարող ինքուրույն, առանց համապատասխան վարչական մարմնի ներդրման, ձեռնամուխ լինել ՎՀՎԿ մասին օրենքի 48-րդ հոդվածով տրված վարչական ակտից ծագող իրավունքի իրականացմանը, և հայցադիմում է ներկայացնում ՎԴ ընդդեմ որևէ վարչական մարմնի՝ նպատակ ունենալով ապահովելու այդ իրավունքի իրականացումը, ապա ՎԴ-ը, պարզելով, որ անձի վկայակոչած իրավունքը ծագել է ՎՀՎԿ

	<p>մասին օրենքի 48-րդ հոդվածի ուժով՝ այդ մասին ծանուցում է վարչական ակտն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմին: Ծանուցումից հետո 15-օրյա ժամկետում ծանուցված վարչական մարմինն իրավունք ունի ՎՂ-ի 3-րդ հոդվածի 2 կետի «2» ենթակետի հիման վրա դիմելու ՎՂ: Վարչական մարմնի կողմից նշված ժամկետում ՎՂ չդիմելու դեպքում՝ ՎՂ-ը քննում և ըստ էության լուծում է վարչական գործը, որից հետո նշված վարչական ակտը դառնում է անվիճարկելի՝ այն ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի համար: ՎՂ-ը իրավունք չունի առանց համապատասխան վարչական մարմնի հայցադիմումի քննել հայցվորի՝ ՎՀՎՎ մասին օրենքի 48-րդ հոդվածի հիման վրա տրված վարչական ակտի իրավաչափություն:</p>
<p><b>ԳԼՈՒԽ 4. Անվճար իրավաբանական օգնությունը վարչական գործերով</b></p>	
<p>Բարելավել անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ ՀՀ օրենսդրության դրույթները՝ վարչական արդարադատությունն առավել մատչելի դարձնելու նպատակով: Առաջարկվում է ընդունել հատուկ օրենք՝ անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ, որը կնախատեսի վարչական գործերով անվճարունակ անձանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հնարավորություն և անվճարունակության գնահատման հստակ և օբյեկտիվ չափանիշներ:</p>	
<p><b>ԳԼՈՒԽ 5. Վարչական գործի բանավոր և հրապարակային քննության իրավունքը ՀՀ - վարչական դատավարությունում</b></p>	
<p><b>Եվրոպական կոնվենցիայի պահանջները և ՄԻԵԴ դիրքորոշումը</b></p>	<p>Փոփոխել ՎՂ-ի 108-րդ հոդվածը: Նշված դրույթներում պետք է նախատեսել հետևյալ սկզբունքները. Այն դեպքերում, երբ վարչական գործի քննության առարկան վերաբերում է խիստ տեխնիկական կամ զուտ իրավական խնդրի, և եթե հայցվորին լսելը չի կարող նպաստել գործի հանգամանքների պարզաբանմանը, ապա ՎՂ-ը կարող է որոշում կայացնել արագացված դատաքննություն կիրառելու վերաբերյալ: Դատարանի որոշումը պետք է լինի հիմնավորված՝ գործի փաստական հանգամանքներով:</p>
<p><b>Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը</b></p>	<p>ՎՂ-ի 153-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով, որը ՎՂ-ին կարգելի վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով իրականացնել գրավոր քննություն՝ վարչական մարմնի հայցադիմումի ակնհայտ հիմնավոր լինելու պատճառաբանությամբ, եթե առկա չէ պատասխանողի կամավոր համաձայնությունը:</p>
<p><b>ՎՂ-ի որոշման պատճառաբանվածությունը և դրա բողոքարկումը</b></p>	<p>Լրացնել ՎՂ-ի 125-րդ հոդվածի առաջին մասը 11-րդ կետով, որով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին կդասվի նաև ՎՂ-ի կողմից՝ ՎՂ-ի 108-րդ - հոդվածով նախատեսված հիմքերով գրավոր քննություն անցկացնելու վերաբերյալ կայացրած դատական ակտը:</p>
<p><b>Վարչական գործերի քննության հրապարակայնության այլ խնդիրները</b></p>	<p>Ապահովել ՎՂ-ի բոլոր վճիռների հրապարակումը դռնբաց դատական նիստում: Հրապարակայնության սկզբունքի ցանկացած սահմանափակման վերաբերյալ պետք է լինի դատարանի որոշում՝ հիմնված յուրաքանչյուր անհատական գործի հանգամանքների ուսումնասիրության և գնահատականի վրա: Այն պետք է լինի պատճառաբանված և ենթակա լինի բողոքարկման՝ ՎՂ-ի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար նախատեսված կարգով: ՎՂ-ում կատարել լրացում, որը կպարունակի ՎՂ-ի դռնբաց նիստերի ձայնագրման խնդրի իրավական կարգավորումը, որը պետք է հիմնված լինի հրապարակայնության սկզբունքի լիարժեք հարգման և այն կանխադրույթի վրա, որ</p>

	<p>ձայնագրառումը տեղեկությունների նյութականացման ձև է: Լրացումը պետք է հստակ սահմանի, որ դռնբաց դատական նիստի ընթացքում ձայնագրման հարցի կարգավորման պատասխանատուն նիստը նախագահող դատավորն է, այլ ոչ թե դատական կարգադրիչը:</p>
<p><b>ԳԼՈՒԽ 6. ՎԴ-ի դատական ակտերի հարկադիր կատարումը</b></p>	
<p><b>Հարկադիր կատարողի մասնագիտության ազատականացումը</b></p>	<p>Բարեփոխել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կազմակերպման ձևը՝ դատական ակտերի կատարման արդյունավետությունը բարձրացնելու և դրա միջոցով արդար դատաքննության իրավունքն ապահովելու նպատակով: Քննարկել դատական իշխանության համակարգում տեղակայված կամ անկախ հարկադիր կատարման ծառայություն ստեղծելու հարցը:</p> <p>Ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի պետական միջոցների սակավությունը չմատնանշվի որպես հիմնավորում այն դատական ակտերը չկատարելու համար, որոնք պահանջում են վճարում պետական միջոցներից:</p> <p>Ձևավորել վճիռների չկատարման համար պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու պրակտիկա:</p> <p>Ապահովել պաշտոնատար անձանց կողմից վճիռների չկատարման դեպքում քննության արդյունավետությունը և անկախությունը:</p>
<p><b>ԳԼՈՒԽ 7. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը և պրակտիկայում առկա խնդիրները</b></p>	
	<p>Օրենսդրությամբ հստակեցնել պատասխանատվության ենթարկելու արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը և ընթացակարգը, քանի որ ՎԴՕ-ով բավարար կարգավորում տրված չէ:</p> <p>Այն դեպքում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն է դիմում վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, հայցադիմումին արձանագրությունը կցելու պահանջ չպետք է ներկայացվի, քանի որ այս դեպքում, ստացվում է, որ անձը պետք է նախ դիմի արձանագրություն կազմելու լիազորություն ունեցող անձին, որպեսզի վերջինս կազմի արձանագրությունը, որը կկցվի հայցադիմումին: Առաջանում է խնդիր. համապատասխան մարմինը կարող է մերժել արձանագրության կազմումը, և անձը ավելի մեծ խնդրի առջև կկանգնի:</p> <p>ՀՀ ՎԴՕ-ի 114-րդ հոդվածը, որը կարգավորում է ՎԴ-ի գործն ըստ էության լուծող դատական ակտերի տեսակները, չի նախատեսում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դատական ակտի տեսակը: Օրենսգրքում պետք է կատարվի համապատասխան փոփոխություն:</p>
<p><b>ԳԼՈՒԽ 8. Ինքնաբացարկի մասին որոշումների բողոքարկման պրակտիկան</b></p>	
<p>ՎԴՕ-ում ուղղակիորեն սահմանել ինքնաբացարկը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման իրավունքը և ապահովել դրա պրակտիկ իրագործումը:</p>	
<p><b>ԳԼՈՒԽ 9. Հայցի ապահովման դեպքում հնարավոր վնասների ապահովման պրակտիկան</b></p>	
<p>Օրենսդրորեն նախատեսել, որ դատարանը նաև երրորդ անձի միջնորդությամբ կարող է հայցվորից պահանջել եռօրյա ժամկետում տրամադրել ապահովում՝ հնարավոր վնասների հատուցման համար:</p>	



<b>ԳԼՈՒԽ 10. ՀՀ ՎԴՕ-ի 83-րդ հոդվածի կիրառման պրակտիկան (հայցադիմումին պատասխան ներկայացնելը)</b>
Միասնականացնել գրավոր պատասխան չներկայացնելու դեպքում կիրառվող իրավական հետևանքները և դրանց կիրառման չափանիշները: Սահմանել դատարանի հայեցողական լիազորության իրավաչափ իրականացումն ապահովող իրավական երաշխիքներ:
<b>ԳԼՈՒԽ 11. Վարչական դատավարությունում գործի վարույթի կասեցումը</b>
Օրենսդրորեն նախատեսել է գործի վարույթի կասեցումը մերժելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու հնարավորություն:
<b>ԳԼՈՒԽ 12. Իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը ՀՀ վարչական արդարադատության բնագավառում</b>
Օրենսդրորեն ամրագրել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների՝ հայց ներկայացնելու իրավունքը:
<b>ԳԼՈՒԽ 13. Վարչական դատարանի կողմից գործերի քննության արդյունավետությունը</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Ապահովել ՎԴ-ում գործերի արագ և արդյունավետ վարումը և քննությունը՝ մեծացնելով ՎԴ-ի դատավորների թիվը:</li> <li>2. Սահմանել գործերի քննության առավելագույն դատավարական ժամկետներ: Ժամկետի խախտումը պետք է հանդիսանա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:</li> <li>3. Ձևավորել դատական նիստերի օրերի նշանակման միասնական չափանիշներ: Մասնավորապես, նիստերը պետք է նշանակվեն ըստ հայցերի մուտքագրման առաջնայնության: Առավել վաղ մուտքագրված գործերը պետք է ունենան առաջնայնություն առավել ուշ մուտքագրված գործերի համեմատ և այլն:</li> </ol>
<b>ԳԼՈՒԽ 14. Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթը</b>
Նորմատիվ ակտերի վիճարկման վարույթով նախատեսել ժամկետի հաշվարկը խախտման պահից՝ խախտման պահի համարելով անձի նկատմամբ այդ նորմի անմիջական կիրառումը, իսկ եթե անձը որոշել է վիճարկել այն վարչական ակտը, որը կայացվել է վիճարկվող նորմատիվ ակտի հիման վրա, որպես այլընտրանք նախատեսել ժամկետի հաշվարկը վերջնական դատական ակտից հետո:
<b>Գլուխ 15. Պատասխանատվությունը վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար</b>
Ապահովել դատարանի կողմից վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ նորմերի կիրառումը և օրենքի պահանջներին համապատասխան դատական պրակտիկայի ձևավորումը:
<b>Գլուխ 16. Վարույթը վճռաբեկ դատարանում</b>
Իրավակիրառ պրակտիկայում իրացնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ կապված վարչական գործերով վճռաբեկ բողոքների քննության հետ:

## **SUMMARY OF THE REPORT**

### ***(RESULTS OF THE ADMINISTRATIVE COURT MONITORING)***

From July 2009 to December 2010 with the assistance of the Open Society Foundations-Armenia “Protection of Rights without Borders” NGO implemented a monitoring project with the goal to study newly adopted administrative legislation and to conduct comprehensive analysis of the court practices.

The court monitoring project was implemented in three stages: a preparatory stage, for drafting of monitoring instrument, questionnaires of interviews, program materials and guidelines, selection of monitors, and training; an implementation phase, including securing access to court and the period of monitoring; a final stage for finalization and publication of the monitoring report. A distinct component of the project was the analysis of the administrative legislation in force with the view of identifying the inconsistencies and contradictions with international standards and best practices, as well as improving the legal framework for administrative justice.

Selected monitors received training on the methodology, scope of the project, main principles of monitoring, as well as administrative law and administrative procedure law, as well as international standards on fair trial. Special attention was paid to the Code of Ethics, which was explained to the monitors in details. Afterwards, all monitors signed the Code of Ethics of the monitors and undertook to strictly abide by it.

The Administrative Court, the Court of Cassation and the Judicial Department were officially notified of the commencement of the Project and its objectives.

Between 1 September 2009 and 30 September 2010, 353 administrative cases, held in 807 hearings, were monitored in the Administrative Court of Yerevan. 351 of these cases were considered in ordinary court proceedings, while 2 of them - in expeditious proceedings. 213 of the monitored cases were finalized cases and served as a primary basis for the analysis and the conclusions. In the majority of monitored cases (133 cases), the State Revenue Committee adjunct to the Government was involved as a party of the case, among 61 of them the Committee had participated as a respondent, in 72 cases as a plaintiff.

Alongside with monitoring, documents of case files were collected from the parties and the court; interviews were conducted with the participants of the proceedings. In this sense, results of the monitoring address wider scope of administrative justice system and contain information on access to a court, issues pertaining to compulsory enforcement of judicial acts, as well as case examination by the Court of Cassation.

The results of the monitoring reveal shortcomings in law and adjudication practices of administrative cases. The report includes a number of recommendations to assist the Armenian authorities advancing the administrative legislation and administration of justice in line with international and national standards. However, the Report also emphasizes the relevance of the functioning of the Administrative Court, which ensures high quality

justice. High professionalism and in-depth knowledge of the judges of the Administrative Court ensure efficient and adequate case examination, greatly enhancing the public confidence and trust toward the judiciary.

Institutional aspect of the effectiveness of justice, namely the independence of the judges, remains one of the key areas of the reform within the judiciary and is not separately addressed in the Report.

The report analyses the following issues of concerns in the chapters related to the i) accessibility of administrative justice (chapter 1), ii) the types of claims under the Administrative Procedure Code, shortcomings in law and implementation practices (chapter 2), iii) evidence in administrative proceedings (chapter 3), iv) free legal aid in administrative cases (chapter 4), v) the right to an oral and public hearing (chapter 5), vi) compulsory enforcement of the administrative court decisions (chapter 6), vii) the practice of institution of administrative proceedings on administrative liability by the court (chapter 7), viii) the practice of appealing the court decisions on recusal (chapter 8), ix) the practice of provision of security for damages when injunction is applied (chapter 9), x) the practice of application of Article 83 of the Administrative Procedure Code (observations in reply to the claim) (chapter 10), xi) the practice of suspension of administrative procedure, (chapter 11), xii) the efficiency of the mechanisms for collective protection of rights (chapter 12), xiii) the effectiveness of administration of justice by the Administrative Court (chapter 13), xiv) the proceedings on challenging normative acts (chapter 14), xv) liability for the damages inflicted following administrative procedures (chapter 15) and xvi) the proceedings in the Court of Cassation in administrative matters (chapter 16).

The study gives rise to concerns on the right to access to administrative justice. This issue is assessed in light of two problems: first, the relevance of legal definition of the term “administrative body” on effective access and second, the influence of the norms concerning the jurisdiction of the court on accessibility of administrative justice, paying due regard to the existing instruments and mechanisms for differentiation between cases originating from public relations and cases originating from private relations. In Armenian administrative law, the principles and proceedings pertaining to public law abide state bodies, as pursuant to the national legislation administrative bodies are the republican and territorial administration bodies of the executive, as well as local self-governance bodies. According to Article 3 of Administrative Procedure Code any individual or legal entity may apply to the Administrative Court, if they consider that their rights have been violated by the administrative acts, actions or inaction of state bodies or local self-governance bodies or their officials. Therefore, the administrative court lacks jurisdiction over the cases against private bodies, which effectively exercise public functions, delegated them by the state. Such regulation highly impedes the accessibility of administrative justice and the effectiveness of existing legal remedies. At this stage of development, when the public functions of the state are being delegated to private persons, such regulation contains serious risks, as the private entities; exercising delegated public functions and influencing public subjective rights of private persons, are not bound by the principles and procedures of public law. It was recommended to include in the definition of

an administrative body “any natural or legal entity, which exercises public function delegated by the State”. On the other hand, any person shall have the right to bring an action before the Administrative Court, seeking protection of their rights infringed by non-state bodies, exercising public functions. Armenian legislation must contain a requirement that the protection of rights of concerned persons is done through the norms of public law, if the state has delegated its powers to private subjects irrespective of the form of delegation (public contract, legislative act, etc.).

With the establishment of the Administrative Court, the jurisdiction of courts was reconsidered. The Administrative Court was recognized as a judicial instance vested with the power to deal with public legal disputes. Nonetheless, the monitoring results suggest that in practice the term “disputes originating from public relations” does not have uniform interpretation and application. Many instances were observed when the differentiation between civil and administrative relations gave rise to serious difficulties.

The Administrative Court has consistently rejected admissibility of the claim with the reason that the dispute was not subject to the jurisdiction of the administrative court, while the Court of General Jurisdiction refused the consideration of the same claim with the reason that it falls within the jurisdiction and competency of the Administrative Court. Cases were evidenced, where the decisions of both the Administrative Court and the Court of General Jurisdiction were appealed before the Court of Cassation, which returned the appeal without declaring any violation. In practice, no means were offered by the judiciary to resolve the disputes over jurisdiction between the courts; and persons seeking administrative justice were constantly denied of the right to a court.

On the other hand, cases were monitored where identical claims of different persons were admitted and considered by the Administrative Court and the Court of General Jurisdiction. It was recommended to place in practice comprehensible criteria based on which the courts should determine the private or public nature of the dispute. A mechanism must be established to settle on the jurisdiction in case of disagreement between the administrative court and the courts of general jurisdiction. It would be advisable to consider introduction of an institute of administrative or public contract.

Other problems pertaining to determination of disputes arising from public relations also exist in law implementation practices.

The Administrative Court consistently denies the admissibility of the claims brought in breach of established time limits, with the reason that the claim does not fall within the jurisdiction of the Administrative Court.

According to Article 79 of the Administrative Procedure Code, the Court denies the admissibility of the claim, if the claim does not fall within the jurisdiction of the administrative court.

Articles 65-68 of the Administrative Procedure Code determine the types of administrative claims, whereas Article 71 of the same Code fixes the time-limits for each type of claim to be brought to the court.

The law does not define the legal consequences of non-compliance with the established time limits. Nonetheless, monitoring results reveal that in

practice the claims brought in violation of time limits are denied with reference to Article 79 of the Administrative Procedure Code, with reasoning that the claim does not fall within the jurisdiction of the Administrative Court. Late submission of the claim cannot have any relevance for the interpretation of the term “disputes arising from public relations”. On the contrary, in case of gaps in law and lack of legal regulation, the enigma must be solved in favor of the appellant.

RA legislation determines 4 types of administrative actions: action for the invalidation or declaration of an administrative decree null and void, action for the issuance of an administrative act, action for the performance of a certain action, action for recognition. The delimitation between these claims is not clear-cut and creates problems in practice, restricting unhindered access to justice. In the absence of effective instruments of delimitation and in-depth knowledge of these claims, the courts often refuse to rule on admissibility, claiming that the person has submitted an “incorrect” action. Although the law does not define the consequences of vindicating with “incorrect” action, the judicial review over the actions and decisions of public authorities is unjustifiably restricted in detriment to individual rights.

On the other hand, Article 65 of the Administrative Procedure Code prescribes the possibility to take an action for invalidation of an interfering administrative act. Whereas, three types of administrative acts are specified under Article 53, Part 2 of the RA Law “On Administrative Acts and Administrative Procedures”, those are:

- a) Favorable administrative act is the administrative act through which administrative bodies grant rights to persons or create any other condition improving legal or actual status of those bodies;
- b) Interfering administrative act is the administrative act through which administrative bodies refuse, interfere, restrict exercising of the persons’ rights, put any liability on them or deteriorate their legal or actual status by any other ways;
- c) Associated administrative act is the administrative act, which contains provisions determined by the favorable as well as interfering administrative acts for a person.

That is, if the person’s illegal construction has been legalized by the decision of the community manager, however inappropriate sizes has been mentioned or the person does not agree with them, he may not dispute it, since the challenged administrative act shall be considered as favorable to the person. The same applies to the associated administrative act. Besides, in practice it is sometimes difficult to determine type of an act until it is adopted.

In case of the action for the issuance of an administrative act or performance of a certain action, legislator again provides that the claim may refer to favorable administrative act. This also causes problems in practice. If a person has applied to court with a performance action and in the course of consideration of the case it is found out from examination of evidence that in fact the act subject to adoption is an associated administrative act, the court may refuse the claim with substantiation hereinabove. Whereas, in the circumstance of restricted interpretation of the types of claims the person’s right to access to a court is violated. For the purpose of resolution of this

issue a proposal has been submitted on provision of a possibility for appealing all administrative acts. Article 65 of the Administrative Procedure Code to be supplemented as follows: "...or non-favorable/interfering provisions of an associated administrative act".

The report states that Armenian law would also benefit from a clearer distinction between administrative acts. Therefore, the law should define legal consequences of presenting an incorrect claim, while the judges should refrain from ruling on inadmissibility on grounds not defined by law. The results of monitoring indicate that in several cases the Administrative Court considered the case in merits during the stage of admissibility, which is impermissible.

Another negative practice observed was discontinuation of the proceedings in case of the persisting ground for inadmissibility of the action. Instead of rejecting the claim the court examines the case for several months and then closes the case with the reason that the claim does not fall within the jurisdiction of the administrative court. Although the wording of Article 90 of the Administrative Procedure Code creates such possibility, it must apply to cases where during the examination of the case the adjustment of the subject matter of the claim leads to alteration of the jurisdiction. In other instances, when the claim initially did not fall within the jurisdiction of the court, it is unclear why the court declares it admissible. Such practice considerably affects the quality of justice and leads to unjustified delays and workload of the court.

